

تاریخ و فرهنگ

ارمنیان کمره

پژوهش

ادیک باغدادساریان (ا. گرماتیک)

تهران ۱۳۸۰

ISBN 964-06-0743-6

شابک ۹۶۴-۰۶-۰۷۴۳-۶

**Իրանի Բյանարա
Գավառի Հայկական
Գաղթօջախի
Պատմություն**

Աշխատասիրեց՝
Էդ. Բաղդասարյան
(Էդ. Գերմանիկ)

ԹԵՀՐԱՆ 2002

ISBN 964-06-0743-6

شابک ۹۶۴-۰۶-۰۷۴۳-۶

Իրանի Բյանարա Գավառի Հայկական Գաղթօջախի Պատմություն

Աշխատասիրեց՝
Էդ. Բաղդասարյան
(Էդ. Գերմանիկ)

ԹԵՀՐԱՆ 2002

HISTORY AND CULTURE OF THE ARMENIANS OF CAMARA IN IRAN

(In Armenian)

BY

EDIC BAGHDASARIAN
(ED. GERMANIC)
germanic@armenia.com

Printed in Tehran-Iran 2002

تاریخ و فرهنگ ارمنیان کمره

پژوهش و نگارش: ادیک باغداساریان (ا. گرمانیک)

ناشر: مولف چاپ: احسان

چاپ نخست تهران ۱۳۸۰

شمارگان ۱۰۰۰

۱۰۰۰ تومان

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գաղութահայության պատմությունը հայ ժողովրդի պատմության անբաժանելի մասն է: Անհմարին է հայ ժողովրդի ամբողջական պատմությունը շարադրել առանց ուսումնասիրելու տնտեսական, քաղաքական և մշակութային այն արժեքները, որ ստեղծվել են հայկական գաղութներում: Այդ առումով ուրույն նշանակություն է ստանում Իրանի հայկական գաղութի պատմության ուսումնասիրությունը: Իրանահայ իրականության մեջ յուրահատուկ կարեւորություն է նշանակություն են ունեցել բազմաթիվ գաղթօջախներ այդ թվում և Ջյամարա գավառի հայկական գաղթօջախը:

Հարկ է ծանոթացնել, որ արդեն վերջին երկու տասնամյակների ընթացքում տողերիս հեղինակը ձեռնամուխ է եղել ուսումնասիրելու և հավաքելու զանազան աղբյուրներ և գրականության, և ի մի բերելու կատարված բոլոր աշխատանքները իրանահայ պատմության տարբեր բնագավառների կապակցությամբ:

Մինչ այս վերոհիշյալ ուսումնասիրությունների հիման վրա շարադրել ենք «Թեհրանահայ գաղութի պատմություն» գիտական աշխատությունը որի ամփոփումը հրատարակվել է Թեհրանի «Արաբս» ամսագրի փետրվար-մարտ 1993-1994 հունվարի համարներում «Ակնարկ իրանահայության պատմության» (Այազա) ամսագիր, համար 1, 1995, պարսկերենով նույն ամսագրի 1998-1999թթ. համարներ) և զանազան այլ հոդվածներ որոնք նվիրվել են հայկական մշակույթին, որոնցում անդրադարձել ենք նաև իրանահայությանը: Մեր կողմից փորձ է արվում կատարելու Ջյամարայի հայության պատմության ամբողջական ուսումնասիրությունը:

Այսպիսով, իրանահայության պատմության լիակատար ուսումնասիրության և ամբողջական պատկերացում ստանալու համար, հարկավոր է ունենալ հստակ պատկերացում թե՛ քաղաքաբնակ և թե՛ գավառաբնակ հայ բնակչության բազմակողմանի պատմության մասին:

Մինչ օրս կատարվել է զգալի աշխատանք իրանահայության պատմության ուսումնասիրության կապակցությամբ, քանի որ իրանահայ գաղթավայրը ավելի քան երկու և կես հազարամյա պատմություն ունի և գործուն դեր է խաղացել Իրանի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում:

Սկսած 12-րդ դարից մեզ մնացած տվյալներից հիմնական նյութերը կարելի է քաղել գլխավորապես հայկական ձեռագիր հիշատակարաններից, հիշատակա-գրություններից և նամակներից:

Իրանահայ գաղթօջախների մասին բոլոր են հիշատակներ հայ պատմիչներ և ժամանակագիրներ Մաքետոս Ուտայեցին, Արիստակես Լաստիվերտցին, Կիրակոս Գանձակեցին, Թովմա Մեծփեցին և ուրիշներ: Մակայն նշված հեղինակների տեղեկությունները ավելի վերաբերում են հայ բնակչության քան հայ գաղթօջախներին և նրանց ներքին կյանքին: Եզակի արժեքավոր աշխատություն է Առաքել Դագրիժեցու «Պատմությունը»:

Իրանահայ գաղթավայրի մասին արժեքավոր տեղեկություններ ենք գտնում Եվրոպացի ճանապարհորդների կողմից գրված ուղեգրությունների մեջ:

Մեկ այլ խոշոր աշխատության հեղինակ է Խաչատուր Ջուլայեցին, որի «Պատմություն Պարսից» գիրքը արժեքավոր նյութեր է պարունակում հայ գաղթավայրերի մասին:

Իրանահայ գաղութի մասին էն գրել Աբրահամ Կրետացին¹, Հակոբ

Շամախեցին² և ուրիշներ:

Մինչև այժմ չկա, սակայն, գիտական որեւէ մենագրություն, որը նվիրված լինի ինչպես ընդհանրապես իրանահայերին, այնպես էլ Քյամարայի հայության ամբողջական պատմությունը այդ կապակցությամբ: Քյամարայի մասին կան ակնարկներ եւ մեջբերումներ զանազան հոդվածներում եւ աշխատություններում սակայն, դժբախտաբար չի հրատարակվել առանձին ուսումնասիրություն:

Վերջին տարիներում Թեհրանում լույս է տեսել Քյամարային նվիրված մի մենագրություն³ պարսկերեն լեզվով, որի առաջին հատորում հեղինակը անդրադարձել է նաեւ Քյամարայի երբեմնի հայաբնակ գյուղերին (էջ 270-71) սույլ տեղեկություններով եւ մի քանի նկարներով ու հին նամակներով, սողորիս հեղինակի օժանդակությամբ:

Իրանահայ գաղութի պատմության տարբեր դրվագների ուսումնասիրությանը կարեւորություն են տվել եւ աշխատանքներ կատարել ինչպես Հայաստանի, այնպես էլ Իրանի հայ եւ պարսիկ հետազոտողները: Իրանի հանրաժանոք եւ բազմաշխատ գիտնական

Էսմայիլ Ռաիմի գրչին է պատկանում «Հայ իրանցիներ»⁴ աշխատությունը, որը ամփոփ լինելով՝ ունի բազմաթիվ թերություններ:

Մյուս պարսիկ գիտնականը Նասրոլլա Ֆազաֆին է, որն աշխատասիրել է «Շահ Աբբաս Ա-ի կյանքը»⁵ արժեքավոր հետազոտությունը, սակայն դժբախտաբար սա էլ կողմնակիորեն է առնչվում իրանահայերի կյանքին եւ ընդգրկում է խիստ սղու պատմական ժամանակաշրջան:

Իրանահայության պատմության շուրջ աշխատել են նաեւ Հայություն Տեր Հովհաննիսյանը⁶, Հ. Առաքելյանը⁷, Ա. Ալպոյաճյանը⁸,

¹ Ա. Կրետացի, «Պատմություն անցիցն յուրոց եւ Նաղըր շահին պարսից», Կալկաթա, 1769թ. եւ Վաղարշապատ, 1870թ.

² Հ. Շամախեցի «Նաղիր շահի արշավանքները» Երեւան 1940թ.

³ مرتضیٰ فرهادی، نام کمره، جلد اول، جغرافیا و جغرافیای تاریخی کمره (شهرستان خمین) جلد دوم، چند برش در فرهنگ کشاورزی و دامداری کمره، تهران، انتشارات امیر کبیر، ۱۳۶۹

⁴ ایرانیان ارمنی، اسماعیل رابین تهران، ۱۳۵۶

⁵ زندگانی شاه عباس اول، نصراله فلسفی، جلدهای ۱-۶، تهران، چاپ چهارم

⁶ Հ. Տեր Հովհաննիսյանց, Պատմություն Նոր Ջուղայի, Հ. 1,2, Նոր Ջուղա 1880, 1881.

⁷ Հ. Առաքելյան, Պարսկաստանի հայերը, Վիեննա, 1911.

Ա.Գ. Աբրահամյանը⁹, Ա. Սարյանը¹⁰, Ս. Գասպարյանը¹¹, Հ. Մարտիրոսյանը¹², պարսիկ գրող՝ Ա. Սալեհին¹³, Հ. Էլմարը¹⁴, Ն. Գորոյանցը¹⁵, Ջ. Հանանյանը¹⁶, Արամ Երեմյանը իր բազմաթիվ աշխատություններով, Եր. Մովսիսյանը¹⁷, Աբր. Հովասափյանը¹⁸, Ավ. Եղգարյանը¹⁹, Պ. Պատրոսյանը²⁰, Ա. Բեգիջանյանը²¹, Հ.

⁸ Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, Հ.1 եւ 2. Կահիրե, 1941, 1955.

⁹ Ա.Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ.1 եւ 2 Երեւան 1964, 1967.

¹⁰ Ա. Սարյան, Պատմություն Չարմահալ գավառի, Թեհրան, 1980:

¹¹ Ս.Ե. Գասպարյան, Միյուրքահայ գաղթօջառները այսօր, Երեւան, 1962:

¹² Հ. Մարտիրոսեան, Իրանահայ գաղութի պատմություն, «Մերձավոր եւ միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, հ.8, Երեւան 1975.

¹³ هم میهنان نقش آفرین مسیحی، شرح حال ۴ نفر از مسیحیان ایرانی، تهران ۱۳۴۷

¹⁴ Հ.Էլմար, Համառոտ ակնարկ Թեհրանի հայ համայնքի մոտիկ անցյալի մասին, «ԲաՖՖի տարեգիրք» Ա տարի, Թեհրան 1969, 1968, Բ տարի, 1970, Գ տարի 1971 (1984)

¹⁵ Ն. Գորոյանցը, Պարսկաստանի հայերը, Թեհրան 1968

¹⁶ Ջ. Հանանյան, «Միր Դավիթ Մելիք Շահնազարյան», «ԲաՖՖի տարեգիրք» 1969: Նույնը՝ Թեհրանի առաջին հայկական տպարան եւ իրանահայ անդրանիկ պարբերականը, նույնը 1970:

¹⁷ Ե. Մովսիսյան, Նյութեր Թեհրանահայ պատմության համար, «ԲաՖՖի տարեգիրք» 1970

¹⁸ Ա. Հովասափյան, Հայաբնակ գյուղերը Ալիգուդարգ գավառում, Թեհրան, 1975:

¹⁹ Ա. Եղգարյան, Իրանի Չարմահալ գավառը, Թեհրան 1969:

²⁰ Պ. Պետրոսյան, Նոր Ջուղայի նախկին բնակիչների կյանքը, Ն. Ջուղա, 1974

²¹ Ա. Բեգիջանյան, Բագիկ, Նոր Ջուղա, 1979:

Պահլեւանյանը²², Վ. Անդրեասյանը²³, Բ. Չուգասյանը²⁴, Լ. Գ.

Մինասյանը (բազմաթիվ գրքեր), Ե. Ֆրանգյանը²⁵, Բաբգեն եւ Սեդա Բալայանները²⁶, Արմենակ Մաքսապետյանը (բազմաթիվ հոդվածներ) եւ ուրիշներ:

Ինչպես նշվեց, մինչ այժմ հրապարակի վրա դեռ չկա մի ուսումնասիրություն, որի մեջ լուսաբանվի հասկապես Զյամարայի հայության պատմությունը ամբողջական կերպով: Ներկա ուսումնասիրությունը մի փորձ է վերացնելու այդ բացը:

Մեր կատարած ուսումնասիրությունը ընդգրկում է 17-րդ դարի սկզբից մինչեւ մեր օրերը:

Աշխատանքը շարադրելիս օգտագործվել են մեզ մատչելի բոլոր ուսումնասիրությունները ինչպես եւ Թեհրանի եւ Նոր Զուղայի առաջնորդարանների արխիվները եւ տեղեկատվական նյութերը, մամակները, մեր անձնական արխիվը, գավառի տարեցների տրամադրած տեղեկությունները, ճամբորդական գրառումներ, ուղեգրություններ եւ այլն:

Մեր ուսումնասիրությունը ամենեվին էլ հավակնություն չունի կատարյալ լինելու, այլ մի համեստ փորձ է նպաստելու գավառի պատմության լուսաբանմանը:

Հեղինակը շնորհակալությամբ կընդունի բոլոր ընթերցողների դիտողություններն ու ցանկությունները, սրտեք հաշվի կառնվեն գրքի կատարելագործման համար:

²² Հ. Պահլեւանյան, Իրանահայ համայնքը, 1941-79 թթ. Երեւան 1989:

²³ Վ. Անդրեասյան, Չարմահալ գավառը, Նոր Զուղա, 1977:

²⁴ Բ. Չուգասյան, Հայ- իրանական գրական առնչություններ, Երեւան 1963:

²⁵ Ե. Ֆրանգյան, Ատրպատական, Թիֆլիս 1905:

²⁶ Բաբգեն եւ Սեդա Բալայան Տեր Հակոբյաններ, «Պարսկաստանի Հայերը» Գլենդել 1985:

Քյաթառ ԳԵՎԱԾԸ

(Պատմա-աշխարհագրական ընդհանուր ակնարկ)

Զյամարայի շրջանը որի կենտրոնը Խոմենյն քաղաքն է, գտնվում է Իրանի Կենտրոնական նահանգում: Նա սահմանակից է Մահալաբի շրջանին՝ հյուսիս- արեւելքում եւ արեւելքում, Արաքին՝ հյուսիս-արեւելքում, Գոլփայեզան շրջանին՝ հարավում եւ արեւմտյան Գյալիլա (Ջալիլադ) շրջանին՝ արեւմուտքում:²⁷

Զյամարա անունը այսօրեքս գնում է որ մոռացության երթարկվի, մինչեւ վերջերս էլ երբեմն այդ անունը երևում էր պետական հաստատությունների ցուցատախտակների վրա եւ օգտագործվում պետական դիվաններում: Հիմա էլ երբեմն գործածվում է որոշ անձանց ազգանունից հետո որպես մականուն:

Գավառը ծովի մակերեկույթից 1800 մետր միջին բրձրությամբ է գտնվում եւ ունի 33 43՝ հյուսիսային լայնություն եւ 50 7՝ արեւելյան երկայնություն: Հեռավորությունը Թեհրանից 323 կմ է:²⁸

Ժողովուրդը գրավում են գյուղատնտեսությամբ, անասնաբուծությամբ, գորգագործությամբ, հանքային աղբյուրաբերությամբ, առետրով եւ ազատ աշխատանքներով: Խոմենյն քաղաքի բնակչությունը ըստ հետևյալն է եղել.

-19-րդ դ. կեսին	500 ընտանիք ²⁹
-1949 թ.	7028 անձ ³⁰
-1956 թ.	8397 անձ ³¹
-1966 թ.	1087 անձ ³²
-1976 թ.	16028 անձ ³³

²⁷ فرهنگ آبادیهای کشور (بر اساس سرشماری آبان ۱۳۵۵) ج ۲۲، تهران ۱۳۶۱، مرکز آمار ایران.

²⁸ کلیات جغرافیای طبیعی و تاریخی ایران، دکتر عزت اله بیات، تهران ۱۳۶۷، ص ۱۶۵.

²⁹ چریکف، سیاحت نامه مسیو چریکف (روسی) ترجمه آبکار مسیحی، تهران ۱۳۵۸ ص ۶۰.

³⁰ فرهنگ جغرافیایی ایران، جلد اول، تهران ۱۳۲۸ ص ۸۲.

³¹ سرشماری عمومی نفوس و مسکن ۱۳۲۵.

³² سرشماری عمومی نفوس و مسکن ۱۳۴۵.

³³ سرشماری عمومی نفوس و مسکن ۱۳۵۵.

-1986 թ.	3890 անձ ³⁴
Ընդհանուր շրջանի բնակչությունը՝	
-1931 թ.	31380 անձ ³⁵
-1966 թ.	62892 անձ ³⁶
-1976 թ.	76794 անձ ³⁷
-1986 թ.	72594 անձ ³⁸

Քյամարա շրջանը ունի իննգ զավառ՝ Ռոսթաղ (46 գյուղով), Գալեզան (34 գյուղով), Համզելու (37 գյուղով), Դալայի (24 գյուղով) եւ Ջափլաղ կամ Գյափլա (50 գյուղով)³⁹:

Քյամարայի հայկական գյուղերը գտնվում էին Դալայի, Համզելու, Ռոսթաղ եւ արեւելյան Գյափլա զավառներում: Գյամարան հնագույն ժամանակ Բելադե-Ջեբալի (Լեռների ավան) կամ Էրադե-Աջամ (ոչ այսօրվա Իրաք) կամ Զորորդ աշխարհի⁴⁰ մաս է կազմել եւ պատմության տարբեր ժամանակաշրջանում զանազան անվանումներ է կրել: Հին հայերը նրան «Սեդիա» (Մարաստան) են կոչել:

Ինքը՝ Քյամարան աշխարհագրական աղբյուրներում զանազան տարբերակներով է հիշատակվել ինչպես՝ Թեմարե, Թիմարթեյն, Դիմարե, Տիմարե եւ այլն:

Արշակունյաց թագավորության ժամանակ Քյամարայի ներկա տեղում էր գտնվում Խորհե շրջանը⁴¹: Թեմարեն այսօրվա արշավանքից առաջ գրավում էր ավելի ընդարձակ շրջան, սակայն հետագայում նրա սահմանները նեղացել եւ ներկա վիճակին են հասել⁴²:

- 34 سرشماری عمومی نفوس و مسکن ۱۳۶۵
- 35 احصایه محصولات فلاحتی ایران در سال ۱۳۱۰، تهران ۱۳۱۱ ص ۱۱۸
- 36 سرشماری ۱۳۴۵
- 37 سرشماری ۱۳۵۵
- 38 سرشماری ۱۳۶۵
- 39 رستاق، گله زن، حمزه لو، دالایی، چاپلق شرقی
- 40 دهخدا، لغت نامه، ص ۳۱۶۹
- 41 مالکوم کالج، پارتیان، ترجمه مسعود رجیب نیا، تهران ۱۳۵۷ ص ۷۲-۷۳

42 مرتضی فرهادی، نامه کمره، جلد ۱ تهران ۱۳۶۹ ص ۱۸

Պատմական աղբյուրներում նաեւ նշվել է տարբեր անուններով ինչպես՝ Բուհեստան⁴³ (Լեռնաշխարհ), Ջեբալ, Ջաբալ (Լեռներ)⁴⁴,

Ղուհեստան(Լեռնաշխարհ)⁴⁵, Ղուհեստան եւ Էրադե- Աջամ(Ոչ-այսօրվա Իրաք)⁴⁶:

Հետաքրքրական է, որ Հայաստանում էլ կան նույնանուն զավառներ, այսպես՝

1) Թիմար կամ Կիմար կամ Տիմար անունով մի գյուղ Արեւմտյան Հայաստանում, Էրզրումի Նահանգում, Էրզրումի զավառում, Հասանկյա քաղաքից մոտ 9 կմ հյուսիս- արեւելք, Արաքսի ավազանի գետակից մեկի ափին:

2) Թիմար, Տիմար Վերին, Տիմ գյուղ, մի գյուղ էր Արեւմտյան Հայաստանում, Վանի Նահանգի Գյալաշի զավառակում:

3) Թիմար, Թերակղզի հայկական լեռնաշխարհում, Վանա լճի արեւելյան մասում⁴⁷:

Քյամարա քառի մասին հետաքրքրական ստուգաբանություն է ներկայացրել Էբրահիմ Դեհզանը. «Քյամարա քառը անշուշտ հիմնավորվել է Կիմեր արմատի վրա, որը արիական մի հին ցեղի անվանում է եւ որոնք, ըստ Սինաքերիբի (Սինաքերիմ, Ասորեստանի թագավոր մ.թ.ա. 705թ.) հյուսիսից արշավանքներ էին կատարում Վանա երկրի վրա եւ Կամբուա էին կոչվում: Նրանք ամբողջ աշխարհում ցրվելով զանազան պետություններ են հիմնադրել, այդ թվում պետությունները անհետացան հետագայում; սակայն այդ անվանումը մի քանի շրջանների վրա՝ Իրանական Իրաքից մինչեւ Եգիպտոս մնաց»⁴⁸:

Արեւմտյան Հայաստանում գոյություն ունեցած Թիմար, Տիմար եւ Կիմար բնակավայրերը հաստատում են Էբրահիմ Դեհզանի տեսակետը: Քյամարան հիշատակվել է թագմաթիվ ուղեգրություններում ինչպիսին են Ժ.Ուտերի, Օլիվերի, Օմեն Ֆլանդենի, Նասերեդդին Շահի, Դոկտոր Ֆորիեյի եւ Չերիկովի հիշատակությունները: Բերենք մի քանի

- 43 Ալեքսանդր Բաւրանի, արանիան, ترجمه مسعود رجیب نیا، تهران ۱۳۵۹ ص ۲۸۴
- 44 سرزمین های خلافت شرقی، به نقل از ابن حوقل، صوره الارض، ترجمه جعفر شعار، تهران ۱۳۴۵ نقشه ۵
- 45 ایرانیان ... ص ۱۴۷
- 46 والتر هینتس، تشکیل دولت ملی در ایران، ترجمه کیکاووس جهانداری، تهران ۱۳۶۱ ص ۵۴-۵۵

47 Թ.Խ. Հակոբյան, Ար. Մելիք- Բախշյան, Հ. Խ. Բաքսեղյան, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.2, Երևան 1988, էջ 452-53:

48 أبراهیم دهگان، کرجنامه، اراک ۱۳۳۱ ص ۳۵۹

հատվածներ. «Լիլիան»⁴⁹ անունով մի հայաբնակ գյուղում գիշերեցին... ջրառատ մի վայր, ծածկված այգիների ծառերով և արտավայրերով, որտեղ արածում էին անասունները հատկապես մատակ ձիեր ու նրանց քուտակները»:⁵⁰ (1840- 42թ.)

Ամենավերջին ուղեգրությունը որում հիշատակվում է Քյամարան Ռուսաստանի պետության պատվիրակ Չերիկովին է պատկանում: Նա 1850 թ. Իրան այցելեց եւ Սպահան ծամրորդելիս, անցել է Քյամարայով (Լիլահան) եւ մանրամասնորեն նկարագրել է իր տեսածները, որի հայ բնակչությունը 40 տուն է հիշատակել: Նրա մոտակայքում երեք հայաբնակ այլ գյուղերի (Քյամուղներ, Դավութբաղ եւ Լորչիբաշի) մասին գրել է, որ յուրաքանչյուր գյուղը 15 տուն հայ բնակիչ ունի եւ «... շուրս գյուղում ապրում է 85 տուն հայ բնակչություն: Լիլիանում կա փոքրիկ մի հայկական եկեղեցի՝ երկու քահանաներով, որոնք նշանակվում են Սպահանի բեմի առաջնորդի կողմից...»⁵¹

Քյամարա գավառի հայկական գյուղերը տարբեր ժամանակաշրջաններում տարբեր բնութագրում են ունեցել: Հայկական Քյամարա գավառը գտնվում է Բուրվարի եւ Գյուլիս գավառների հյուսիսային կողմը և այսօրվա դրությամբ ոչ մի գյուղում հայկական բնակչություն չկա: 1856 թվականին ունեցել է հինգ գյուղ որոնք են.

1- Դավութբաղ.- գտնվում է Խոմենյ քաղաքի արեւմուտքում 7 կմ հեռավորությամբ, մինչեւ 1946 թվականին հայկական է եղել, սակայն հայերը աստիճան-մաքար գաղթել են գյուղից:

2- Լիլիան. մինչեւ 1946 թ. զուտ հայաբնակ է եղել. այս գյուղը բազմիցս հիշատակվել է ուղեգրություններում, ռուս Չերիկովը նրան Լիլիաբաղ է հիշատակել⁵²: Ֆլանդենը 19-րդ դարում (1840 թ.) անդրադարձել է որ գյուղը հայաբնակ է եղել. նա իր ուղեկից ընկելուց հետ օրեւանել է այս գյուղում եւ իր տպավորությունները շարադրել⁵³:

Ռուս Չերիկովն էլ 10 տարի Ֆլանդենից հետո այցելել է Իրան եւ ինչպես նախորդ անդրադարձել ենք, տեղեկություններ է հաղորդել Քյամարայի հայության մասին, նա Լիլիանի բնակչությունը 40 հայ ընտանիք է հիշատակել: Ըստ Չերիկովի Լիլիանը մի փոքրիկ եկեղեցի է երկու քահանա է ունեցել⁵⁴:

⁴⁹ օւژն ֆլանդեն, سفرنامه اوزن فلاندين به ايران، ترجمه حسين نو صادقي، تهران ۱۳۵۶ ص

۱۷۴

⁵⁰ Քյամարայի երբեմնի ամենախոշոր հայաբնակ գյուղը:

⁵¹ سفرنامه مسيو چريکف، ترجمه آيكار مسيحي، تهران ۱۳۵۸ ص ۶۰-۵۸

⁵² همانجا، ص ۵۹

⁵³ օւژن ֆլاندين، ص ۲۲۳

⁵⁴ سفرنامه مسيو چريکف، ص ۵۹

Ամերիկայի Կոլոմբիա համալսարանի դասախոս Ջեկսոնը դարասկզբին լինելով Իրանում գրում է. «Յերեկը մնացին Լիլիանում, որը ուներ հազար տուն»⁵⁵ բնակչություն որոնց մեծամասնությունը հայեր էին, այստեղ հանդիպեցի տեր Ռաբին Հովսեփի հետ, նա քարոզչություն էր կատարում այս շրջանի ժողովրդի մեջ⁵⁶:

Միսիլ Էդվարդը իր գրքում մի քաժին է հատկացրել Քյամարայի հայերին, որտեղ անդրադառնում է Լիլիանի հայության եւ նրանց գորգագործությանը, նաեւ հայերի շահաքրասյան բռնագաղթին եւ հայության բնակության վայրերին. նա այսպես է հիշատակում հայ գյուղացիների մասին. «... հայ գյուղացիները, բարեհամբույր ցեղից են, նրանք ուշիմ ու կազմաված լինելով, պարսիկ գյուղացիներից ավելի մաքուր, բարեկեցիկ, բանուկ, կարգ ու կանոնով եւ տնտեսող ու խնայող են: Նրանց գյուղերը սովորաբար ընդարձակ են և շրջապատված ուտենիներով ու խաղողի այգիներով: Մրանք պատկանում են պարսիկ խաներին եւ վերջիններն էլ շատ գոհ են իրենց հայ վարձակալներից...»

Ամերիկացի առեւտրականներն ու գորգասերերը քաջաճանոթ են Լիլիանի գոյգերին: Լիլիանը Քյամարայի ամենամեծ գյուղն է (այս գավառի 7 հայկական գյուղերում ապրում են 2500 հայ)⁵⁷:

Լիլիանը Իրանում հազվագյուտ անուն է, նույն անունով միայն մի այլ գյուղ կա Ատյապատականի Մարաղա քաղաքի մոտակայքում. Լիլիանը գտնվում է Խոմենյ քաղաքի 15 կմ հեռավորությամբ:

3- Լորչիբաշի. այս անվանումը թուրքերեն է, որը նշանակում է զինվորների կամ զինարանի պետ, եւ սա Սեֆյան քաղաքի ժամանակաշրջանի պաշտոններից ու տիտղոսներից էր համարվում և անմիջապես միայն զիջում էր նախարարապետին, եւ հավասարվում էր մեր ժամանակակից պաշտպանության նախարարի հետ: Ըստ պրոֆ. Միտրոսկիի, այս բառը մոնղոլերենում «քուրչի» ձևով նշանակում է «աղեղնավոր»: Այս անվանումից պիտի հասկանանք, որ գյուղը հիմնադրվել է այդ զինվորականներից մեկի միջոցով⁵⁸:

Չերիկովը այս գյուղը հայաբնակ է հիշատակել⁵⁹. բնակչության 2/3ը հայեր են եղել եւ բոլորից շուտ սկսել են արտագաղթել: Գյուղը գտնվում է Խոմենյ քաղաքի արեւմուտքում 20 կմ հեռավորությամբ:

⁵⁵ - Այս թիվը չափազանցված է նկատվում:

⁵⁶ جکسن، سفرنامه جکسن، ترجمه منوچهر امیری و فریدون بدره ای، تهران

۱۳۵۲، انتشارات خوارزمی، ص ۲۹

⁵⁷ سیسیل ادواردز، قال ایران، ترجمه مهیندخت صبا، (بی تاریخ)، ص ۱۶۳

⁵⁸ ابراهیم دهگان، کرجنامه

⁵⁹ سیاحتنامه چریکف، ص ۵۹

4- Մաքի (Վերին).- այս գյուղը ըստ պետական ներքին սահմանների պատկանում է Արաք քաղաքին, սակայն հայկական Զյամարա գավառի մաս է կազմում:

5- Զյամդյներ.- տեղի քարքառով «Քենդա» նշանակում է քյուրների քարանձավ, որը օգտագործվում էր որպես ոչխարների գոմ: Մինչև 1945 թ. զուտ հայաբնակ էր եւ 1954 թ.-ից հետո զրկվեց իր հայ բնակիչներից: Զյամդյների հայկական գորգերը քարձր ճանաչում են ունեցել: Գյուղը գտնվում է Խոմեն քաղաքի արեւմուտքում 11 կմ հեռավորությամբ:

Զյամարա գավառը 1903 թ. ունեցել է ութ գյուղ, ստորեւ քվարկենք հավելյալ գյուղները.

6- Դալաշուր կամ Դարաշուր.- Իրանում այս անունով շուրջ 200 գյուղեր կան: Մինչև 1946 թ. զուտ հայաբնակ է եղել, մինչ 1959 թ. բոլորովին զրկվել է հայ բնակչությունից:

7- Մազրա (مزار-مزارع), մինչև 1946 թ. զուտ հայաբնակ էր, մինչև 1954 թ. աստիճանաբար զրկվեց հայ բնակչությունից:

8- Չարթաղ. մինչև 1946 զուտ հայաբնակ էր, այդ քվականի ամռան մախրան բերքահավաք հայ բնակչությունը ամբողջովին ներգաղթեց Խոքիդային Հայաստան: Չարթաղ բառը պարսկերենում նշանակում է այն գմբեթը, որը կառուցվել է չորս սյունի վրա⁶⁰ եւ չորս տարրերինն է ակնարկում:

Նույն անունով կան նաեւ ուրիշ գյուղեր Իրանի զանազան վայրերում: Նա գտնվում է Ալիգուդարգ քաղաքի հյուսիսում 40 կմ հեռավորությամբ:

Զյամարա գավառը 1932 թ. ունեցել է 11 գյուղ, շարունակենք վերոհիշյալ ցանկը.

9- Ասատաբաղ (اسدآباد).- հայ եւ պարսիկ բնակչություն է ունեցել, սակայն ժամանակի ընթացքում, բնակչության գաղթի հետեւանքով հայության քիվը նվազելով 1939 թ. հասնում է 16 ամձի:

10- Դանիան (دانیان).- այս անունը Իրանում անգուզական է եւ իմաստը անհայտ, գտնվում է Խոմեն քաղաքի արեւմուտքում 7 կմ հեռավորության վրա, ունեցել է խառն բնակչություն հայերից ու պարսիկներից:

11- Մազրա Հոսեյն (مزارا حسين سفلی) հայ եւ պարսիկ բնակչություն է ունեցել. գտնվում է Խոմեն քաղաքի արեւմուտքում 15 կմ. հեռավորությամբ: Հայ գյուղացիության քիվը նվազելով 1949 թ. հասել է 60-ի:

Զյամարան 1946 թ. ունեցել է հետեւյալ 8 հայաբնակ գյուղերը. Դավութաբաղ, Դարաշուր, Լիլիհան, Ղուրշիբաշի, Մազրա, Մաքի, Քանդյներ եւ Դենհաֆիղ:

12- Դենհաֆիղ (ده سفید) .- գտնվում է Չարթաղ գյուղի մոտակայքում⁶¹ եւ Խոմեն քաղաքի արեւմուտքում: Ունեցել է հայ եւ պարսիկ խառն բնակչություն:

Բացի վերոհիշյալ գյուղերից աղբյուրներում հիշատակվում են նաեւ ներքոհիշյալ երեք գյուղերը.

13- Հաջիաբաղ (حاجی آباد) (Զյամարայի Դալաշի շրջանում).- ունեղել է հայ եւ պարսիկ խառն բնակչություն:

14- Նասուր աբաղ (نصر آباد), եւ 15- Օրթաչիման (ارتچمن) գյուղերը գտնվում էին արեւելյան Գյափա (جافق) շրջանում, սակայն երբ այդ շրջանը միացվեց Խոմենին ուստի ուղշ աղբյուրներ նրանց էլ Զյամարա գավառի գյուղերի շարքին են դասել:

Վերոհիշյալ գյուղերից բացի եղել են մի քանի պարսկախոս երբեմնի հայաբնակ գյուղեր, որոնց մասին ոչ մի տվյալներ չկան գրավոր աղբյուրներում, միայն սրանց անունները հիշվել են Աբրահամ Հովաստափյանի աշխատության մեջ եւ Զյամարայի երբեմնի բնակիչները հիշում են նրանցից որոշների անունները⁶²:

Սույն գավառից 1946 թ. ներգաղթին քիչ մեկնողներ են եղել, մեծ մասը տեղափոխվել է քաղաքները, հատկապես Թեհրան, դա էլ հայրենիք գաղթելու նպատակով, սակայն նրանց բախտ չի վիճակվել եւ նգրգաղթի դադարման պատճառով նրանց ընդմիշտ հաստատվել են գլխավորապես մայրաքաղաքում:

1962 թ. միայն Լիլիհան է ունեցել հայ բնակչություն (շուրջ 60 տուն), իսկ 1967-ին հազիվ 4 տուն, մեծ մասը անցել են Թեհրան: Այսօր զրկված է իր հայ բնակչությունից:

⁶¹ مرآت البلدان، ج ٤ ص ١٧.

⁶² 1- Չերեշգ, Թոնգորան, Ղիափա, Ներքին Մուշիան, Բաշխաբաղ, Շամսաբաղ գյուղերը Ռոստաղ շրջանում:

2- Էմամզադե (Վարչե), Խեշքիջան գյուղերը Համզալու շրջանում:

3- Ամինաբաղ, Էսքեհլաք, Մոքիսահեսար (Մաֆիաբաղ), Վերին Դալա (Դարչիբաշի), Սեյճաբաղ գյուղերը Դալաշի շրջանում:

⁶¹ فرهنگ رشیدی و برهان قاطع.

Համառոտ ակնարկ իրանահայ գաղթօջախների պատմության

Հայ իրանական առնչությունները սկզբնավորվել են դեռևս իրանական պետականության կազմավորման ժամանակաշրջանում: Իրանում հայերը եղել են դեռևս մ.թ.ա. 6-րդ դարից⁶³: Դրանք հիմնականում հայկական գործառնություն էին, որոնք վասալական պարտավորություն էին կատարում ծառայելով Աքեմենյան պետությանը: Ավելի ուշ զգալի թիվ էին կազմում նաև հայ առեվտրականներն ու արհեստավորները: Իսկ ուլայես բնիկներ՝ հայերը դեռևս հնագույն ժամանակներից ապրել են Առաքյատականում կամ պատմական Պարսկահայքում [Թավրիզ, Մարանդ, Ուրմիա (Կապուտան), Խոյ (Հեր), Մարաղա, Մալմաստ (Ջարեվանդ), Մակու (Արտագ), Դարաղաղ (Փայտակարան) եվմ], որը հայկական պետականության անկումից հետո մտավ Իրանի կազմի մեջ⁶⁴:

Իրանում հայկական մեծ գաղթօջախներ սկսեցին կազմավորվել 3-4-րդ դարերում: Հայաստանում, քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո իրանա-հայկական հակամարտությունն այլեւս եւ սուսցւալ կրոնական գոնավորում⁶⁵: Այդ պատերազմների բուն նպատակն էր տալուծրային հարցերը, ինչպես եւ Հայաստանի տարածքով անցնող միջազգային առեվտրական ճանապարհներին տիրանալ:

Հայերի խոշոր բռնագաղթերը իրականացվել են մ.թ. 3-րդ դարում, (Սասանյան Արտաշիր թագավորի կողմից)⁶⁶, 4-րդ դարում Շապուհ 2-րդի⁶⁷ Հայաստան կատարած արշավանքներից հետո: Հայ պատմիչների վկայությամբ այդ շրջանում Իրան են գաղթեցել մի քանի հարյուր հազար հայեր⁶⁸, որոնց զգալի մասը բնակեցվել են Խուզիստանում եւ Իրանի հարավ- արեւմտյան շրջաններում⁶⁹:

⁶³ Բենեդիկտ, Կրիստապատում, հայերեն թարգմ. Աշոտ Մուրադյանյան, Թեհրան, 1971, էջ 61:

⁶⁴ ՀԱՀ, հ.4 էջ 450:

⁶⁵ Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ VIII, էջ 193:

⁶⁶ Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Երեւան, 1977, էջ 31-36:

⁶⁷ Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Երեւան, 1968, էջ 222:

⁶⁸ ՀԱՀ, հ.4, էջ 451:

⁶⁹ Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, հ. 8, էջ 194:

Բռնագաղթված հայերին սպասում էր աննախանձելի ճակատագիր: 7-րդ դարի սկզբներին Իրանն ընկավ Արաբական խալիֆայի տիրապետության տակ, նրանք բուն տեղի ժողովրդի հետ մեկտեղ, ընդունելով մահմեդականություն՝ ձուլվեցին ու կորցրին իրենց ազգությունը⁷⁰:

Իրանում հայ բնակավայրերի մոտ օջախներ սկսեցին ստեղծվել 11-րդ դարից՝ սելջուկ-մոնղոլների արշավանքների հետեւանքով: Այդ խոշոր գերեվարությունը Հայաստանից Իրան կատարել են սելջուկները 1048 թվականին: Արիստակես Լաստիվերտցին իր «Պատմության» մեջ պատմում է, թե ինչպես Տուղրիլ բեգի հրամանով սելջուկյան մի քանակ Իրրահիմ Յանալիի եւ Գըլմուշի գլխավորությամբ մտնում է Հայաստան, սրով ու հրով քանդում, ավերում Հայաստանի 24 գավառները եւ մեծ թվով գերիններ վերցնելով եւ վերադառնում⁷¹: Ըստ Մատթեոս Ուռհայեցու տեղեկության, սելջուկները 150.000 հոգի կոտորելուց հետո այդ թվով էլ հայ ազգաբնակչություն են գերեվարում եւ քշում Իրան⁷²: Բացի այդ, հայկական պետականության անկումից հետո՝ 11-րդ դ. Մակուի, Խոյի, Մալմաստի, Ուրմիայի, Դարաղաղի (Արտագ, Հեր, Ջարեվանդ) եւ այլ մահանգների հայկական շրջանները մտան Իրանի պետության կազմի մեջ:

Այդին 11-14-րդ դարերում հայկական բնակավայրեր կային Թավրիզ, Մարաղա, Ռաշտ, Սուլթանիե քաղաքներում եւ Իրանի մի քանի այլ մարզերում⁷³, որոնք ունեին նաև թեմեր⁷⁴, այդուհանդերձ Իրանի հասարակա- տնտեսական պայմանները դրանց միավորման համար դեռևս բարենպաստ չէին:

12-րդ դարում այդին Իրանում այնքան մեծաթիվ էր հայ բնակչությունը, որ հայկական երկու խոշոր թեմ է ստեղծվել՝ Հեր եւ Ջարեվանդի թեմը եւ Մալմաստի ու պարսկական մայրաքաղաքի թեմ: Տեղեկություններ կան, որ այդ երկու թեմերի առաջնորդները մասնակցել են 1174 թվականին Հոռմկլայում հրավիրված ազգային եկեղեցական ժողովին⁷⁵:

Իրան գերի տարված բազմահազար հայ բնակչության մի մասը ոչնչանում է գերեվարության ճանապարհին, իսկ մնացածները,

⁷⁰ Նույն տեղը:

⁷¹ Արիստակես Լաստիվերտցի, Պատմություն, Թիֆլիս, 1912, էջ 65:

⁷² Մ. Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երեւան, 1973, էջ 68:

⁷³ Հ.Հ. Մարտիրոսյան, Իրանահայ գաղութի պատմություն, Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ ու ժողովուրդներ, հ. 8, էջ 194:

⁷⁴ Հ.Լ. Փահլեվանյան, Իրանահայ համայնքը, Երեւան, 1989, էջ 5:

⁷⁵ Մ.Չամչյան, Պատմություն հայոց, հ.8, էջ 132:

մասնավորապես արհեստավորները եւ առեվտրա խանութները, կարողանում էին ոտքի կանգնել, համախմբվել եւ հայ գաղթօջախների հիմքը դնել⁷⁶:

Իրանահայ գաղթականության դյուքունը զգալի չափով բարելավվում է Մելիք շահի գահակալության ժամանակ (1072-1092): Նա բարձրացրեց վերաբերմունքը ցուցաբերեց հանդեպ հայերին, որի մասին անդրադարձել է Մ. Ռուհայեցին⁷⁷:

Իրանահայ գաղթօջախները ավելի զարգացան եւ Իրանի տնտեսական կյանքում սկսեցին խոշոր դեր կատարել մասնավորապես մոնղոլական տիրապետության շրջանում (1220-1385): Մոնղոլների՝ Հայաստանում կատարած ամենից մեծ գերեվարությունը տեղի է ունեցել 1236-1237-ին, որի մասին տեղեկություն է հաղորդում Կիրակոս Գանձակերին⁷⁸: Մի այլ գերեվարություն կատարվել է 1340 թվականին,

որի մասին տեղեկություն է հաղորդում Սարգիս Գրիչը⁷⁹: Մոնղոլական գերիշխանության շրջանում հայ բնակչություն է տեղափոխվել Իրան ոչ միայն բռնագաղթի ճանապարհով, այլեւ մի մասը կամովին: 13-րդ դարում հայ առեվտրականները եւ արհեստավորները բանակ աշխատանք են ունեցել Իրանի առեվտրաշատ քաղաքներում, որոնցից հստակապես պիտի նշել Թավրիզը (Դավրիժը): Ա. Գ. Աբրահամյանը գրել է. «... Թավրիզը 16-րդ դ. ունեցել է 700 սուն բնակչություն 12 եկեղեցիներով... ամենայն դեպս 14-15րդ դարերում Թավրիզում այնքան շատ հայեր են կենտրոնացված եղել, որ 1345 թ. գրված հայկական մի ձեռագրում, Ներսես Գրիչը Թավրիզը համարում է ոչ միայն Ֆարսերի (պարսիկների), այլեւ հայերի մայրաքաղաք⁸⁰»:

14-15րդ դարերում իրանահայ խոշոր գաղթօջախ է հաստատված եղել Սուրաբիում, որը հիմնվել է Էլիսան Արդուինի (1284-1291) կողմից Զենջանի եւ Դսգվինի միջև: 14-րդ դարի սկզբներին Էլիսանուրյան մայրաքաղաքը Թավրիզից տեղափոխվեց այդ քաղաքը: Սուրաբիեն եվս Թավրիզից անկախ ունեցել է իր հայկական բնակչությանը՝ բնակավայրերով⁸¹:

⁷⁶ Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 1, Երևան, 1964, էջ 240:

⁷⁷ Մ. Ռուհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 157:

⁷⁸ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 234:

⁷⁹ «Ազգ. հանդես», գիրք 12, 1905, էջ 165, Ա. Գ. Աբրահամյան, համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1964, էջ 242:

⁸⁰ Ա. Գ. Աբրահամյան, համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1964, էջ 243:

⁸¹ Նույն տեղը, էջ 245:

Ատրպատականի հայկական խոշոր գաղթօջախներից են եղել Մակուն, Մարաղան, Մալմաստը, Ուրմիան եւ Գիլան մահադի կենտրոն՝ Ռաշտը:

Հայ ազգաբնակչության գերեվարումը շարունակվում է մեծ Լենկ Թեմուրի ասպատակումների ընթացքում, որոնց զգալի մասը տարվում է Խորասան⁸²:

Սեֆյան հարստության հիմնադիր շահ Իսմայիլի գահակալության ժամանակ է հիմնվել Սպահանի հայ գաղթավայրը: Միայն է այն կարծիքը, որ իբրեւ թե Սպահանի հայ գաղթօջախը ստեղծվել է Ըահ Աբբասի բռնագաղթի շնորհիվ: Ըահ Աբբասի բռնագաղթից առաջ Սպահանում հայ համայնքի գոյության մասին են խոսում Առաքել Դավրիժեցին⁸³, Հարություն Տեր-Հովհանյանը⁸⁴, Գրիգոր

Աղաբաբյանը⁸⁵: 16-րդ դարի եվրոպացի ճանապարհորդները իրենց ուղեգրությունների մեջ բազմաթիվ տեղեկություններ են հաղորդում Սպահանում բնակչություն հաստատած հայ առեվտրականների եվ արհեստավորների աշխույժ գործունեության մասին:

1603 թվականին պարսկական զորքը, Ըահ Աբբասի գլխավորությամբ անցնում է Արաքսը եւ մտնում Ջուղա: Պարսկական բանակը գրավում է Նախիջեվանը եւ պաշարում Երեվանը, որ ամրացել էր թուրքական կայազորը: Այդ ընթացքում պարսկական մի այլ զորամաս անցնում է թուրքական սահմանը, Կարինի ուղղությամբ, ասպատակում Վանի, Մանազկերտի, Ալաշկերտի, Կարինի, Բասենի, Խնուսի գավառները⁸⁶: Արեվմտյան Հայաստանից 60 հազար հայ

գաղթականներ են բերվում Իրան⁸⁷:

Երեւանը գրավելուց հետո, Ըահ Աբբասը տեղեկանալով թուրքական զորաբանակի առաջխաղացման մասին, Սինան վաշայի հրամանատարությամբ, որոշում է իրագործել իր ծրագիրը՝ հայերին բռնի գաղթեցնել Իրան: Այդ քայլը Ըահ Աբբասը օգտակար էր համարում երկու տեսակետից. միայն ամայի ընդարձակ տարածություն կստեղծեր արշավող թուրքական բանակի առջեւ ու դրանով կը դժվարանար նրա պարենավորումը, եվ սպա՝ հայ գաղթականությունը Իրան

⁸² Նույն տեղը, էջ 248:

⁸³ Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Երեվան, 1988, էջ 25:

⁸⁴ Հ. Տեր-Հովհանյան, Պատմություն Նոր Ջուղայի, հ. 1, Նոր Ջուղա, 1880, էջ 158:

⁸⁵ Պարսկահայ տարեցույց, Թեհրան, 1929, էջ 11:

⁸⁶ Ա. Դավրիժեցի, Պատմություն, Երեվան, 1988, էջ 40:

⁸⁷ Ա. Գ. Աբրահամյան, ճշվ. աշխ., էջ 251, Ե. Լալայան, Վասպուրականի ձեռագրաց ցուցակ, էջ 822:

տեղափոխելով նպաստած կլիներ իր երկրի տնտեսական կյանքի զարգացմանը⁸⁸:

Իրան տարվող բազմահազար հայ բնակչության զգալի մասը ոչնչանում է:

Բռնագաղթած հայ բնակչությունը իր գաղթի տարրեր փոխելի ընթացքում հաստատվում է Իրանի զանազան շրջաններում՝ Քաշանում, Դազվիմում, Գիլանում, Էնգելիում⁸⁹, Սպահան քաղաքի գավառներում՝ Լնջանում, Ալինջանում, Գանդիմանում եւ Ջոլախոռ, Փերիա ու Բուրվարի⁹⁰, Բյազազ, Բյամարա, Գափլա եւ Ղարաղան⁹¹, Շիրազ⁹²,

Չարմահալ, Մազանդարան⁹³, Համադան եւ այլն:

Եվրոպացի ճանապարհորդներից մեկը՝ Գոուվեն, Հայաստանից Իրան տարված բնակչության թիվը 60.000 ընտանիք է հաշվում: Եթե յուրաքանչյուր ընտանիքում հաշվենք 5 անձ, ապա գերազանցում է 300.000-ի: Կան նաև տեսակետներ 70.000 ընտանիքի մասին: Ըստ եվրոպացի ճանապարհորդի՝ քված գաղթականներից միայն ստրկության վաճառվածների թիվը 100.000 է եղել: Եվրոպացի ճանապարհորդ Շարլենը, բռնագաղթից 40 տարի հետո Մազանդարանում գտնված ժամանակ, ցավով նշում է, որ այդտեղ բերված 30.000 ընտանիքներից մնացել են միայն 400-ը, մնացածները մահացել են կլիմայի վատառողջ լինելու պատճառով⁹⁴: Տվեալներ կան,

որ տարեգրված հայության թիվը հասել է մինչև 500.000⁹⁵:

Շահ Աբբասը Սպահանի արվարձանում, Ջայսնդերուդի մյուս ափին, հայերին թույլ է տալիս հիմնել բնակավայր, որի բնակիչները հիմնականում Նախիջեվանի եւ Երեւանի գավառներից եւ Ջուղա գյուղաքաղաքից բռնագաղթվածներն էին: Վերջիններս, իրենց հին բնակավայրի անունը պահպանած լինելու համար, նոր տեղն անվանեցին Նոր Ջուղա: Շահը զգալի արտոնություններ է շնորհում հայ առեւտրականներին եւ արհեստավորներին: Նա նույնիսկ թույլ է տալիս այդտեղ հայկական եկեղեցիներ կառուցել, ունենալ դատարաններ: Նրա

⁸⁸ Նույն տեղում, էջ 251:

⁸⁹ Հ.Տեյ-Հովնանյանց, Պատմություն Նոր Ջուղայի, հ.1, Նոր Ջուղա, 1980, աշխարհագր., էջ 38:

⁹⁰ Ա. Դավիթեցի, Պատմություն, Երեւան, 1988, էջ 47:

⁹¹ Հ. Տեյ-Հովնանյանցի, նշվ. աշտ., հ.1, էջ 40:

⁹² Ա. Դավիթեցի, Պատմություն, էջ 48:

⁹³ Ա.Գ.Աբրահամյան, նշվ. աշտ., էջ 253:

⁹⁴ Նույն տեղը:

⁹⁵ ՀԱՀ, հ.4, էջ 451:

իրամանով Էջմիածնի վանքի քարերը բերվում են Նոր Ջուղայում կառուցվող եկեղեցիների պատերը ձեւավորելու համար, որը կատարվում է հայ գաղթականությունը պարսկական հողի հետ կապելու նպատակով: Կարծ ժամանակում Նոր Ջուղան դարձավ Իրանի առևտրական կարեւոր կենտրոններից մեկը, որի հայ վաճառականները (խոջաները) 17-րդ դ. եւ 18-րդ դ. առաջին քառորդում դարձան Հնդկաստանի, Եվրոպական երկրների ու Ռուսաստանի հետ Իրանի առեւտրա-տնտեսական կապերի զարգացման ակտիվ գործիչներ:

17-րդ դարում եւ 18-րդ դ. սկզբին Նոր Ջուղան դարձավ Իրանի հարավում ապրող հայերի բնական կենտրոն, ինչպես նաեւ նշակութային կարեւոր օջախ ամբողջ գաղութի համար:

18-րդ դ. 20-ական թվականներին աֆղանների արշավանքի հետեւանքով Նոր Ջուղայի կյանքը ապրեց խոր անկում: Իրան հաջորդած Ֆեղալական երկպառակությունների եւ պատերազմների ժամանակաշրջանում նրա բնակչության զգալի մասը, հատկապես ապահովված, հարուստ խավը հեռացավ, առավելապես Հնդկաստան, Իրաք եւ արաբական այլ երկրներ, ինչպես եւ Ռուսաստան: Այսուհանդերձ, Իրանում ապրող հայերի գերակշիռ մասը մնաց երկրում: Նրանք բնակչություն հաստատեցին Իրանի այլ նահանգներում եւ շրջաններում⁹⁶:

Անգլիացի միսիոներ՝ Հանրի Մարքինի վկայությամբ (22 մայիս 1711 թ.) հայկական գաղութ է գոյություն ունեցել Պարսից Շոցի ափերում գտնված Բուշեիրում, ինքը այդ թվականին հյուր է լինում մի հայ ընտանիքի: 1711 թ. հայերը Բուշեիրում ունեցել են եկեղեցի եւ քահանա: Նոր Ջուղայի հայ վաճառականները երբ սկսեցին Հնդկաստանի հետ իրենց առեւտրական հարաբերությունները, օգտվեցին Բանդար Աբբասից, սակայն 1763 թ., երբ անգլիացիները հեռացան այդ նավահանգստից, հայ առեւտրականներն էլ հետեւելով նրանց Բուշեիր հաստատվեցին⁹⁷:

Այդ տարիներին տեղաշարժեր եղան նաեւ հայ գյուղական բնակչության մեջ: Նոր Ջուղայի հարակից Լնջան եւ Ալիջան շրջաններում ապրող բոլոր հայ գյուղացիները տեղափոխվեցին դեպի արեւմուտք ու հարավ-արեւմուտք՝ Փերիայի, Բուրվարի եւ Չհարմահալի շրջանները: Հաջորդ տասնամյակում հայ գյուղացիների շատ ընտանիքները Բուրվարի եւ Գափլա շրջաններից անցան հարեւան Բյամարա եւ Բյազազ շրջանները: Այս տեղաշարժերի ընթացքում ստեղծվում էին հայկական նոր բնակավայրեր եւ կամ համարվում էր այդտեղ եղածների բնակչությունը⁹⁸:

⁹⁶ Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրների եւ ժողովուրդներ, հ.8, էջ 195:

⁹⁷ Մ.Բուլատյան, Բուշեիրի հին գաղութը, ԲաՖՖի տարեգիրք, Թեհրան 1969, էջ 280:

⁹⁸ Մերձավոր եւ Միջին..., հ. 8, էջ 196:

Իրանի հայ բնակչությունը ծանր վիճակում է գտնվել 18-րդ դարի երկրորդ կեսին, միջ-Ֆեռդյալական ընդհանրումների ակտիվացման ժամանակաշրջանում, երբ 1747 թվականին սպանվեց Նադիր Շահը:

18-րդ դարի երկրորդ կեսում Իրանում իշխում էր սուրբ հաղթահարող խաներից, մահը՝ ավագակային հարձակումներից, սուղանքը ինքնագլուխ իշխաններից եվ տանջանքը հարկապահանջներից⁹⁹: 1753 թվականին Սպահանի եվ Նոր Ջուղայի վրա դրված է եղել 60.000 թուման արտակարգ հարկ: Ըստ չանցած երբ Սպահանին կարճ ժամանակով տիրել են աֆղանները, նոր ջուղայեցիներից պահանջվել է եվս 1800 թուման¹⁰⁰:

18-րդ դարում Իրանի հայ բնակչության ամտերունջ վիճակից փորձեցին օգտվել կաթոլիկ միսիոներները, որոնք հաստատվել էին Իրանում դեռելս Ըահ Աբբասի օրոք: Իրանում հաստատվել էին միսիոներական մի քանի միաբանություն՝ Օգոստինյան, որը գտնվում էր սկզբում պորտուգալական, իսկ հետո իսպանական բազավորի հովանավորության ներքո, եվ այլ¹⁰¹: Իրանահայությունից կաթոլիկություն են ընդունել այն հայերը, որոնք կապված էին կաթոլիկ աշխարհի հետ: Այսուհանդերձ միսիոներական կազմակերպությունը մեծ հաջողություններ չի ունեցել:

19-րդ դ. 20-30ական թվականներին իրանահայ գաղութը ենթարկվեց նոր փոփոխությունների: 1828թ. Թուրքմենչայի պայմանագրով Արեվելյան Հայաստանի մի մասը Ռուսաստանին միանալուց հետո, մոտ 45 հազար հայեր դուրս եկան Իրանի հյուսիսային նահանգներից եւ բնակչություն հաստատեցին Երեվանի եվ Նախիջևանի նահանգներում¹⁰²:

Իրանում մնացած հայերը գլխավորապես բնակվում էին հարավային եվ հյուսիսային նահանգներում: Հարավարևելյան հայերի կենտրոնը շարունակում էր մնալ Նոր Ջուղան: Նրան էին ենթարկվում Փերիս, Զյալվան, Չհարմահալ, Բուրվարի, Համադան, Շիրազ քաղաքների հայաբնակ օջախները:

1833 թ.-ից հյուսիսային նահանգներում բնակվող հայերի կետրոնը դառնում է Թավրիզը: Մինչ այդ Մակուի շրջանում գտնվող Թաղեի վանքին էր պատկանում առաջնային դերը: Այսուհետև Թավրիզը համարվում էր Խոյի, Մակուի, Մայմաստի, Ուրմիայի, Ղարաղաղի, Մարդայի եւ այլ շրջանների հայերի կենտրոն:

19-րդ դ. երկրորդ կեսին Իրանահայ գաղութը շարունակեց աճել ավելի արագ քափով: Ստեղծվում է հայ նոր բնակավայրեր Սեշեղում, Զերմանշահում եվ այլուր: 20-րդ դ. սկզբին, Իրանում նախկին արդյունաբերության զարգացման հետ մեկտեղ հայկական նոր օջախներ

առաջացան երկրի հարավում՝ Աբադանում, Անվազում, Մեսգեդ-Սուլեյմանում եվ այլուր¹⁰³:

17-19-րդ դարերում հայ բնակչության մի մասը հարավային գավառներից փոխադրվում է կենտրոնական գավառները, ստեղծելով մի քանի նոր հայկական բնակավայրեր: Տարագաղթման պատմական այս ընթացքի հետևանքով Իրանի հայ գաղութը բաժանվեց երկու մասի՝ հյուսիսյին (Թավրիզ կենտրոնով) եվ հարավային (Նոր Ջուղա կենտրոնով): Այս բաժանումը պահպանվում էր մինչև 20-րդ դարի 40-ական թվականները:

Թեհրանի բնակչության աճին զուգընթաց խախտվեց գաղութի պատմա-կանոններն ստեղծված այս բաժանումը: Իսրիս 40-ական թվականներին ստեղծվեց կենտրոնական նոր շրջան, որի մեջ կենտրոն հանդիսացող Թեհրանի հետ մեկտեղ մտան նաեւ հարակից կենտրոնական, ինչպես նաեւ հարավ-արեւելյան եվ հյուսիս-արեւելյան գավառների հայկական բնակավայրերը: 1946 թ. մեծ ներգաղթ սկսվեց դեպի Խորհրդային Հայաստան: Ելնելով հայրենասիրական ձգտումներից հայերը աճապարհանքով Թեհրան մեկնեցին հայրենիք վերադառնալու մպատակով: Սակայն դա բոլորին չհաջողվեց եվ շատերը որոշ դժվարությունների պատճառով մնացին Թեհրանում եվ կազմեցին Թեհրանի ներկայիս հայ բնակչության մեծամասնությունը:

Խորհրդային Միության կառավարությունը խորհրդային Հայաստանի կառավարության միջնորդությամբ 1945 թ. նոյեմբերի 21-ին որոշում կայացրեց թույլատրել արտասահմանում բնակվող եւ Խ. Հայաստան վերադառնալ ցանկացող հայության վերադարձն իրենց հայրենիքը:

Իրանի հայրենի ներգաղթի օժանդակման Կոմիտե կազմվեց 1946 թ. ապրիլի 1-ին, նախագահությամբ՝ ազգային բարերար՝ պրն Ռոման Իսայանի (Իսակ)¹⁰⁴:

Ներգաղթի նախապատրաստական աշխատանքների համար իրանահայ երեք կենտրոններում՝ Թեհրանում, Թավրիզում, Նոր Ջուղայում, ինչպես եւ բոլոր շրջաններում, կազմվեցին ներգաղթին օժանդակող ենթակոմիտեներ: Այսպես 1946 թ. փետրվարի 16-ին Թավրիզում ընտրվեց Ատրպատականի ներգաղթի կենտրոնական կոմիտեն:

Առաջին հերթին, առաջին կարավանով Թեհրանից Խ.Հայաստան մեկնող հայերի ցանկը հայտարարվեց 1946 թ. հունիսի 29-ին. ներգաղթի կարավանները շարժվելուց առաջ, դեռեւս մայիսի 10-ին, Թեհրանից Հայաստան մեկնեցին հայրենադարձն ավետող առաջին ծիծեռնակները՝ 11 ուսանող-ուհիներ:

Իրանից դեպի Մայր Հայրենիք ներգաղթողների առաջին կարավանը շարժվեց հուլիսի 14-ին, Արաքի շրջանի գյափլա գավառի Հոսեյնաբադ գյուղից (401 հոգի):

Հուլիսի 20-ին մեկնում է Թավրիզի հայերի առաջին կարավանը (223 հոգի), այնուհետև Երաքի, Մարաղայի (հուլիսի 27-ին), Մակուի (հուլիսի 28), Մայմաստի (Հուլիսի 30), Ուրմիայի (օգոստոսի 11),

⁹⁹ Մ.Չամչյան, Պատմություն Հայոց, հ.8, էջ 849:

¹⁰⁰ Ա.Գ.Աբրահամյան, նշվ. աշտ., էջ 217:

¹⁰¹ Ա.Գ.Աբրահամյան, նշվ. աշտ., հ.2, էջ 220:

¹⁰² Մերձավոր եվ Միջին Արեւելքի երկրներ..., հ.8, էջ 196:

¹⁰³ Մերձավոր եվ Միջին Արեւելքի երկրներ..., հ.8, էջ 196:

¹⁰⁴ «Վերածնունդ» թերթ, Թեհրան, ըստ Աբր. Հովասափյան, Հայաբնակ գյուղերը Ալիգուդարգ գավառում, Թեհրան 1975, էջ 154-155:

Ղազվինի, Քերմանշահի, Փերիայի, Չարմահալի, Մեշեդի
ներգադրողները:

Թեհրանից առաջին կարավանները շարժվեցին մեքենաներով (օգոստոս 11-ին) եվ գնացքով (օգոստոսի 12-ին): Մոտավոր հաշվով, 1946 թ. ընթացքին ընդամենը մի քանի ամիսներում Հայաստան մեկնող իրանահայերի թիվը հասնում էր շուրջ 21 հազարի: Արձանագրությունները եվ նախապատրաստական աշխատանքները շարունակվեցին 1947 թ. համար:

Հայրենադարձների թիվը ըստ շրջանի.

Ատրպատականից	5328
Արաքից	5942
Թեհրանից	626
Ղազվինից	359
Համադանից	22
Մեշեդից	61
Նոր Ջուղայից	1537
Զյարվանդից	1320
Քերմանշահից	30
Փերիայից	4404
Չարմահալից	1276
Գումար	20905

Պաշտոնական աղբյուրների համաձայն 1946 թ. զանգվածային հայրենադարձության ժամանակ ամենամեծ տոկոսը պատկանում էր Իրանին: (20597 մարդ)¹⁰⁵:

Ներգաղթած իրանահայերը հաստատվեցին Երեվանում, Արտաշատի, Էջմիածնի, Աշտարակի, Կափանից, Հոկտեմբերյանի, Վեդու, Չանգիքասարի եւ Միկոյանի շրջաններում:

Զյամարա գավառից Խ.Հայաստանի հայրենադարձվեցին շատ քիչ հայեր:¹⁰⁶ Նրանց մեծամասնությունը չհասցրին միանալ ներգաղթող զանգվածին եվ մայրաքաղաք տեղափոխված ընտանիքները ստիպված եղան բնակություն հաստատել այստեղ:

1947 թ. Իրանից հայերի զանգվածային հայրենադարձությունն ընդհատվեց: Սակայն այն շարունակվեց նաեւ հետագա տարիներին: 1958 թ. անհատական հրավերներով մշտական բնակություն հաստատելու նպատակով տասից ավելի ընտանիքներ վերադարձան Խ.Հայաստան:¹⁰⁷ Ավելի քան մեկ տասնամյակ տեղած (1950-1961) անհատական հայրենադարձության փորձն ապացուցեց, որ ներգաղթի

¹⁰⁵ Հ.Մելիքսեթյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները եվ հայրենադարձությունը (1920-1980) Երեվան 1985, էջ 241

¹⁰⁶ Հ.Հ.Մարտիրոսյան, Հայերի տեղաբաշխումը Իրանում, Մերձ. եվ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, հ.4, Երեվան 1969, էջ 156

¹⁰⁷ Հ.Մելիքսեթյան, նշվ. աշխ. էջ 253

այդ եղանակը չի կարող բավարարել բազմահազար սփյուռքահայերին վերադարձնելու հայրենիք: Ուստի, ընդառաջելով նրանց ցանկությունը, Խ.Հայաստանի միջնորդությամբ Խ.Միության կառավարությունը 1961 թ. օգոստոսի 12-ին որոշում ընդունեց՝ նոր զանգվածային հայրենադարձության մասին: 3000 ընդունված հայերի փոխարեն 1962 թ. հայրենադարձվեց ընդամենը 58 մարդ, քանի որ Իրանի հակադեմոկրատական կառավարությունը այնպիսի խոչընդոտներ առաջացրեց, որոնց հետեւանքով արձանագրվածները չհաջողեցին Հայաստան ներգաղթել:¹⁰⁸ Չնայած այդ ամենին խորհրդային

դեսպանատան ջանքերով հաջողվեց Իրանից հայրենադարձնել մեծ թվով հայեր: 1962-1967 թթ. ընթացքում Իրանից հայրենիք վերադարձավ 2699 մարդ:¹⁰⁹

1962-1982 թթ. Իրանից հայրենադարձվել է 5039 ընտանիք՝ 24283 մարդ: Ամենամեծ թվով հայրենադարձներ եղել են 1969 թ.-ին, իսկ ամենափոքր թվով՝ 1981 թ.-ին:¹¹⁰

Այսպիսով, չնայած իրանական կառավարության հարուցած սահմանափակումներին եվ խոչընդոտներին, հայրենադարձության ընթացքում ամենամեծ ներգաղթը կատարվեց Իրանից:

1851 թ. Իրանում կար շուրջ 20.000 հայ բնակիչ, իսկ 1890-ին՝ արդեն 80.000: 1978 թ. իրանահայության թիվը հասնում էր 200.000-ի: Սակայն իսլամական կարգերի հաստատումից հետո (1979) եվ Իրան-Իրաք պատերազմի երկարատեղ շրջանի (8 տարի) վժվարին պայանների հետեւանքով մեծ թվով հայեր, թողնելով երկիրը, բնակություն հաստատեցին առավելապես ԱՄՆ-ում եվ Եվրոպական զանազան երկրներում:

Իրանահայությունը պատմության բոլոր ժամանակշրջաններում մասնակցել է Իրանի հասարակական, տնտեսական, քաղաքական եվ մշակութային կյանքին:

Այժմ Իրանահայ համայնքը ղեկավարվում է թեմական խորհուրդների կողմից: 1935 թ. կառավարությունը հաստատեց «Իրանահայության ընտանեկան եվ ժողովրդական օրենքների ժողովածուն»: Մինչեւ 1956 թ. Իրանահայ թեմը ենթարկվում էր Էջմիածնի Մայր Աթոռին, ապա Անթիլիասին: Իրանում կա 3 թեմ՝ Ատրպատականի (կետրոնը՝ Թավրիզ), Թեհրանի, Իրանա-Հնդկաստանի (կենտրոնը՝ Նոր Ջուղա), գործում է նաեւ հայ կաթոլիկ, հայ ավետարանական, հայ եղբայրական, աղվենթիստ եկեղեցիները: Վերջին տարիներին հիմնադրվել են Աստուծո ժողովուրդ եկեղեցիներ տարբեր շրջաններում:

Իրանի խորհրդարանում հայ համայնքը ներկայացուցչության իրավունք ստացավ 1905-1911 թթ.-ին: Իսլամական կարգերը

¹⁰⁸ Նույն տեղում, էջ 256:

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 279:

¹¹⁰ Նույն տեղում, էջ 299:

հաստատվելուց հետո պահպանվեցին նույն իրավունքները, ըստ Իրանի Իսլամական Հանրապետության կանոնադրության 64-րդ հոդվածի¹¹¹, հայերը ունեն երկու ներկայացուցիչ խորհրդարանում (հարավային եւ հյուսիսային շրջաններում ապրող հայության կողմից): Կրոնական արարողությունների ազատությունն էլ նախատեսվել է 13-րդ հոդվածով¹¹²:

Այժմ իրանահայ համայնքի ճնշող մեծամասնությունը ապրում է Թեհրանում, մասամբ Նոր Ջուղայում, Թավրիզում, Ուրմիայում, Դազվինում, Արաքում, Մեշհեդում, Քերմանշահում, Շիրազում, Գորգանում, Ռաշտում, Շահինշահում, Անվազում:

4-Յայերը Զյամարայում

Թուրք-Օսմանական ռազմաֆեոդալական պետությունը, որի հիմքը դրեց Օսման քեյը XIII դարի վերջին, Փոքր Ասիայի հյուսիս-արեւմտյան ծայրամասում, բազմաթիվ արշավանքների ու պատերազմների հետեւանքով արդեն XIV դարի ընթացքում նվաճեց մի շարք երկրներ Ասիայում եւ Եվրոպայում: 1453 թ. Օսման թուրքերը գրավեցին Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը եւ վերջնականապես կործանեցին Բյուզանդական կայսրությունը: Թուրք սուլթանների ավերիչ ու աղետաբեր արշավանքները շարունակվեցին նաեւ հետագայում:

1502 թ. Իրանում հիմնվեց պարսկական նոր՝ Դզրաշենքի պետությունը, որը կոչվեց Սեֆյան:

XVI դարի սկզբներից Հայաստանին եւ հարեւան երկրներին տիրանալու համար Օսմանյան Թուրքիայի եւ Սեֆյան Պարսկաստանի միջեւ ծայր առան երկարատեւ կռիվներ: Պատերազմական գործողությունների ժամանակ նորից ավերվեց հայոց աշխարհը: Ախյանների միջեւ հաշտություն կնքվեց 1555թ.: Արեւմտյան Հայաստանը մնաց Թուրքիայի, իսկ Արեւելյան Հայաստանը՝ Պարսկաստանի տիրապետության տակ: Սակայն խաղաղությունը երկար չտևեց: 1578 թ. օսմանյան զորքերը նորից արշավեցին Անդրկովկաս եւ գրավեցին նրա մեծ մասը: Պարսկական նոր ինքնակա Շահ Աբբասը, որ գահ բարձրացավ 1578թ., ի վիճակի չլինելով դիմադրել զորեղ քջամուն, ստիպված եղավ 1590թ. կնքել նոր, ծանր հաշտություն, որով Հայաստանը, Աղվանքը եւ Վրաստանը անցնում են Թուրքիայից:

Պարսկական շահը, սակայն, որոշեց ժամանակ չափել, վերականգնել բանակը եւ հարմար պահին սկսել նոր պատերազմ: 1603թ. օգտվելով օսմանյան պետության մեջ սկսված ներքին խլրտումներից, Շահ Աբբասը շարժվեց դեպի Անդրկովկաս եւ գրավեց Աղվանքի եւ Հայաստանի մի զգալի մասը: Սեկ տարի հետո թուրքական սուլթանը մեծ բանակ ուղարկեց Պարսկաստանի դեմ: Խուսափելով կռվի բռնվել քջամուն գերագանց ուժերի հետ, Շահ Աբբասը որոշեց նահանջել եւ միաժամանակ ավերել ու սմայացնել մի շարք գավառներ, որպեսզի արշավող օսմանցիները, նրանցում չգտնելով պարեն ու օթեւան, ընկնեն ծանր վիճակի մեջ:

Շահի հրամանով 1604թ. քանդվում, ավերվում են Հայաստանի շատ գյուղեր ու քաղաքներ:

Հարկ է նշել, որ երբ 1603թ. Շահ Աբբասը վեազրավեց Թավրիզը, անցավ Արաքսը եւ խանդավառ ընդունելություն գտավ մեծահարուստ Ջուղա գյուղաքաղաքի հայ խոջաների կողմից: Նրանց կողմից Շահին ցույց տրված ընդունելությունը պատահական չէր: Թուրքական տիրապետությունից առաջ Արաքսի հովտի Ջուղա, Ագուլիս, Մեղրի, Շոռոք, Աստապատ եւ Լեհրան ավաններն ու գյուղերն իբրեւ արտոնյալ վայրեր («Խաս») ազատված էին այն տուրքերից, որ հարկադրաբար վճարում էին թուրքական իշխանություններին: Սակայն միայն հայ խոջաները չէ, որ հարկադրաբար վճարում էին թուրքական իշխանություններին: Սակայն միայն հայ խոջաները չէ, որ սրտատրոփ սպասում էին Շահին: Առաքել Դավիթեցին թվարկում է մի շարք քուրդ,

¹¹¹ قانون اساسی جمهوری اسلامی ایران، تهران، ۱۳۷۰، ص ۳۹

¹¹² Նույն տեղում, էջ 26

վրացի, հայ հոգեւոր եւ աշխարհիկ մեծավորների անուններ, որոնք ակնդետ սպասում էին Շահի ժամանումին:¹¹³

Ինչպես նշեցինք, Շահի հրահանգով հրի ու սրի մատնվեցին մի շարք քաղաքներ եւ ավաններ՝ Գանձակ, Բասեն, Խնուս, Կարին, Արճեշ, Արծկե, Բերկրի, Վան եւ այլ ավաններ:¹¹⁴

«Երեւանի բերդը գրավելուց հետո Շահը հրամայեց, որքան ժողովուրդ, որ օտարական են ու պանդուխտ, նաեւ նրանք, որ գերությունից ազատված են, լինեն քրիստոնյա, մահմեդական, թե հրեա, որոնց բերին ասպատակության, ավարառության իրենց հատկացված տեղերը գնացած խաները՝ թե Ամիր գունա իւանը, որ բերեց զանձակի երկրամասից, թե Ալահվերդի խանը, որ բերեց Արծկեից, Արճեշից, Բերկրիից ու Վանից, թե մյուս խաները, որ մյուս անգամ բերին Արճեշից, Մանազկերտից, Ալաշկերտից եւ Մակուից, թե մյուս խաները, որ այլ անգամ բերին Կարսից, Կաղզվանից, Բասենից, Կարինից, Խնուսից, եւ այլ ամենը, որ ինչ-որ տեղից եղել են, հրամայեց, որ սրանց բոլորին որոնեն գտնեն Երեւանի ցահանգում եւ ամենքին բռնե Պարսկաստան: Այս հրամանը շուտով լայն կատարվեց, նաեւ՝ երբ Շահը Թավրիզը գրավեց, մինչդեռ այնտեղ Թավրիզում էր, հրամայեց. այնտեղ եղած օտարականներին բռնե տանել Պարսկաստան, եւ այդպես էլ արին:

Երբ Թավրիզից ելավ, Նախիջեւանով անցավ, եկավ Երեւան, Նախիջեւանի օտարականները լսեցին, թե Շահը Թավրիզեցի օտարականներին (զաղթականներին՝ Է. Բ.) բռնե տարավ (Պարսկաստան), իրենց համար դա ինչ-որ լավ գործ համարեցին, նրանցից ոմանք եկան Երեւան եւ Շահին իմացրին, թե մենք նույնպես շահասեր ենք եւ կամենում ենք գնալ Պարսկաստան: Իսկ Շահը նրանց սրտին գոհացում տալու եւ նրանց նման անմիտներին խաբելու համար հրամայեց պարզել տալ նրանց. եւ տվին իննգ պարզել. նրանց վրա վարիչներ նշանակեց, որոնք նրան եւս տարան Պարսկաստան:

Եվ այս ամենը կատարվեց երկու տարում (1603, 1604):¹¹⁵

Հիշված բնակավայրերից հայ բնակչությունը տասնյակ հազարավոր զոհեր-տարավ, մեծ արագությամբ անցավ Արաքս գետը եւ ուղեւորվեց դեպի Իրանի խորքերը:

«Շահ Աբբասը Հայաստանի տարագրված հայ ժողովրդին Սպահան հասցնելուց հետո, գյուղացիների բնակության վայրը նշանակեց հետեւյալ գավառները. Լճաւ, Ալիհան, Գյանդիման կամ Ջոխաւ, Բյարվանդ, Փերիա, Բուրվարի, Գյափա, Բյազազ, Բյամարա, Մալայեր եւ Դարաղան»:¹¹⁶

¹¹³ Առ. Դավրիժեցի, գիրք Պատմությանց, Երեւան 1990, էջ 63-64

¹¹⁴ Նույն տեղում, էջ 70-76

¹¹⁵ Նույն տեղում, էջ 75-76

¹¹⁶ Հ. Տեր Հովհաննիսյան, Պատմություն Նոր Զուղայի, հ.2, էջ 295, նույնի աշխարհաբար թարգմանությունը, հ.2, էջ 320

Շահ Աբբասը բազում անգամներ է հայերին գաղթեցրել Իրան. «Եվ այս գործը, այսինքն՝ հայոց ազգին բռնե-տանելը, ոչ թե մի կամ երկու, կամ երեք անգամ արեց եւ դադարեց, այլ հավաստի գտա շատ մայրիկ, որոնք իրենք իսկ բռնե էին, սրանց հարցնելով տեղեկացա նաեւ ձեռագրերի հիշատակարաններից, որոնք կարդացի, [իմացա], որ յոթից-ութ անգամ առանձին-առանձին միմյանց հետեւից բռնե-տարել է»:¹¹⁷

Ա. Դավրիժեցին գաղթական հայերի Սպահան բնակվելու մասին գրում է. «Իսկ երբ եկավ զարնանային քաղցրաշունչ եղանակը, Աբուրուսը բեկ անունով մի այլ իշխան նշանակեցին ժողովրդին բռնե, որ կրկին սկսեց բռնե ժողովրդին մինչև տարավ, հասցրեց Սպահան քաղաքը: Այնտեղ, ովքեր քաղաքացիներ էին, նույն քաղաքում տեղավորելով բնակեցրին, իսկ ովքեր շինականներ ու գյուղացիներ էին, Սպահան քաղաքի շրջակա գավառներում բնակեցրին, այսինքն՝ Լճաւում, Ալիհանում, Գանդիմանում, Ջոխաւում, Փերիայում եւ Բուրվարիում. այդ տեղերում բնակվեցին և մնացին մինչև այսօր»:¹¹⁸

Հ. Հովհաննյանը նկատի առնելով, որ Դավրիժեցին չի հիշատակում մի շարք այլ գավառների անունները, որտեղ բնակվելի են եղել գաղթական հայեր, նաև նկատի ունենալով բազում անգամ տեղի ունեցած գաղթերի փաստը գրում է. «Այդ գաղթականների մեծ մասը եղել են գավառների ժողովուրդներ, որոնք բնակվեցին Առաքելի հիշած գավառներում: Սակայն կան ուրիշ չորս գավառներ ևս Բյազազ, Բյամարա, Գյափա եւ Դարաղան, որտեղում հայեր կան բնակված տարագրության օրերից մինչեւ այսօր, որոնց մասին Առաքելը հիշատակություն չանելով, ինձ կարծել է տալիս թե այդ գավառների բնակիչները այս գաղթականությունից չէին, այլ մի առանձին հատված, որ հետագայում տարագրվելով բերվել են Պարսկաստան և բնակվել այդ չորս գավառներում: Իմ այս կարծիքի առաջնությունը այն է, որ ինչպես Առաքելն է ասում, թե շատ պատմել ենք, որ Մեծն Շահ Աբբաս առաջինը ոչ թե երկու կամ երեք այլ շատ անգամներ հայոց ազգին Ատրպատական գավառից գաղթեցրեց Պարսկաստան»:¹¹⁹

Ինչպես Սպահանի շրջանի յոթ գավառների (Լճաւ, Ալիհան, Գյանդիման, Ջոխաւ, Բյարվանդ, Փերիա եւ Բուրվարի) այնպես էլ Բյամարայի հայ բնակիչները Հայաստանի գյուղացիներից են, բայց ստույգ հայտնի չէ թե հայրենիքի, ո՞ր շրջանից են եղել:

Գավառների բնակիչները Հայաստանի, որ շրջանից լինելու մասին Մկեղիտ գյուղի քահանա Տեր Քերովքե Շահբազյանը իր հուշերում գրում է.

¹¹⁷ Ա. Դավրիժեցի, նշ. աշխ. էջ 147, աշխարհաբար, էջ 124

¹¹⁸ Ա. Դավրիժեցի, էջ 82, աշխարհաբար՝ էջ 47

¹¹⁹ Հ. Հովհաննյան, նշվ. աշխ. հ.1, էջ 32, աշխարհաբար՝ էջ 40

մի քերի հին ձեռագիր մի Չարմահայցի հայի տան տեսա, որը Վաստիգան գյուղի շեն ժամանակում և Տեր Սուրբազ Մելիք Պետրոսյանի ձեռքով էր գրված մոտավորապես հետեւյալը:

1603 թ. Շահ Աբբասը դիմեց Հայաստան գերիվարեց տասն և մեկ շրջանից, որոնց անուններն են. 1-Գանձակ 2-Արճեշ 3-Արժկե 4-Վան 5-Սանազկերտ 6-Ալաշկերտ 7-Կարս 8-Կաղզվան 9-Բասեն 10-Կարին 11-Խնուս:

Այս գավառներից չորսը՝ Գանձակ, Արճեշ, Արժկե և Վան, Թուրքերեն բարբառով կոչվում են Դիխրուլաղ (Քառասուն աղբյուր), Թեգաթու կամ Բուլանլու:

Մյուս չորսը, որն են Մանազկերտ, Ալաշկերտ, Կարս և Կաղզվան, կոչվում են Տուրուքերան կամ Քաջքերուհիք:

Իսկ վերջին երեքը՝ Բասեն, Կարին և Խնուս, կոչվում էին Բասեն, Բերսիմ կամ Տերսիմ:

Սույն երեք շրջանների հայերն են Փերիացիք՝ Դիխրուլաղից, Բուրվարցիները՝ Տուրուքերանից և Չարմահայցիները՝ Բասենից, որոնք

յուրաքանչյուրը ունեն իրենց առանձին գավառաբարբառները, սովորությունները եվ երկրագործական առանձին ձեւերը: Այնպես որ Բասենցիք սովորություն ունեն մի գույգ եզ լծել աղորին, Դիխրուլաղցիք՝ գոմեշ կամ չորս եզ, իսկ Տուրուքերանցիք՝ որ մոլմայես մի գույգ եզով են արոր վախում, սալ լծելու սովորություն բնավ չունեն»:¹²⁰

Պր. Լ.Գ.Մինասյանը իրավացիորեն գրում է. «Վերոհիշյալ լուսաբանությունից հետո, եթե մոլմիսկ ընդունենք, որ դա իրականություն է, կրկին վճռապես չենք կարող ասել, թե տեղիս ո՞ր գյուղի բնակիչները Հայաստանի ո՞ր գյուղացիներն են, քանզի սույն 350 տարվա մեջ, բնակիչները շարունակ տեղից տեղ եւ գյուղից քաղաք եւ քաղաքից գյուղ են փոխադրվել»:¹²¹

Քյամարա գավառի հայկական բնակավայրերի առաջացման մոտավոր թվականը պարզաբանելու համար ձեռքի տակ ունենք զանազան տվյալներ, որոնց ներկայացնում ենք ստորեւ:

1- «Արաքի եկեղեցական վարչության միջոցով կատարված վիճակագրությունը (1939 թ.) տալիս է հետեւյալ կարեկոր տվյալները: Քյամարս, Զյազազ, Գյափա եւ Բուրվարի հայաբնակ գավառների 61 գյուղերից 27-ը գուտ հայաբնակ իսկ 34-ը խառն են (հայ եւ պարսիկ) եղել:

Այս 61 գյուղերից Քյամարայում գտնվող գյուղերը հիմնադրվել են հետեւյալ դարարի ընթացքում.

- 17-րդ դարում Չարբաղ (1687 թ.) (եթե դասենք սույն գյուղը Քյամարայի գյուղերի շարքին, այն պաշտոնապես 1903 թվականից հետո է հիշատակվել Քյամարայի գյուղերի շարքում, Քյամարացիներն էլ դրան թվարկում են իրենց գավառի հաշվին մահ հարակից գավառները որոշակի սահմաններ չեն ունեցել առհասարակ ազգագրական

¹²⁰ Լ.Գ.Մինասյան, Պատմություն Փերիայի հայերի, Անթիլիաս,

Լիբանան 1971, էջ 30-31:

¹²¹ Լ.Գ.Մինասյան, նշվ. աշխ. էջ 31:

տեսակետից այնպիսի տարբերություններ էլ չկան Գյափա եւ Քյամարա գավառների միջև):

- 19-րդ դարում, Օրթաչինան (նախկինում Գյափայի հաշվին էր դասվում), Լիլիան, Դորչի բաշի, Քյանդլներ, Դավթաբաղ, Մաքի, Սգրա, Դարաշուր, Վերի Դալա.

- 20-րդ դարում, Սգրա Հոսեյն, Հաջիաբաղ, Դանիան, Ասադաբաղ»:¹²²

2 - «55 տուն է մոտավորապես Չարբաղ գյուղը որի գերեզմանաքարերից պիտի եզրակացնել թե այդ գյուղը 200 տարուց ի վեր բնակված է հայերով: 200 տարի առաջվա թվականով մի գերեզմանաքար գոյություն ունի եվ մեկ էլ 152 տարի առաջ»:¹²³

3- «Երեք հարյուր տարուց ավելի է, որ հայ ժողովուրդը հաստատվել է Փերիա, Չարմահալ, Բուրվարի, Զյազազ, Քյամարա եւ Ջափալ (Գյափա - Է.Բ.) գավառներում, պարապելով հողագործությամբ»:¹²⁴

4- «Քյամարայի շրջանի հայ գյուղացիները հիմնականում Գյափայի նախկին բնակիչներն են: Նրանք մոր վայրերում են հաստատվել ստավորապես XVII դարի կեսերին: 1932 թ. տեղի հայերը բնակություն հաստատեցին յոթ գյուղեցում՝ Լիլան, Դորչիբաշի, Չարբալ (Չարբաղ), Ռուբաթ-Քանդլներ, Մաքի, Սգրա-Դարաշուր եւ Դանիան-Մաշիան գյուղերում: Երջանի ամենամեծ հայկական գյուղ՝ Լիլանում այն ժամանակ կար 1400 բնակիչ: Մյուս գյուղերում կար 355 հայ ընտանիք: (Ալիք, 1932, փետրվարի 10 և 18):¹²⁵

5- «XVIII դ. 20-ական թվականներին աժդանների արշավանքի հետեւանքով Նոր Ջուղան ապրեց խոր անկում: Դրան հաջորդած Ֆեռալական երկպառակությունների եվ պատերազմների շրջանում նրա բնակչության զգալի մասը, հատկապես ապահովված, հարուստ խավը հեռացավ քաղաքից, առավելապես Հնդկաստան, Իրաք եւ արաբական այլ երկրներ, Կովկաս, Ռուսաստան եւ այլն: Այսուհանդերձ, Իրանում ապրող հայերի գրակշիռ մասը մնաց երկրում: Նրանք բնակչություն հաստատեցին Իրանի այլ նահանգներում և շրջաններում:

Այս տարիներին տեղաշարժեր եղան նաեւ հայ գյուղական բնակչության մեջ: Նոր Ջուղային հարակից Լճջան եւ Ալինջան շրջաններում ապրող բոլոր հայ գյուղացիները գաղթեցին դեպի արեւմուտք ու հարավ-արեւմուտք Փերիա, Բուրվարի եւ Չիարահալի շրջանները: Հաջորդ տասնամյակում հայ գյուղացիների շատ

¹²² Արթ.Հովանսափյան, Հայաբնակ գյուղերը Ալիգուդարյոզ գավառում, Թեհրան, 1975, էջ 35-36:

¹²³ «Ալիք», 1932, փետրվարի 18:

¹²⁴ «Ալիք», 1931, օգոստոսի 23:

¹²⁵ Հ.Հ.Մարտիրոսյան, «Հայերի տեղաբաշխումն Իրանում (ղեմորաՖիկ տվյալներ)» Մեթոմոլոգ եւ Միջին Արեւելքի երկրներ եվ ժողովուրդներ, հ.4, Իրան, Երեւան, 1969, էջ 156:

ընտանիքներ Բուրվարի եւ Գյափիա շրջաններից տեղափոխվեցին հարեվան Բյամարա, Բյազազ շրջանները:

Այս տեղաշարժերի ընթացքում ստեղծվում էին հայկական մոր բնակավայրեր և կամ համալրվում էր արդեն եղածների բնակչությունը:¹²⁶

6-«Բյամարա հայկական գաղթօջախների հիմնադրման մասին այսպես է գրում Ա.Քեզիջյանը. «Բյամարա գավառի հաստատումը այն ժամանակ է կատարվել, երբ Բուրվարի ծնունդների աճումը իր գազաքնակետին է հասել, ուստի Բուրվարի գավառի հայերը սկսեցին գաղթել դեպի հյուսիս եվ հաստատվեցին Սալաքի գավառակում, ապա նույնությամբ հաստատվեցին Բյամարա գավառում:

Բարեբախտաբար Բյամարացիները գիտակից լինելով, մեծ մասամբ իրենց բնակության հաստատման մասին տեղեկություններ ունեն, այսպես մի օրինակ հիշենք Շահբազ Գրիգորյանի հուշերից: Նա ծնվել է Բյամարա շրջանի Լորչիբաշի գյուղում, նա ունենալով մի համառոտ ձեռագիր գրված անցյալից, ուներ նաեւ մեծերի բերն-բերան փոխանցված լավ տեղեկություններ, որոնք ժառանգություն էին հասել իրեն եվ ինձ շատ տեղեկացրին:

Բյամարա գավառի առաջին հայ բնակության հիմքը դրվեց Վերին Դալա գյուղում, գրեթե Լորչիբաշի գյուղից երեք վերստի տարածության վրա, դեպի արեվմուտք եվ բաղկացած է եղել 25 ընտանիքից: Նրանց գաղթը կատարվել է Բուրվարի գավառից, կարճ ժամանակամիջոցում հիմնադրվեց Լորչիբաշի գյուղը, ունենալով ոչ ավել քան 10 ընտանիք եվ բոլորը գաղթած Դարաբաշի գյուղից, այս 10 ընտանիքից մի ընտանիք եղել է Շահբազի մեծ պապ Բաբախանը:

Դրանից առաջ տեղեկություններ ինձ բավարարություն չտվեցին, ավելի խորը գիտելիքի համար դիմեցի Բյամարա շրջանի գյուղատեր Դալայի ընտանիքին, քանի որ նրանք ավելի հաստատ փաստեր կունենային:

1970 թվականին Արշավիր Շահբազյանի հետ որոշեցինք միասին ճամբորդել նրանց բնակավայր Խոմենյ խաղաք: Քաղաքը գիշերելուց հետո, առավոտյան գնացինք Դարաբաշի խան Դալայի տունը, նրա տանը թեյով հյուրասիրվելուց հետո, մեր ճամբորդության նպատակը բացատրեցինք նրան, նա պատասխանեց. «Ձեր ցանկացած լիվ ինձ մոտ է, ես արդեն գնում եմ Լորչիբաշի գյուղի մոր պարտեզը, դուք պիտի ինձ հետ գաք եւ ձեր պահանջածը, գրավոր փաստերով տրամադրելու եմ ձեզ»:

Ահավասիկ, երկու օր հյուրասիրության ընթացքում, նա իրենց փաստերից գրավոր պատճեն հանձնեց ինձ, անգամ բերն-բերան ժառանգ մնացած պատմվածքներից էլ ներկայացրեց, նրա գրվածքների եվ բանավոր պատմվածքները հետեվյալն են.

Բյամարա գավառի հայ բնակության հաստատումը սկսվեց Սալաքի խան Դալայի օրօք, որը Բյալիմխան քաղաքի գորավարներից մեկն էր: Նախքան հայերի բնակության հաստատելը, մի քանի հոգի Բուրվարի գավառից գալիս են Սարթիխի խանի մոտ եւ իրենց բնակության համար դիմում ներկայացնում: Սալթիխի խանը ընդունելով

դիմումը եվ բնակության տեղը որոշելուց հետո, խոստանում է նրանց համար ամենալավ տեղ ու տիրակալ դառնալ:

Ի միջի այլոց, Բյամարա գավառի ընդարձակ կալվածների մեծ մասը պատկանել է Սարթիխի խանին: Գավառն ընդարձակ ու ջրառատ լինելով քիչ բնակիչ է ունեցել, երբ Վերին Դալա գյուղը հիմնադրվեց, գյուղացին ու գյուղատերը կարողանում են միմյանց ճանաչել ու փոխադարձ վստահություն չափել, ուստի Սարթիխի խանը հայերի հետ որոշեց որքան հայեր փոխադրվեն, նա բոլորին էլ բնակեցնի գավառում:

Նրա պաշտպանությունը եվ գավառի առատությունը նկատի ունենալով, Դարաբաշի գյուղից մի քանի հայ ընտանիք գաղթում եվ հաստատվում են Լորչիբաշի գյուղում, իրենց այդպես արագությամբ գաղթելով 10 տարվա ընթացքում հաստատվեցին չորս հայաբնակ գյուղեր Վերին Դալա, Լորչիբաշի, Բյանդլներ եվ Լիլիհան:

Լիլիհան գյուղը որ ժամանակին դարձավ ամենաբազմաբնակ գյուղը, ունեցել է մի քանի պաղաղ արքայուհիներ, առատաջուր գետեր, ընդարձակ ցանկելիք հանդ ու դաշտ...

Արդեն մեզ հաստատ փաստվեց, որ Բյամարա գավառի հայ բնակության հաստատումը եվ հայերի տեղափոխությունը կատարվել է

Քերիմ Խանի¹²⁷ ժամանակ, որովհետեւ միեւնույն պահին Բյարվանդ

գավառից տասնյակ հայ ընտանիքներ առանց ուղղության, իրենց տուն ու տեղը թողնելով պարսիկ դրացիների օգնությամբ քոչում են դեպի արեվմուտք կողմերը, քանի ցերեկ ու գիշեր ճամբորդելուց հետո, հասնում են Դեյմով¹²⁸ գյուղը եվ մի խումբ հասնում է Բյամարայի շրջանի

առաջին հանդիպող գյուղին: Մադաբադին եվ հաստատվում այնտեղ:

Նրանք, որ իջնում են Դեհնով գյուղը, նույնությամբ շարունակում են իրենց առօրյա գործերը, նրանք մինչ վերջերս էլ հաստատ պահեցին իրենց բնակությունը սակայն մինչ այժմ էլ նախկին հայ բնակիչները նրանց անվանում են Բյարվանդից:

Իսկ Մադաբադ գյուղի իջնողներից Գրիգոր Գրիգորյանի մեծ պապի ընտանիքին է եղել, որը բաղկացած էր չորս եղբայրներից և բոլորն էլ ընտանիք կազմած են եղել:

Համաձայն Գրիգոր Գրիգորյանի, որ ծնված ու սնված է Բյամարա գավառի Բյանդլներ գյուղում, որի ընտանիքը Բյարվանդ գավառից գաղթելով բնակվել էր Բյանդլներ գյուղում, նրանք հաջորդաբար իրենց բնակության գոյությունը պահպանել են մինչեւ 1946 թվականի ներգաղթի օրերը, եվ ամենալավ տեղեկություններն ունեն:

Երբ Բյարվանդ գավառի հալածանքը սկսվեց, գյուղացիները խմբերի բաժանվելով, տեղացի դրացի պարսիկների օգնությամբ գիշերով քոչում եվ անհայտ ուղղությամբ դեպի արեվմուտք իրենց ճամբան շարունակում եվ հասնում են Բյամարա գավառի Մադաբադ գյուղը եվ իջնում այնտեղ, լսելով թե այդ գավառը պատկանում է Սարթիխի խանին եվ հայեր էլ բնակված են:

Նրանցից երկու հոգի գնում են Սարթիխի խանի մոտ եվ դիմում նրան բնակության համար, Սարթիխի խանը նրանց խորհուրդ չի տալիս

¹²⁶ Հ.Հ.Մարտիրոսյան, Իրանահայ գաղութի պատմությունից (նորագույն շրջան), «Մեթուսիսի եվ Միջին Արեւելքի երկրներ եվ ժողովուրդներ», VIII, Իրան, Երեւան, 1975, էջ 195-196:

¹²⁷ Շն. Թվականը 1707, գահի նստելը 1749, մահը 1779 թ.:

¹²⁸ Դեհնով՝ Բուրվարի գավառի գյուղերից:

Մաղաքադ գյուղում բնակվել, քանի որ գյուղի կլիման հային վայել չի լինում, հայտնում է նրանց որ իր գավառը լինդարձակ է եվ շատ հասութաբեր բայրեր է ընդգրկում, ուստի «գնացեք որոնեք եվ ձեր ուզած վայրը ընտրեք, ես ձեզ բնակեցնելու եմ:»

Հայերը ամեն վայրեր գլանուց ու տեսնելուց հետո, ընտրում են ներկա Բյանդյուն գյուղի տեղը, որն ավերակ էր:

Նախկինում Բյանդյուն գյուղը եղել է մի շեն գյուղ, սակայն դեպքերի բերումով ավերակ է դարձել, քայց ունի մեծ գետնափորներ, որոնցից շատերը երկարում են ամհայտ ուղղությամբ, անգամ այս գետնափորներից ներս գնալու փորձեր շատ են եղել, քայց օդի պակասի պատճառով մարել է ձեռքի ճրագը: Ավերումը ե՞րբ է տեղի ունեցել պարզ չէ, ամեն ինչ մոխիր էր դարձել եվ ձեռք տալուց փշրվում էր:

Գյուղացիները, գյուղի մեղմ կլիման, պաղ աղբյուրները, արգավանդ հանդերն ու դաշտերը նկատի ունենալով, հավանում են այդ տեղը ել դիմում Սարքիփխանին: Վերջինս էլ համաձայնվելով, հայերի հետ միասին իսկույն վերանորոգում է գյուղը:

Գյուղում քանդվածներ ու գետնափորներ շատ լինելով, դա առհավետ կոչվում է Բյանդյուն:

Համաձայն Ֆարաջուխան Դալայու գրվածի, Լիլիհան գյուղի հիմնադրումը կատարվել է Բյանդյունից հետո, որը համապատասխանում է Գ. Գրիգորյանի պատմվածքին...¹²⁹

Բյանարան իր կանգուն և շեն օրերում բաղկացած էր 13 մեծ ու փոքր գյուղերից, մասամբ պարսկախառը, մասամբ էլ զուտ հայաբնակ: Պարսիկները լինելով համեստ ու աշխատասեր, հայերի հետ եղել են բախտակից եվ նրանց համակիր:

Հայկական գյուղերը սրանք են եղել. 1-Լիլիհան 2-Լորչիքաշի 3-Չարթաղ 4-Սաքի 5-Դովթարաղ 6-Բյանդյուն 7-Մագրա 8-Մագրահոսեյն 9-Դալաշուր 10-Դավուդարաղ 11-Դանյան 12-Դեհաֆիղ 13-Դարաշուր:»¹³⁰

7- Ա.Բեգիջանյանի հիշատակած Ֆարաջուխանի գրած պատմության մեջ այսպես ենք կարդում.

«Պատմություն հայերի գաղթի Բյանարա գավառը .

¹²⁹ Սարքիփխանը սիրով ու բարիացականությամբ է վերաբերվել հայության հետ: Բազիկը բերել է մի հետաքրքրական նմուշ այդ մոտեցումից. «Երբ Լիլիհան գյուղը հագիվ էր բաղկացած 20 ընտանիքից եւ որոնք լծվել էին առօրյա գործերին, մի հայ գյուղացի Թեախ անունով իր արտը ջրեղուց է լինում, նույն ժամանակ մի գունդ զինվորներ իր արտի կողքով անցնելիս նրա տրեխները (շարուղ) արտի բմբից վերցնում եմ տանում եմ: Երբ այս բանը լսում է Սարքիփխանը, իսկույն երկու հոգի իրենց մարդկանց հետ միասին ուղարկում է զինվորներին հետեվելու, նրանք Մալայեր քաղաքում հասնում են նրանց եվ տրեխները հետ վերցնում: Գյուղացիները Սարքիփխանին կշտամբում են քե՛ «Մի անարժեք բանի համար հարյուրավոր ծախսեր է անում» նա որպես մի բանվորաց անձ այսպես է պատասխանում. «Եթե այսօր մի անարժեք բանի հանդեպ անուշադիր լինեմ, վաղը չեմ կարող վատապալիր հային ու նրա ինչքերը պաշտպանեք»: (Բազիկ էջ 294):

¹³⁰ Անդրանիկ Բեգիջանյան, Բազիկ, Նոր Ջուղա, 1979, էջ 288-296:

Մոտավորապես երկու հարյուր տարի առաջ էր երբ հայերի երեք՝ ա.տանուտների հեղինակության ք. Կլիմայի եւ գ. առատ ջրի պատճառներով գաղթեցին Բյանարա:

Քիչ քվով հայեր Բուրվարի գավառից եկան Դալայի (Բյանարայի շրջաններից մեկը), եվ որովհետեւ Դալայում հողն ու կլիման հարմարավետ էին այստեղ հաստատվեցին... համագուցյալ հաջի Սաքիփխանը Բյանարայի ստորաբաժնի հրամանատարն էր եվ սիրում ու հարգում էր հայերին: Նա միշտ իր տղա՝ Հաջ Մահմեդխանին պատվիրում էր հայերին որպես իր եղբայրներ ու քույրեր սիրի եվ նրանց պաշտպանի. դժբախտաբար մուսուլմանները զանգատվում են Կաջաղը Աղամահմեդ խանին քե ինչու են հայերին քույլ տվել Բյանարա մուտք գործել, նա էլ որովհետեւ Սարքիփը պաշտոնանկ էր եղել Բյանարայի գորաբաժանումի հրամանատարությունից եվ հատուկ սեր էր տածում անդեպ հայերը ավելի շատ ստիպեց եվ առավել եկս հայերի հանդեպ ուշադիր եղավ, ուստի հայերի քիվը Վերին Դալա, Լորչիքաշի եվ Մաղաքադ գյուղերում հետզհետե ստվարացավ եվ էլ ավելի գաղթեցին այստեղ...»¹³¹

Ինչպես տեսանք, ըստ Արաքի եկեղեցական վարչության վիճակագրության, Լիլիհան, Բյանդյուն եւ Բյանարա գավառի հայկական մյուս գյուղերը հիմնվել են 19-րդ դարում: Մա չի համընկնում իրականության հետ, բերենք միայն երկու փաստ. Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի Ներսես Շնորհալի մատենադարանի արխիվում պահվող Բյանարա գավառի նամակների ամենահինը պատկանում է 1798 թ. (նայել՝ հավելված 1, փաստաթուղթ No.1), այս նամակում Լիլիհան գյուղի քահանա Խաչատուր Տ.Հովհաննիսյանը դիմել է Ն.Ջուղայի առաջնորդին, ուրեմն կարելի է վստահանալ, որ 18-րդ դարում գոյություն է ունեցել հայկական Լիլիհան:

Ըստ Բյանդյուն գյուղի նախկին բնակիչ Ավետ Ավետյանի իր ընտանիքի վեց սերունդը ապրել են այդ գյուղում եվ ինքը յոթերորդ սերունդն է համարվում: Նա ծնել է 1920 թ. եթե միջին հաշվով 30 տարի նկատի ունենանք յուրաքանչյուր սերունդի համար, ուստի իր ազգի առաջին սերունդը, պիտի ծնված լինի սրանից 259 (6*30+(1999-1920)=180+99=259)տարի առաջ, այսինքն մոտավորապես 1740 թվականին:

Ըստ Ալիք օրաբերի 1932 թ. փետրվարի 18-ի հոդվածի, կարելի է եզրակացնել, քե 1732 թվականից առաջ հայություն է ապրել Չարթաղ գյուղում, Արաքի եկեղեցական խորհրդի հաղորդած տվյալն էլ (1687 թ.) միանգամայն ընդունելի է քվում:

Ըստ Ալիք քերի 1931 թ. օգոստոսի 23-ի հոդվածի, մոտավորապես 1631 թվականից հայերը բնակվելիս են եղել Բյանարայում:

Ըստ Հ.Հ.Մարտիպոսյանի, հայերը 17-րդ դարի կեսերին են հաստատվել Բյանարայի գավառում: Նույն հեղինակը իր մյուս հոդվածում ավելացնում է, որ մոտավորապես 17-րդ դարի երկրորդ տասնամյակում հայ գյուղացիներից շատ ընտանիքներ Բուրվարի եվ Գյափա շրջաններից տեղափոխվում են հարեվան Բյանարա եվ Բյազազ շրջանները, ստեղծելով նոր բնակավայրեր եվ կամ համալրում արդեն եղածները:

¹³¹ Ա.Բեգիջանյան, Բազիկ, էջ 292

Հստ Բագիկի եւ Ֆարաջուխանի գովածքի (որը մոտավորապես սույն դարի կեսերին է գովել) հայերը Զերին Խանի օրօք այն է՝ 18-րդ դարի կեսերին են Բյամարա գավառում հաստատվել:

Առաքել Դավրիժեցին Փիլիպոս կաթողիկոսի համեմարարությամբ 1651 թվականին սկսում է իր աշխատանքը եւ 1655 թվականին դադարեցնում, սակայն Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի ստիպումով 1658 թ. նորից շարունակում է իր պատմությունը եւ 1662 թ. ավարտում դա. նա գրել է 60 տարվա պատմություն 1602-ից մինչեւ 1662-ը:

Ինչո՞ւ Դավրիժեցին չի հիշատակել Բյամարա, Գյափլա եւ Բյազազ գավառները, նախ որ ըստ երեկույթի Շահ Աբբաս Ա-ի մահից հետո մինչեւ Դավրիժեցու պատմության ավարտման թվական (1662) նշանակալից գաղթ Հայաստանից դեպի կենտրոնական Իրան տեղի չի ունեցել, ապա կարելի է եզրակացնել որ հիշվաց գավառների հայերը հենց Շահ Աբբասի բռնագաղթի ժամանակ են անցել Իրան, սակայն ոչ թե առաջին գաղթի այլ մույն ժամանակշրջանում տեղի ունեցած մյուս տեղաշարժերի ընթացքում են Իրան անցել, քանի որ Դավրիժեցին գրում է. «Եվ այս գործը, այսինքն՝ հայոց ազգին քշել-տանելը, ոչ թե մի կամ երկու, կամ երեք անգամ արեց եւ դադարեց, այլ հավաստի գտա շատ մարդիկ, որոնք իրենք իսկ քշված էին, սրանց հարցնելով տեղեկացավ նաեւ ձեռագրերի հիշատակարաններից, որոնք կարդացի, (իմացա), որ յոթից-ութ անգամ առանձին-առանձին միմյանց հետեւից քշել-տներել է:»¹³²

Այսպիսով հաղորդակցական կապերի աղության կամ չգոյության պատճառով գուցե նաեւ այն պատճառով որ պատմագիրը տևաճությամբ է ընդունել պատմության շարադրելու համեմարարությունը քանի որ Փիլիպոս կաթողիկոսի մահվանից հետո դադարեցրել է իր աշխատանքը եւ միայն Հակոբ Ջուղայեցի նորընտիր կաթողիկոսի ստիպումներով է, որ երեք տարի ընդհատումից հետո, 1658 թվականին շարունակել է աշխատությունը, հավանաբար Դավրիժեցին թերացել է մյուս գաղթերի տարագիր հայության մոր բնակավայրերի նաեւ նրանց ծննդավայրի եւ գամազան հարցերի մասին մանրամասն տեղեկություններ հաղորդելու:

Նոր գաղթաց հայ գյուղացիությանը մինչեւ իր ցանկալի եւ հարմարավետ բնակավայրերի գտնելը (գյուղատնտեսական, կլիմայի եւ հասարակական ավելի ազատ միջավայրերի քերտմով եւ ավելի ապահով շրջաններ հեռու կեղեքիչներից) պարտավոր է եղել մի առ ժամանակ նոր բնօրրան գտնելու մտադրությամբ շրջանից շրջան եւ գյուղից գյուղ տեղափոխվել կամ նոր գյուղեր հիմնադրել, ինչպիսին տեղի են ունեցել Բյամարա գավառի գոտ հայաբնակ գյուղերի հիմնադրումով (Բյանդներ, Լիլիհան, Դավութբաթ, Դալաշուր, Մազրա, Զարթաղ):

* * *

Մեծանուն վիպասան ԲաժՖին իր «Դավիթ Բեկ» պատմական վեպում հիշատակել է Բյազազն ու Բյամարան. «Մելիք Ֆրանգյուլը իր

¹³² Ա. Դավրիժեցի, Գիրք Պատմության, էջ 147, աշխարհաբարլ՝ էջ 124:

մանկություն հասակում գերի ընկավ և տարվեց Պարսկաստանի Մպահան քաղաքը: Այնտեղ Մպահանի արքայազուններից մեկը որդեգրեց նրան և մի իմաստուն մուլայի համեմելով, կրթեց արաբական և պարսկական լեզուների դպրության մեջ: Հետո իր աղջիկը նրան կնության տալով, նշանակեց նրան Մպահանի հայոց քաղի (Նոր Ջուղայի) քեզեր-քեյ: Այնուհետև նա Մպահանի մահաճում հայոց Բազազ և Բամարա գավառների կառավարիչը դարձավ: Այդ բոլոր պաշտոնների մեջ տանջելով, կոռուպտելով ժողովրդին, մեծ հարստություն դիզեց»¹³³:

Ինչպես նախորդը նկատել էինք, ժամանակի ընթացքում Բյամարայի հայկական գյուղերի թիվը շատացել է: Այսպես, 1916-ին երբ համաշխարհային առաջին պատերազմի ալիքը հասնում է Պարսկաստան, կենտրոնական կառավարությունը ի գործ է լինում կառավարել երկիրը: Ամեն տեղ կոռուպտ էր ու քալան, գյուղացին չունեւ ոչ մի ապահովություն, իսկ հայ գյուղացիների այս անտանելի կացության վրա ավելանում էր այն սարսափելի եւ սրտակեղեք լուրերը, որոնք հասնում էին Արեւմտյան Հայաստանի հայկական կոտորածներից:

Ուստի Բուրվարի գավառի Սանգսֆիդ գյուղի որոշ բնակիչներ որոշում են թողնել գյուղը եւ տեղափոխվել մի ուրիշ ապահով գյուղ: Նրանք դիմում են մեծահարուստ կալվածատեր եւ Բախտիարի ցեղապետ Մորթեզա Դուի Խանի ներկայացուցիչ՝ Նասրոլլահ Խանին, որ իրենց սեփական գյուղերից մեկում բնակության տեղ տա:

Լիազոր ներկայացուցիչը սիրով ընդունում է նրանց առաջարկը եւ Բուրվարի Բյամարա գավառների միջապահմանում ընկած Նասրաբադ գյուղը, պարսիկ հողագործներից դատարկելով, հանձնում է նրանց: 1917 թ. գարնան 30 հայ ընտանիք հաստատվում են Նասրաբադում, որը հաշվի է առնվել Բյամարա գավառի գյուղերի շարքին:

Բյամարա հաստատված հայերը առաջին իսկ օրերից աշխատել են իրենց համար բարեկեցիկ եւ խաղաղ կյանք ստեղծել: Սակայն այդ խաղաղ կյանքը մեկ-մեկ եւ երբեմն զոհ է գնացել տարբեր ժամանակաշրջանների տիրապետների հակասական վերաբերմունքի: Այդ մասին բազմաթիվ վկայություններ կան առհասարակ իրանահայ համայնքում, եւ իրենց ամենաառաջին օրինակ կարելի է ներկայացնել Շահ Աբբասին: Նա մի կողմից հայ գաղթականներին թույլ է տալիս ստեղծել Նոր Ջուղան, կառուցել եկեղեցիներ, մույնիսկ հայության եւ ավելին կապելու համար նոր բնակավայրերի հետ հորամայեց Էջմիածնից եկեղեցական քարեր բերել Իրան, եւ միեւնույն անձնավորությունը հրամայեց Փերիա եւ Բուրվարի շրջաններում բռնի կրոնափոխ անել որոշ գյուղեր՝ թե աշխարհական եւ թե իռզեվորական հայերին:¹³⁴

«Թագավորի հրամանի հետեւանքով մեծ հալածանք գործվեց հայոց դեմ. այնպես որ թողեցին տներ, ընտանիքներ, ունեցվածքներ եւ ելան ցրվեցին իրենց երեսի կողմը լեռներում, անապատներում, անմարդաբնակ տեղերում: Շատերը գնացին հեռավոր

¹³³ ԲաժՖին, հատոր 6, «Դավիթ Բեկ, պատմական վեպ, 1722-1728», էջ 111:

¹³⁴ Ա. Դավրիժեցի, գլուխ 14:

զավառները, փոխեցին անունները, կերպարանքները եվ այդպես մնում էին ամճանաչելի: Նրանցից ոմանք շատ օրեր քաղցելով ու սովալլով լինելով քափառական շրջում էին լեռներում եվ չէին կարողանում շենքեր մտնել, կամ որևէ մեկին երեվալ, քագաովրի ու քլպատողների երկյուղից:»¹³⁵

Շատ հավանական է, որ այդ տուժածները տեղափոխվելով դեպի հյուսիս եկել եվ հաստատվել են Բյամարա գավառում, ինչպես ծիշտ է նկատել արդեն հիշատակված Հ.Մարտիրոսյանը:

Մենք արդեն մախոթը բաժիններում համատոտակի խոսել ենք իրանահայության ընդհանուր վիճակի մասին մեծ զաղթից հետո մինչեվ մեր օրերը եվ այդ մասին բազմիցս գրել են զանազան բանասերներ ու պատմագիրներ, ուստի այստեղ միայն հարկ ենք համարում կանգ առնել այն անցողորժների վրա որոնք տեղի են ունեցել Բյամարա գավառում, թեեվ պիտի խոստովանել հնագույն ժամանակներից այնպիսի վկայություններ չեն մնացել, որպեսզի կարողանանք որպես փաստ օգտագործենք եվ հետեվություններ ունենանք, սակայն այն ինչ, որ գրի է առնվել կամ գավառի ծերուկները բանավոր պատմել են մեզ, կարող ենք ակնարկել:

Երբ հայելը հաստատվում են Բյամարայի գյուղերում, տեղացի պարսիկները հայկական բնակչության աճը նկատի ունենալով նաեվ այն պատճառով որ գյուղատերը հատուկ ուշադրություն ուներ հանդեպ նորեկ հայերը գանգատ են տանում Աղամահմեյ Խան Կաջարի մոտ, որը միշտ պատերազմական բախումներ է ունեցել Քերիմխանի հետ (1758 թ.): Վերջինիս մահից հետո (1779 թ.) Աղա Մահմեյ Խանը երկրի մեծ մասը գրավելով 1794 թ. իրեն շահ է հռչակում եվ սկսում է Քերիմխանի կողմնակիցներին ասպարեզից հեռացնել: Այս իրադարձությունը բարենպաստ պայմաններ է ստեղծում Բյամարայի պարսիկների համար, ուստի նրանք մի համրագրություն են ներկայացնում Խոմենյի քաղաքապետին եվ նրա օժանդակությամբ հանրագրությունը հանձնում Աղա Մահմեյ Խանին, մա էլ հայերի պաշտպան արդեն հիշված Մարթիփխանին կալանում եվ բանտն է նետում:

Հայերը տեղեկանալով, ձեռնարկում են մի հանրագրություն պատրաստել եվ հանձնել Նոր Ջուղայի հայոց առաջնորդին: Նրանք զգուշացնում են, որ Մարթիփխանի ոչնչացումով, Բյամարա գավառի հայերի կյանքը վտանգի մեջ էր ընկնելու: Առաջնորդը հայերի հանրագրությունը հանձնում է ռուս հյուպատոսին եվ Մարթիփխանին բանտից ազատելու համար միջնորդում է: Հայերի այս վեհ վերաբերմունքի պատճառով, վերջինիս մտերմությունը հայության հետ ավելի է խորանում:

Մարթիփխանին հաջորդում է նրա որդին՝ հաջի Մուհամմադ Բադեր Խանը: Նա էլ կարգելով իր հոր կտակը, ավելի գերազանց վերաբերմունք է ցուցաբերում հանդեպ Բյամարայի հայերին:

Բադր Խանին հաջորդում է իր տղան՝ Աբբաս Խանը: Սա մանկությունից շփվել էր հայ խաղընկերների հետ եվ սովորել էր հայերենը: Նրա օրոք հայության թիվը ավելի է աճում, մասամբ բնական

ծնունդից, մասամբ էլ Բուրվարի գավառի հայերի տեղափոխությանը: Բյամարայի հայերի համար մի քարեբաստիկ խորհրդանշան է տեղի ունենում, երբ հայասեր Աբբասխանը դառնում է Խոմենյի քաղաքապետ (ինչպես մախոթը հիշատակել էինք, հայկական գյուղերը գտնվում էին Խոմենյի քաղաքի մոտակայքում):

Բյամարա գավառի հայություն, ընդհանուր առմամբ ունեցել է խաղաղ եվ հանգիստ կյանք: Տեղի պարսիկ հարեվան գյուղերի հետ առանձին հարցեր եվ դժվարություններ չեն ունեցել:

Բյամարայի հայերը հայ մշակույթին վայել ստեղծել եվ զարգացրել են իրենց նորաշեն գյուղերը, ինչպիսին անում է զարգացած մի ժողովուրդը, բայց ճամբորդները հիացմունքով են արտահայտվել ինչպես հայկական մյուս գավառների այնպես էլ Բյամարա գավառի գյուղերի մասին: «Լիլիհան գյուղը մուտք գործելիս, կարծես մի պայթյուն տեղի ունեցավ սրտումս, երբ հանդիպեցի ժողովրդին ու գյուղին, կարծես մի քաղաք էի մտնում, ժողովրդի լուսավորությունն ու քաղաքավարությունը, գյուղի փողոցների ու տների սիրունությունը եվ այն, ինձ հիացմունք պատճառելով, ապշած մայում էի ժողովրդի քաղաքածեվ հագուստներին...»:¹³⁶

Բյամարա գավառը հատկապես Լիլիհանն ու Ղորչիբաշին գտնվելով Սուլթանապատ եվ Խոմենյի քաղաքների միջեվ, առիթ են ստեղծել գյուղաբնակ հայերը հաճախ հաղորդակցվեն այդ քաղաքների հետ եվ այդպիսով ընդօրինակեն քաղաքաբնակ ժողովրդի մշակույթն ու վայրը ու բարքը:

Լիլիհան գյուղը շնորհիվ իր առատ ջրերի ու արգավանդ հողերի, էլ ավելի ժողովուրդ էր գրավում իր մոտ եվ այսպիսով գնում էր մրցելու քաղաքների հետ:

«Այս գյուղն ունեցել է քաջ ու կտրիճ Ֆիդայիներ ու մտավորականներ, Եփրեն Խանի օրոք Լիլիհանից մի քանի հոգի մասնակցում են սահմանադրական հեղափոխության կռիվներին...»:¹³⁷

«Երկրի տագնապալի եվ խառնակ օրերում, գյուղի պաշտպանության համար հաճախ պատրաստված էին կեղեքիչ ավազակների դիմակայելու...»:¹³⁸

Տարածաշրջանի գյուղական բնակավայրերը հաճախ ավազակների հարձակման թիրախ էին դառնում:

Կաջարների իշխանության վերջին օրերում, անկայուն վիճակ էր տիրում ամբողջ երկրում: Յուրաքանչյուր ցեղապետ աշխատում էր նոր եվ բարձր դիրք ապահովել մայրաքաղաքում: Այդ պատճառով իրենց գյուղերը մատնվել էին անուշադրության: Ամեն մի անկյունից գլուխ էին քարձրացրել զինված ավազակախմբեր, որոնք թալանում եվ կողոպտում էին անգնե եվ անպաշտպան գյուղացիության:

¹³⁶ Անդրանիկ Բեգիջանյան, Բագիկ, Նոր Ջուղա, 1979, էջ 273:

¹³⁷ Բագիկ, էջ 279:

¹³⁸ Ա.Ամուրյան, Հ.Հ.Դաշնակցությունը Պարսկաստանում, Թեհրան, 1950, էջ 144:

¹³⁵ Նույն տեղում:

Այդ ավագակապետներից ամենագորեղն էր Ռաջաբալի Խանը: Նա իր շուրջն էր հավաքել 300-400 զինյալ մարտիկ եւ ասպատակություն էր մատնում գյուղ եւ քաղաք: Նրա արշավախումբը 1917 թ. դեկտեմբերին մտնում է ներքին Բուրվարի, իսկ 1918 թ. հունվարի վերջերին հասնում Բյամարայի սահմանը:¹³⁹

«Ռաջաբալի ավագակապետը բոլոր շրջանները սարսափի էր ենթարկել, բարեբախտաբար Լիլիհանի գյուղացիք շնորհիվ իրենց հեռատեսության, հենվեցին իրենց սակավաթիվ ուժերի վրա, զենք բանեցնելը մեղք չհամարեցին եւ ելուզակ կեղեքիչների գերազանցող ուժերին սարսափի ենթարկեցին, անգամ շրջապատի հայ գյուղացիները իրենց արժեքավոր ինչքերը փոխադրեցին Լիլիհան գյուղը:

Ռաջաբալի ավագակապետը, որ ողջ շրջանն ու քաղաքը ասպատակության էր ենթարկվել, Լիլիհան գյուղի հեռոսական ընդլիմության, եւ կազմակերպվածության պատճառով սարսափի մատնվելով, հաճախ կամենում էր հարձակվել, մանավանդ երբ լսում է մյուս գյուղերի ինչքերի պաշտպանության լուրը, ավելի էր զագագում, վրդովված դառնում է ինչ գնով որ լինի հարձակվի եւ գյուղը շրջապատի:

Գերազանց ուժի տեր այս հեկուզակը, որ կարողացավ Խոնսար քաղաքը գրավել, արդեն Լիլիհան գյուղը գրաված է համարում: Խոնսար քաղաքի գրավման առիթով կա հետեւյալ ոտանավորը.

Ալիգուլարդ ջով դադում,
Վիսթ ռեսիդում օվ դադում,
Դովլը Խոնսար թով դադում,
Վա Խոնսար գրեթում,
Ջոնթ գեագում ըզ դասթ դադում:

Թարգմանությունը.

Ալիգուլարդ գարի տվի,
Վիսթ հասա ջուր տվի,
Խոնսարի շուրջը պտույտ տվի,
Եվ Խոնսարը գրավեցի,
Երկու եղբորս ձեռքից տվի:

Ելուզակ խառնվածքով չարամիտ եւ ազակ լինելով, չէր կարողանում Լիլիհան գյուղի հարստությունից անցնել, ուստի ծրագիր մշակեց հարձակվելու, սակայն գյուղացիները ավագակի հարձակման լուրը լսելով, իրենց կամքի ու կորովի շնորհիվ, ամբողջներն ու դիրքերը ավելի ամրապնդեցին եւ առանց վիստվելու սպասում էին հետագա իրադարձություններին:

Բյանդլներ գյուղը, որ գտնվում էր Լիլիհան գյուղի մոտակայքում, մի մեծ ճանապարհ (պարսկերենով՝ շահջադա) ուներ, հեկուզակը այնտեղ անցներ այս ճանապարհով, երկու գյուղերի բնակիչները իրար տեղյակ պահելով, որոշեցին, Բյանդլների սուրիանդակը հարձակման մասին տեղեկացնի: Այդ ընթացքում Լիլիհանի մարտիկները իրենց ամբողջներում ու դիրքերում պատրաստ սպասում էին, իսկ գյուղի մեծերը անընդհատ այցելում էին նրանց:

Այսպիսով մի օր կես գիշերին Բյունդլների սուրիանդակները ավագակների հարձակման լուրը հասցնում են Լիլիհան: Թշնամուն

իրենց երկու քայլի վրա տեսնելով կրակելու հրաման են արձակում: Ավագակապետը իրեն խիստ վտանգի եւ սարսափի մեջ տեսնելով, ստիպված նահանջի եւ փախուստի հրաման է տալիս եւ հենց այդքանից սկսում են Մագրահոսեյնի ճամբով խուճապահար փախչել: Փախչողների մնացածը ստիպված թագնվում է ծառերի մեջ, հայ մարտիկները նրանց նկատելով, իսկույն շրջապատում եւ բոլոր տասը հոգուն էլ ձերբակալում ու հանձնում են Խոնսար քաղաքի իշխանությանը:¹⁴⁰

1917 թվականի աշնանից, սկսվում է հացահատիկի ու սնունդի համար սուղ պայմաններ ստեղծվել, մինչեւ 1918 թ. երկրի կացությունը խիստ աղետալի է դառնում եւ համատարած սով է տեղի ունենում: Այսպիսով գյուղացի ժողովրդին սպառնում էին կեղեքիչ ավագակները, ավատատեր խաները եւ հիմա էլ երաշտը, սակայն այդ դժվարին օրերին շնորհիվ հայ ժողովրդական գյուղական տանուտերների (ինչպես Լիլիհան գյուղի տանուտեր Զուհու Բազիկյանը) մասամբ փրկվում է սովի ցավալի հետեւվանքներից:

Ռեզա Շահ Փեկեվիի թագավորության սկզբնական ժամանակաշրջանում, հրահանգվում է անձնագրեր տարմադրել ժողովրդին, ուստի Խոնսարի քաղաքային հարկանգվեց իրավունք տրվի Լիլիհան գյուղի տանուտեր Զուհու Բազիկյանին բոլոր Բյամարա գավառի անձնագրերի շնորհման գործը կազմակերպելու կապակցությամբ:

1901-1918 թթ. Արաքի չորս գավառների (Բյազազ, Բյամարա, Գյափլա եւ Բուրվարի) հայ ժողովուրդը ափսոսանքով է հիշում, երբ ունեցել է տեր ու տիրական հանձին Խորեն վարդապետի, 1900-ից առաջ ոչ մի հիշատակություն չկա Ազգային Կենտրոնական իշխանության կողմից հանդես աչա լքված գյուղերը, նույն վերաբերմունքի նաև 1918-ից հետո: «Երեք հարյուր տարուց ավելի է, որ հայ ժողովուրդը հաստատվել է Փերիա, Չիարմահալ, Բուրվարի, Բյազազ, Բյամարա եւ Ջափլուր գավառներում, պարապելով հողագործությամբ: Բայց քանի որ կտրված է եղել կենտրոնից՝ հարավային Պարսկաստանի թեմերից, եւ վերջինս էլ մերձեցման որեւէ քայլ չի վերցրել, գավառահայությունը մնացել է կղզիացած ու այսօր տգիտությամբ եւ հետամնացությամբ այնպիսի սրտամոխիկ ու ցավալի դրության է հասած, որ ոչ չափ ունի եւ ոչ էլ սահման...»:¹⁴¹

Արաքցիների շրջանակներում հաճախ է խոսվել Խորեն վարդապետի մասին, քանզի նա հանդիսացել է Արաքի շրջանի եւ գավառների լավագույն երախտավորը:

Նա ծնվել է 1871 թ. (ոչ թե 1872 թ. որ արձանագրվել է տապանաքարի վրա) Կարսում, մանուկ հասակում ծնողների հետ փոխադրվել է Կաղզվան, իսկական անունն է Վարդան Տեր Հովհաննիսյան՝ Վարդանյան, սովորել է Կաղզվանում, ապա Էջմիածնի Գեվորգյան ճեմարանում: 1896 թ. լինում է Թավրիզում, 1898 թ.

¹⁴⁰ Բազիկ, էջ 280-282:

¹⁴¹ Ալիք, 23/8/1931:

¹³⁹ Ա.Տեր Պետրոսյան, Հուլիս, Թեհրան. 1976, էջ 37:

Թեհրանում, մի տարի հետո Նոր Ջուղայում, այստեղ մի առ ժամանակ ուսուցչություն անելուց հետո 1898 թ. դեկտեմբերի 3-ին առաջնորդ Մադաքիա արք. Տերունյանը (Տիգրանակերտցի) նրան տալիս է հոգեվոր կոչում, ձեռնադրության րոշումը տվել է Նոր Ջուղայի վանական Խորհուրդը, վավերացված Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյանի 1899 թ. ապրիլի 23-ի կոնդակով: Նրա 18 ամյա գործունեությունը այսպես է եղել.

1900-1906 թթ. Համադանում

1906-1910 թթ. Ազնայում

1910-1918 թթ. Սուրբանաբաղում (Արաբում)

Երեքն էլ ընդգրկում են Բյազազ, Բյամարա, Գյափլա եվ Բուրվարի գավառները: 1900 թ. վերավարի 9-ին կոնդակով, ձեռնադրող եպիսկոպոսը Խորեն վարդապետին նշանակում է «Առաջնորդական փոխանորդ Համադանի եվ շրջակայքի», նա մնաց իր պաշտոնի մեջ մինչեւ վերջ: 1910 թ. հունվարի 28-ի կոնդակը նրա հիշյալ պաշտոնի վրա ավելացրեց «Սուրբանաբաղի» անունը: Նա ունի դեռևս կանգուն հուշարձաններ՝ Թեհրանի «Կրթասիրաց Միությունը», Համադանի եվ Սուրբանաբաղի «Հայ Կանանց Բարեգործական Ընկերությունները», հավաքական աշխատանքի արդյունք էին, միասնաբար օգնելու հայ եկեղեցում, դպրոցին եւ ջրավորին: Սրանց հետ եվ այլ հուշարձաններ, Համադանի ու Ազնայի դպրոցները, Սուրբանաբաղի եկեղեցին, Ազնայի բաղնիքը եվ այլն: Համադանի հայությունը դպրոց ունեցավ 1902 թ. շնորհիվ Խորեն վարդապետի:

Նոր Ջուղայի Գեվորգ Զանանյան դպրոցը դարձյալ Խորեն վարդապետի անվիճելի հուշարձանն է:

1917 թ. Խորենը Թեհրանում էր : 1918 թ.նա եվ իր գաղափարակիցները կազմեցին «Պարսկահայ Խորհուրդ»-ը որի մախազահն էր ինքը: 1918 թ. մայիսի 23-ին երբ Խորեն վարդապետը պատրաստվում էր «Պարսկահայ Խորհրդի» նիստին գնալու, դավադրաբար կոնակից արձակված գնդակը վերջ տվեց նրա կյանքին:¹⁴²

1903 թվականին Իրանա-Հնդկաստանի հայոց թեմի առաջնորդ, Սահակ Արք. Այվադյանը, Բագրատ, Խորեն եվ Եզնիկ վարդապետներին իր հետ առած հովվական շրջագայություն է կատարում իր թեմի հայաբնակ գավառները՝ Փերիա, Բուրվարի, Չիարմահալ, Բյամարա, Գյափլա, Բյազազ եվ Մալայեր: Գյուղերում բացում է աղյուսակա դպրոցներ: Նոր Ջուղայից հրավիրում է ձեռնեղեց ուսուցիչներ: Յուրաքանչյուր գավառի կենտրոնական գյուղում հիմնում է դպրոցական շենքեր: Այնուհետեւ Խորեն վարդապետ Տեր Վարդանյանին կարգում է Արաքի եվ Համադանի Առաջնորդական փոխանորդ՝ ղեկավարելու Բուրվարի, Գյափլա, Բյամարա, Բյազազ եվ Մալայեր գավառների 60.000 հայերի ազգային, կրոնական եվ կրթական գործերը:

Երջաններում ապրող իրավագուրկ հայ գյուղացուն մոտիկ լինելու համար 1907-ին անցնում է գավառ եվ կենտրոնավայր ընտրում Բյազազի Ազնա մեծ գյուղը: Չարկ է տալիս գյուղական դպրոցներին եվ ավարտում է Ազնայի եվ Լիլահանի դպրոցների կիսավարտ շենքերը, իսկ

1914-ին շրջաններից հանգանակած նվիրատվությամբ կառուցում է Արաքի եկեղեցու հոյակապ շենքը:¹⁴³

Վերացնում է դպրոցներում ավանդ դարձած ծեծը եվ պատիժը, գյուղացուն ազատում է կալվածատերերին հանձնելիք ապօրինի տուրքերից: Վերացնել է տալիս կանանց գլխի կոտերը, արգելու է նրանց բերաններին կապած օշմաղի գործածությունը: Կրճատում է յօթն օր ուղիշեր տեվոդ հարսանիքների եվ հոգեհացի մեծ ծախսերը եվ անչափահասների ամուսնությունը:

Դարերից ի վեր գյուղություն ունեցող ավագակաբար գյուղատերերը, որոնք իրենց ծառայողների հետ տգրուկի մման ծծնում էին չարքաշ գյուղացու արյունը եվ մինչեւ անգամ չէին ենթարկվում կենտրոնական իշխանության, հարկադրվում են տեղի տալ օրենսգետ եւ անձնվեր հայ վարդապետի առաջ, որն անխտիր կերպով պաշտպանում էր նաեւ պարսիկ գյուղացու իրավունքները:

Արգելք է հանդիսանում շրջաններում բողոքականության տարածման եվ նրանց թիվը իջեցնում է աննշան քանակի: Այս առթիվ «Տաթեվ Տարեցույց» 11-ը (1928 թ) գրում է. «Եթե Խորեն վարդապետը հասած չլիներ, մենք ալիտի ձեռք լվանայինք Արաքի հինգ գավառների

հազարավոր հայությունից, քանի որ տեղացի քահանաներն¹⁴⁴ անգամ մուրվել եվ փիլոնը թողնելով մտել էին բողոքական եկեղեցին, գուցե Խորեն վարդապետը ոչինչ ասելիք չունենար, եթե հայ գյուղացին ընդունելով բողոքականությունը մնար որպես հայ. սակայն այդպես չէր, պատվելիները նրանց իրենց մայր եկեղեցուց կտրելով, սպանում էին նրանց մեջ մտել ազգային հոգին:»

1913 թ. Խորեն վարդապետը Ազնայից փոխադրվում է Արաք: 1914 թ. պայթում է առաջին համաշխարհային պատերազմը: 1915 թ. բուրքական եվ գերմանական ուժերը մտնում են Պարսկաստան եվ հասնում Արաք: Թուրքերի գաղ Խորեն վարդապետի համար, որպես ռուսահայաստակի, վտանգավոր դրություն է ստեղծում: Ընդվզում են նրա դեմ վճռի կալվածատերերը: Նա թուրք եւ գերմանացի գործակալների ձեռքը չմատնվելու համար, ծպտյալ հեռանում է քաղաքից, անցնում է Լիլահան գյուղը եվ իջնում է հայտնի տաճարներ Ուստա Ղազարի եվ տանուտեր Մարգար Մարտիրոսյանի մոտ: Այնտեղից անցնում է Սանգսֆիլ:¹⁴⁵

Սակայն երբ ռուսական հաղթական բանակը մտնում է Արաք, Խորեն վարդապետը դարձյալ հրապարակ է իջնում:

1918 թ. նա գնում է Թեհրան, որտեղ նա ապրում է Խայաթ Բաշի մականունով Հայկ Մովսիսյանի տանը: Նույն տանը ապրում էր նաեւ ռուս գործի կամավոր զինվոր Ավետիս Ամանյանը (ըստ Ա.Ամուրյանի վարդապետ թիկնապահ-սպասավորը): Այս երկուսի միջեւ վեճ է ծագում

¹⁴³ Ա.Տեր-Պետրոսյան, Հուշեր, Թեհրան, 1976, էջ 27-29:

¹⁴⁴ Խոսքը Լիլահանցի Տեր Հովհաննեսի մասին է:

¹⁴⁵ Ա.Ամուրյան, Հ.Հ.Դաշնակցությունը Պարսկաստանում, Թեհրան, 1950, էջ 175: Եվ «Ալիք» 1963, հ. 262:

¹⁴² Ռ. Մաքսապետեյան, «Ալիք» 14/7/1938:

եվ վերջինս գնդակ է պարպում վարդապետի վրա, որի հետեվանքով սպանվում է քաջ եվ անձուրաց հովիվը: Ոճրագործը անմիջապես իրեն համձնում է ոստիկանության: Երկուսն էլ ռուսահպատակ լինելով, խնդիրը համձնվում է ռուսական դեսպանատան: Դեսպանատանը ոճրագործին համձնում է Բաքու գնացող անգլիական ուժերին, իսկ վարդապետի դին մեծ սուգով քաղվում է Թեհրանի Դարվազե Ղազվին քաղամասի Ս. Գեվորգ եկեղեցու քակում:¹⁴⁶

Խորեն վարդապետը ժողովրդի լայն ակնածանքն ու վստահությունն էր շահել: 1917 թվականին երբ նա հեռացել էր գավառից, Բյազազ (200 ստորագրույթ. 3 քահանա), Գյավլա (41 ստորագրույթ. 3 քահանա), Բուրվարի (84 ստորագրույթ. 9 քահանա), Զալա-Ազնա (204 ստորագրույթ. 4 քահանա), Զյամարա (48 ստորագրույթ. 7 քահանա) եվ Սուլթանաբադ (35 ստորագրույթ.) շրջաններից հայ բնակչությունը հանրագրեր ուղարկեց Թեհրանի Հայոց Համայնական Վարչության ի պաշտպանության հարգելի վարդապետի, եվ որպես բողոք առօրյա վիճակից: Հիշված Վարչությունը իր 1917 թվականի հոկտեմբերի 4-ի հայտարարությամբ դիմում է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին եվ հիշյալ գյուղացիության հանրագրերը ներկայացնում է նրան: Բյազազից գրել են. «Բարձր Խորեն վարդապետի հեռանալով Բյազազի շրջանից մի շարք հայ գյուղեր մատնվում են կատարյալ անտերության, նրա նրեկայությամբ գյուղացիության այս խոճ բուզմությունը եղել է միշտ հանգիստ եվ ազատ արտաքին ուժերի ճնշումից:»¹⁴⁷ Ի վերջո խնդրում են՝ ա.-Միմջնորդել Խորեն վարդապետ

Տեր-Վարդանյանին վերադարձնել իր պաշտոնին, ք.Չեռնարկել անմիջապես թեմական առաջնորդի ընտրության գործին: Գյավլա գավառից ժողովուրդը զանգատվում են Նոր Ջուղայի Եզնիկ վարդապետի կամ Առաջնորդարանի անգործունեության եվ անուշադրության մասին: Առաջարկում են Խորեն վարդապետին եպիսկոպոս ձեռնադրել Պարսկա-Հնդկական թեմի առաջնորդության համար:

Բուրվարի գավառից զանգատվում են, իբր թե «10 տարի է որ Եզնիկ վարդապետը պաշտոնավարում է Պարսկա-Հնդկաստանի թեմում իբրեւ առաջնորդական-փոխանող, սակայն ոչ մի գործ չի կատարել հայ ազգության համար, ոչ ինքն, ոչ խորհրդարանը: Մենք Եզնիկ վարդապետին չենք ճանաչում իբրեւ մի հասարակ վարդապետ, ուր մնա որ փոխանողի տեղ դնել: Մենք գյուղացիներս խնդրում ենք Նորին Վեհափառությունից, որ մեր հարաբերությունը կտրել Եզնիկ վարդապետի եվ Ջուղայի խորհրդարանից. միայն կամենում ենք, որ Բարձրապատիվ Խորեն վարդապետին վերստահատել դարձնել փոխանող Թեհրանի, Սուլթանաբադի եվ շրջակա գյուղերի համար:»¹⁴⁸

¹⁴⁶ Ա.Տեր-Պետրոսյան, Հուշեր, էջ 32:

¹⁴⁷ «Հայտարարություն» Թեհրանի Հայոց Համայնական Վարչության, Թեհրան, 1917 թ. հոկտեմբերի 4:

¹⁴⁸ Նույն տեղում:

Քալավա-Ազնայից էլ նույն բովանդակությամբ հանրագրություն է ստորագրվել եվ ուղարկվել:

Զյամարայի գյուղացիությունը այսպես է դիմում կատարել.

«Ի նկատի ունենալով այն անհուն զոհողություններն ու Հայր Խորենի գործունեության օգտակարությունը, մասնավորապես հայ գյուղացիության համար, սույն հավաքական գրությամբ, իրավունք ենք համարում պահանջել պատկանելի Խորհրդից, որ հաճիք Նորին Սրբություն արժանավոր անունն ես մտցնել եպիսկոպոսական թեկնածուների ցուցակի մեջ: Հայ Սուրբ իր աշակերտ գործունեությամբ մեզ երախտապարտ է դարձրել մինչև հավիտյան: Նա ապրել է մեր հոգու մեջ եւ յուր գործերով սպեղանի դրել մեզ տանջող վերքերին: Մենք գյուղացիներս խաղիսափում ենք տգիտության օրրանի մեջ և նա՛ Խորեն Հայր Սուրբը՝ լուսատու ջահեր էր վառում մեր մեջ. պատռում էր մեր միտքը կաշկանդող տգիտության թանձր ծածկոցը եվ առաջնորդում դեպի յույս եվ արդարություն:

Մենք ճնշվում ենք ինքնական եվ անգուսպ խաների քմայական պահանջների տակ եվ մա թեթևացնում էր մեր տանջանքի բեռը: Ներկա պայմաններում եվ այս սեւ օրերում Խորեն Հայր Սուրբի նման հմայք ունեցող քարձրաստիճան հոգեվորականն է, որ կարող է հայ գյուղացիության տալ փոքր անդորր, մինչև կծագի պայծառ օրերի արշալույսը:»¹⁴⁹

1917 թ. օգոստոսի 25-ի հայտարարությամբ Թեհրանի Հայոց Համայնական Վարչությունը մեջբերում է կատարում Զյամարա շրջանի գյուղացիության ուղարկված նամակը հետեւյալ բովանդակությամբ.

«Բողոք Զյամարա գավառից.

Արյեն լրանում է հինգ տարին, որ Եզնիկ վարդապետը պաշտոնավարում է Պարսկա-Հնդկաստանի թեմում, իբրեւ առաջնորդական փոխանող. սակայն այս հինգ տարվա ընթացքում մա ոչ մի էություն եվ մշամակություն չի ունեցել մեր Զյամարա գավառի հայ գյուղացիության համար...

Եզնիկ վարդապետը... ուշք չի դարձրել մեր գավառի ոչ քահանայական, ոչ եկեղեցական, ոչ դպրոցական եվ ոչ ժողովրդական խնդիրներին:

Այս բոլորը տեսնելով, մեր Զյամարա գավառի հայ գյուղացիական համայնքս պահանջում ենք Եզնիկ վարդապետի պաշտոնանկությունը...»¹⁵⁰

Արդ տեսնենք ո՞վ էր Եզնիկ Ծ.Վարդ. Երկարակեցյանը: Ավագանի անունով Մկտրիչ, ծնվել է 1871 թ. Բիթլիսում (Բաղեշ), 1895 թ. Թուրքիայի հայերի կոտորածների ժամանակ, կորցնում է ընտանիքին եվ ապաստանում Երուսաղեմ, ապա Էջմիածին: Երբ 1898 թվականին Մաղաքիա եպսկ. Տերունյանը Պարսկաստան է գալիս, նրա հետ գալիս է նաեւ Մկտրիչը եվ որպես ուսուցիչ, պաշտոնի է անցնում Նոր Ջուղայի ազգային դպրոցներում: Մեկ տարի հետո, 1899 թ. դեկտեմբերի 5-ին,

¹⁴⁹ Նույն տեղում: (Փաստաթուղթ հ. 10:)

¹⁵⁰ Թեհրանի Հայոց Համայնական Վարչություն, «Հայտարարություն» 1917թ. օգոստոսի 25, (փաստ. հ.8):

Խորենի հետ ձեռնադրվում է արեղա, 1902 թ. ստանում է վարդապետական կոչում եվ 1903 թ. նշանակվում Փերիայի եւ Չիարմահայի հոգեվոր հովիվ, ուր ցույց է տալիս մեծ գործունեություն եկեղեցական, կրթական, քաղաքական ու ինքնապաշտպանության ասպարեզում:

Նրա ջանքերով Չիարմահայում կառուցվել են «Վաչյան» եվ «Արամյան» իսկ Փերիայում Նամակերդի «Հովհաննես» եվ Բողոքանի «Հայրիկյան» դպրոցները եվ վերջինիս սբ. Դուխսու եկեղեցին:

Մահակ առաջնորդի Նոր Զուղայից գնալուց՝ 1912 թ. մինչեւ 1921 թ., Համալսն գնալը, վարել է առաջնորդական տեղապահի պաշտոնը:

1921 թ. հակառակ իր կամքի, որպես առաջնորդական տեղապահ, ուղարկվում է Համադան, բայց ունենալով խիստ հակառակորդներ 1922 թ. ապրիլի 30-ին, ահաբեկվում է մի հայ երիտասարդի ձեռքով:¹⁵¹

Ունի մի շարք ինքնուրույն եվ թարգմանական աշխատություններ, ինչպես՝ «Ուղեգրություն առաջնորդին հայոց Տ. Մաղաքիա եպսկ. Տերունյան», «Ուսումնարան շինենք», «Ալլադին եվ հրաշալի ճրագը», «Գողացված իշխանուհին», «Հնդկական հեքիաթներ» եվ այլն:¹⁵²

Թաղվել է Համադանի եկեղեցում: Ի հարգանս իրեն Նոր Զուղայի վանքի տաճարի զավթում պատի վրա, դրվել է մի մարմարյա գանձագարդարված շրջանակով քար:

Ի հիշատակ Եզնիկի, 1928 թ. վանքի «Նորաշեն» այգում կառուցվել էր մի փոքր շենք մի սրահիկով եվ մի քանի այլ սենյակներով, որը քանդվեց 1970-ական թվականներին, այդտեղից լայն պողոտա բացելու հետեվանքով:¹⁵³

Ինչպես նկատեցինք, երկու հակասական մտեցումներ կա Եզնիկի եվ Խորենի վերաբերյալ: Մեզ այսպես է բխում, որ այստեղ մի հակամարտություն եվ պայքար է տեղի ունեցել: Եվ այդ հարցի իսկական հրահրողը Թեհրանի հայոց համայնական վարչությունն է եղել:

1907 թվականի Իրանի ազատագրական շարժումների ժամանակ ծնունդ առավ Թեհրանի Հայոց Ազգայն Խորհուրդը, որի վերջնական կազմակերպությունը ձևավորվեց 1908 թ. վետրվարի 17-ին: Նա նպատակ ուներ իբրեւ հայոց քարծրագույն իշխանությունը, միջնորդ հանդիսանալ պետության եվ պարսից խորհրդարանի միջև, իսկ հայոց ներքին գործերի մեջ ձեռք բերել վերին հսկողություն: Չորս տարի շարունակ գործելով, ժողովրդ վերջապես գոնե անպաշտոն կերպով ճանաչվեց պետության կողմից: 1911 թ. մշակվեց ու տպագրվեց մի հիմնադիր կանոնագիր, որի գլխավոր նախաձեռնողն եղավ Նիկոլ Աղբալյանը: Խորհուրդը, համաձայն այս նոր կանոնադրության, այլեւս

¹⁵¹ «Տաթեվ», Երկարակեցյանը, Հովակ. քին. Բարսեղյան 1926 թ. էջ 213-220: Նաեւ «Հայ հանրագիտակ» «Մ. Պոտուրյան» 1939թ. հ.4, էջ 725, «Ամենուն տարեցույց» 1926, էջ 631:

¹⁵² Լ. Գ. Մինասյան, Նոր Զուղայի տպարանը, Նոր Զուղա, 1972:

¹⁵³ Լ. Գ. Մինասյան, Սպահանի հայոց թեմի առաջնորդները, Նոր Զուղա, 1996, էջ 141-144:

կոչվու է «Թեհրանի Հայոց Համայնական վարչություն», որի առաջին պաշտոնական նիստը տեղի ունեցավ 1912 թ. հունիսի 11-ին: Այս վարչությունը հետզհետե դարձավ ընդհանուր Պարսկաստանի հայության իրավասու մարմինը, ձեռք բերեց քոլոր ազգային մարմինների վերին հսկողությունը, իսկ պետությունը ոչ միայն ճանաչում էր նրան, այլեւ ինքն էր, որ դիմում էր նրան իբր հայ ժողովրդի գլխավոր ներկայացուցչական մարմին:

Թեհրանի հայոց համայնական վարչության օրինակով, 1917 թ. կազմվում են Համադանի եվ Արաքի (Մուքանաբադ) համայնական վարչությունները: Ատրպատականն էլ ուներ իր թեմական խորհուրդը. այժմ կարիք է զգացվում ունենալու մի ընդհանուր պարսկահայ մարմին, որ իր ձեռքը պիտի առներ ամբողջ պարսկահայ ժողովրդի վարչական դերը: Այս առթիվ 1917 թ. դեկտեմբերից սկսած, Թեհրանի համայնական վարչությունը սկսում է դիմումներ անել Պարսկաստանի զանազան կողմերը ցրված հայության, բայց որովհետեւ տաճիկների արշավանքի պատճառով Ատրպատականը կտրված էր Թեհրանից, ուստի առայժմ կարել է լինում ունենալ ներկայացուցիչներ միայն հարավային

Պարսկաստանից որոնցից կազմվում է «Պարսկահայ խորհուրդը»:¹⁵⁴

Նաև հարկ է նկատել, որ «1900-ական թվականներից Թեհրանն ուներ կուսակցական (Հ.Յ.Դ.) խմբեր, ենթակոմիտեներ եվ մի կոմիտե, որ կոչվում էր «Շահ» կոմիտե եվ որը ենթարկվում էր Թավրիզի «Վրեժի» Կ.Կոմիտեին: Իրենց հերթին Համադանի եվ Մուքանաբադի կազմակերպությունները կապ էին պահում «Շահ» կոմիտեի հետ, վերջինիս միջոցով «Վրեժի» Կ.Կոմիտեին»:¹⁵⁵

Նաև հարկ է նշել, որ Խորեն վարդապետը լուրջ կուսակցական գործիչ լինելով,¹⁵⁶ նույնիսկ գավառներից հայ երիտասարդներին

ուղարկում էր Թեհրան Եփրեմին միանալու համար:¹⁵⁷

Այսպիսով կարելի է այսպես հասկանալ, որ ինչպես վերելում տեսանք Եզնիկի հակառակ ոչ մի բացասական հիշատակություն չի եղել զանազան աղբյուրներում, մինչ դեռ ինչպես են նրա ժողովրդանվեր գործերը եվ նրա ընտրվելը որպես Նոր Զուղայի առաջնորդական փոխանորդ, ապա Համադան որպես առաջնորդական տեղապահ: Այդ երևույթը իր հակառակորդների դուրք չի գալիս, ուստի նրանք որոնք ուզում էին Թեհրանի համայնական վարչության դիրքը ուժեղացնել ամբողջ Իրանում, այդ շարքում նաեւ Համադանի եվ Արաքի շրջաններում, եվ ուզում էին նրան փոխարինել կուսակցական Խորենը, որը համախոհ ու կուսակից էր Թեհրանի համայնական վարչության

¹⁵⁴ Հրաչյա Աճառյան, Կյանքիս հուշերից, Երեւան 1967, էջ 397-398:

¹⁵⁵ Ա. Ամուրյան, Հ.Յ.Դ. աշխակցությունը, Պարսկաստանում (1890-1918), Թեհրան 1950, էջ 132:

¹⁵⁶ Նույն տեղը, էջ 174:

¹⁵⁷ Նույն տեղը, էջ 144:

հետ, սակայն վարդապետներից ոչ մեկը չհաւաքվեց իր նպատակին ել երկուսի հակառակորդները ահաբեկության ենթարկեցին մեկը մյուսի հետեւից:

Ուստի Թեհրանի համայնական վարչության հիշված հայտարարությունը, որը Արաքի եւ Համահանի շրջանի գավառների հայ գյուղացիության անունից ուղարկվել էր Ամենայն Հայոց Հայրապետին, թվում է, թե կեղծ եւ շինծու եղած լինի (դիմումների բովանդակությունը, լեզուն եւ ոճը այնպիսի միանման ու կակածելի լինելով) Եզնիկ վարդապետին ասարեւելից հեռացնելու համար:

* * *

Հայ գյուղացիությունը միշտ վայելել է պետական եւ զինվորական իշխանությունների հովանավորությունը: Այսպես, երբ խրեմիսյան զորաբաժինները պիտի անցնեին Քյամարա շրջանով, հրամանատարը մի կրահանգով զորաբաժնումի պատասխանատու սպանին, նրան զգուշացնում է, որ ոչ մի կերպով Լիլիհանի գյուղացիության համար սնանկատուություն չառաջացվի, այլ դեպքում խրկավոր է խախտողի տվյալները ուղարկվի կենտրոն որպեսզի իր պատիժն ստանա:¹⁵⁸

Ըստ պետական տվյալների 1939 թվականին Լիլիհան գյուղում Մալարիա հիվանդությունը համաճարակ է դարձել, այդ առթիվ ներքին գործերի նախարարության առողջապահության գերատեսչությունը պաշտոնապես (Նամակ համար 17905, 21/7/1939) կրահանգում է Քյամարայի առողջապահական պատասխանատուներին, որպեսզի ինչքան շուտ վերահասու լինեն, ժողովրդին բժշկելու հարցում եւ ապա զեկուցեն նախարարությանը:¹⁵⁹

1937 թվականի ավատատեր-գյուղատերերի ճնշումը հայ գյուղացիության վրա պատճառ է դառնում մի խումբ ներկայացուցիչներ Լիլիհան գյուղից մի գրությամբ, Ամաստ Աղամալյանին հանձնարարեն պատկան մարմիններին հանդիպելու և իրենց հարցերի համար լուծում գտնել: Նամակում նրանք բողոքում են ներկա գյուղատեր Աբուլղասիմ Խանի ճնշումներից:¹⁶⁰ Նա էլ այդ հանձնարարագրով գնում է Թեհրան, Աբասալի Ագալ Եզանե անունով մի փաստաթղթի մոտ: Վերջինս մի նամակով հայերի դատը ներկայացնում է ներքին գործերի

¹⁵⁸ Փաստաթ. հ. 20:

¹⁵⁹ Փաստաթուղթ հ. 18:

¹⁶⁰ Փաստաթուղթ հ.21 եւ հ. 23:

նախարարության քննիչ պրն.Մեհլապալին որով մա հարցը հետապնդում է:¹⁶¹

Քյամարա գավառի ամենահայտնի դեմքերից, սույն դարի երկրորդ քառորդում, եղել է քյաղխուղա (Գյուղուպետ) Վաղարշակը (Վաղարշակ Իսաղուլյան-Վաղարշյանը) մա սերուն էր ամբողջ գավառում հռչակ վայելող Խաղուլյան նահապետական մի քարեկեցիկ եւ բազմանդամ ընտանիքից, որի նախավերջին շառավիղն էր ամբողջ գավառի շրջապատին հանրաժանող Ուստա Վաղարը:

Ուստա Վաղարը դժբախտություն է ունենում կորցնելով իր միակ սուղա գավակին պատանի հասակում: Այս ծանր վիշտը սփոփելու եւ իր թանկագին կորուստը փոխարինելու դրական ցանկությամբ, որդեգրում է իր հարազատ եղբոր որդիներից, պարթեւ հասակով պատանի Միմասին, որից ունենում է երկու թոռնիկներ Վաղարշակին եւ Խանրաբային:

Պատանի Վաղարշակը իր մեծ պապի խնամքի տակ հասակ է առնում եւ աստիճանաբար ինքնավստահության ու անհատականության է տիրանում, մինչ այն աստիճան, որ 20 տարեկան հասակում շրջանի քյաղխուղա (գյուղի տանուտեր) է ընտրվում եւ այդ պաշտոնը հաջողությամբ վարում է շուրջ 40 երկար տարիներ: Նա իր պաշտոնի բերմամբ եւ շնորհիվ իր անհատականության, վարվելակերպի, ծանոթ էր իր շրջանի պետական ազդեցիկ անձանց հետ, որոնց աջակցությամբ կարողանում էր գյուղացու շահերը պաշտպանել եւ հնարավորության սահմաններում բարդ խնդիրների համար լուծում գտնել:

Քյաղխուղայի մեկ ուրիշ ազդեցիկ եւ ակնառու գործերից եղավ 1960-ական թվականներին, հացահատիկի պակասի ու թանկության պատճառով, իր ջանքերով եւ ծերակուտական պր. Ֆելիքս Աղայանի աջակցությամբ հաջողեց ձրիաբար 50 տոննա ցորեն ստանալ կառավարությունից եւ ձրիաբար բաժանել հայ եւ պարսիկ գյուղացիներին:

Քյաղխուղա Վաղարշակի օրով էր, որ տեղի ունեցավ ներգաղթը և.Հայաստան: Հայ մնացորդացը փոխադրվեց Թեհրան: Այստեղ եւս Վաղարշակի ներկայությունն իր զգալի դերն ունեցավ գյուղացիների ունեցած տան, այգու եւ ծառատանների լուծարքի խնդրում:

Վաղարշակ Իսաղուլյանը մահացավ 1975 թվականի սեպտեմբրի 20-ին: Լիլիհան գյուղի նախկին արքայների եւ մույն գյուղի պարսիկ գյուղացիների խնդրանքով, քյաղխուղայի մահից հետո, իր գավակներին եւ եղբորը եւ մի քանի ուրիշների, հրավիրում են գյուղ, իրենց ցավակցություններն ու երախտագիտությունը արտահայտելու, ի միջի այլոց մի պարսիկ պետական անձնավորություն, իր խոսքի մեջ անդրադառնում է հայ ու պարսիկ անցյալ ու ներկա քարեկամական հարաբարություններին եւ հայերի մատուցած ծառայությունը Իրանին,

¹⁶¹ Փաստաթուղթ հ.22:

որ միշտ էլ գնահատվել է պետության ու ժողովրդի գիտակից տարրի կողմից:¹⁶²

Քյամարայի մյուս գյուղերի քյադխտությանից հայտնի էին՝ Ավետ Շահբազյանը, Ռաֆայելը, Բարդուղիմեոսը և՛ Մինասը (վերջինը)՝ Քյամուղներում, Դավիթ Ղարիբյանը՝ Սգրայում, Բայազ Ղարիբյանը՝ Ղալաշույում, Վարդան Ղարիբյանը՝ Սաքիում, Խանլար Ղազարյանը՝ Դովթաբադում, Փեսա Ծատուրը՝ Հաջիաբադում, Ծատուր Վարդանյանն ու Հարությունը՝ Ղարիաբաշխում եվ այլն:

1945 թ. նոյեմբերի 21-ին Խորհրդային Միության կառավարությունը Խ.Հայաստանի պահանջով որոշում կայացրեց, թույլատրել արտասահմանում ապրող հայերին վերադառնալ Հայաստան:

Իրանահայերի ներգաղթին օժանդակող կենտրոնական կոմիտե կազմվեց Թեհրանում 1946 թ. ապրիլի սկզբին: Ենթակոմիտեներ կազմվեցին հայաբնակ քաղաքներում եվ գյուղական խորհուրդներ՝ գյուղերում:

Արաքում եվս կազմվեց ներգաղթի կազմակերպման կոմիտե, որի պալատականությունն էր կազմակերպել քաղաքներն Քյազազ, Քյամարա, Գյափա եվ Բուրվարի շրջանների հայրենադարձությունը:

Արաքի շրջանից ներգաղթի առաջին կարավանը շարժվեց 1946 թ. հունիսի 14-ին: Գյափա շրջանի 12 գյուղերը մեկ շաբաթվա ընթացքում դատարկվեցին:

Երկրորդ կարավանը կազմեց Բուրվարի շրջանի 7 գյուղերի բնակչությունը: Դրանից հետո հերթը տրվեց Բուրվարիի մնացած 13 հայաբնակ գյուղերին:

Արձանագրվեցին 4735 հոգի, հայրենիք մեկնելու համար:¹⁶³

Քյամարայի հայերն էլ սպասելով իրենց հերթին Հայաստան մեկնելու համար, նաեվ խաների ճնշումներից արդեն հոգնած լինելով, ծախեցին ամեն ինչ եվ սպասեցին այն երազելի օրվան, որ պիտի փոխարկվեին հայրենիք: Նրանցից քիչ թվով հաջողեցին, սակայն մնացածը տեսնելով գյուղերի պարսպունդ, նուսել կենցաղային ծանր պայմանները իրենց տուն ու տեղը, համոզն ու արտը թողեցին արդեն գյուղերում մասամբ հաստատված պալատիկներին եվ իրենք մոտավորապես ձեռնումայն մեկնեցին Թեհրան:

Քյամարա շրջանից Խ.Հայաստան հայրենադարձվեցին շատ քիչ հայեր: 1952 թ. շրջանի հայկական բնակչությունը կազմում էր 2158 մարդ:¹⁶⁴

¹⁶² «Ալիք», 1975, հոկտեմբերի 27:

¹⁶³ «Ալիք», 1985 թ. սեպտեմբերի 22:

¹⁶⁴ Հ.Հ.Մարտիրոսյան, Հայերի տեղաբաշտումն Իրանում, Մերձ եւ Միջին Արեւելքի երկրներ եվ ժողովուրդներ, IV, էջ 156:

Այսպիսով գյուղաբնակ ժողովուրդը այնպիսի իր տեղում մնալու անկարող, 1947 թ. անշնամը եվ հաջորդ տարիներին լքեց իր տունն ու տեղը, թողեց իր արտն ու այգին եվ անտեր ու անհովիվ ոչխարի մման ճամբա ընկավ դեպի Թեհրան:

Հետագա տարիներին, այլ գյուղեր ապաստանած հայ գյուղացիները եվս կենտրոնացան Թեհրանում եվ մոտ 1000 ընտանիք հայեր հաստատվեցին մայրաքաղաքի Բեհջաթաթաթ քաղամասում, որտեղից, 1955 թվականին, քաղապետարանի հարկանգով տեղափոխվեցին քաղաքի տարբեր թաղերն ու վարվարձանները՝ Յուսեֆաթա, Դեզել-Դալե, Հեշմաթիե, Սաջիդիե, Քարթեշ, Նարմաթ, եվ հազիվ մի 15-ամյակ անց նրանք ոտքի էին արդեն:

Հարկ է նշել, որ արդեն տարիներ էր որ բնական դանդաղ մի հոսք էր տեղի ունենում գյուղերից դեպի քաղաք, գյուղացին հոգնելով գյուղական տնտեսական ծանր պայմաններից, հետզհետե գաղթում էր քաղաքները՝ Արաք, Թեհրան, Խուզեստան եվ այլուր: Այս ընթացքը 1940-ական եվ 1950-ական թվականներին օգնեց մյուս կարևոր ազդակներին, որպեսզի հայ գյուղացին ինչքան շուտ հեռանա գյուղից եվ մեկնի քաղաք:

1950-ական թվականներից Քյամարա գավառի հայաբնակ գյուղերը գրկվեցին հայ բնակչությունից, միայն Լիլիհան գյուղն էր որ կարողացավ մի քանի տարի իր գոյությունը պահպանել, ապա Լիլիհան գյուղն էլ դարձավ պարսկախառն:

Արքայազն Ղուամ Ռեզա Փահլավին, երբ 1957 թվականին այցելության էր գալիս Քյամարայի շրջանը, լսել էր որ Վաղարշակ Ղազարյանը որսոյություն էր: Խնուտ էր, ուստի կամենում է նրա հետ ուրսի գնալ: Որսից հետո, արդեն շատ էր հավանել Վաղարշակի որսոյությունը, ճաշին հյուրասիրվում է նրա տանը:

Ներգաղթից հետո Ղ.Ղազարյանը հազիվ կարողացավ մինչեվ 1962 թվականը, գավառի հայ բնակչության գոյությունը պահպանել:

1962 թվականից գավառի վերջին հայությունն էլ լքեց իր գյուղը: Այլեվս գավառների հայության հիշատակը վկայում են հանգստարանների կանգուն տապանաքարերը:¹⁶⁵

1970-ական թվականներին Քյամարայի նախկին բնակիչներից ոմանք ջանացան կրկին վերահաստատվել նախկին գյուղերը, այսպես օրինակ Վաղարշակի գավառ Շավարշ Ղազարյանի ջանքերով Խոմեյն քաղաքի ճանապարհը դեպի Քյամուղներ ու Լիլիհան ասֆալտապատ եղավ:

Այսօր միայն, գավառի նախկին բնակիչներն ու նրանց շառավիղները երբեմն այցի են գնում իրենց հարազատների շիրմն ու կրոնական արարողություն կատարում:

¹⁶⁵ Բազիկ, էջ 286:

Հետաքրքրականը այն է, որ գյուղերի պալատիկ բնակիչները շատ ջերմ ընդունելություն են ցուցաբերում այցի գնացած հայերին, նրանք այսպես են արտահայտվում. «Հայերը երբ այստեղից գնացին, իրենց հետ տարան գյուղի բարեկեցությունը եվ գյուղի բարի ատոքը, եվ այսօր առանց նրանց գյուղերը ամառի են դառել, քաղմաթիվ կարկաչառու աղբյուրները կույրացել են, հորդառատ առուններով էլ ջուր չի հոսում, նրանք իրենց հետ տարան ամեն քաղաքականությունը...»

Այսպիսով, երբեմնի հայաբնակ Քյամարա գավառը այսօր զրկվել է իր իսկական տերերից, որոշ գյուղերում, նույնիսկ չեն ապրում մախկին պարսիկ բնակիչները, Բրանի հետադիմական վարչակարգերի օտարամուլ քաղաքականությունը ժամանակի լինացքում քայքայել է երկրի գյուղատնտեսությունը, այլ չարքում Քյամարայինը:

Քյամարայի ամենաձաղկուն ժամանակաշրջանում այսպես է նկարագրվել ներքին կյանքը. «... 3-ից 15 տարեկան երեխաներ, իրենց լեցուն, կարմիր այտերով գեղեցիկ հայկական դեմքով, առողջ կազմվածքով, ոմանք հողաթավալ, աղտոտ ձեռքերով ուերեսով, ոտաբորիկ կամ պատտված կոշիկներով, խումբ-խումբ թափառում են գյուղի փողոտ փողոցներում, կամ ծաղկավետ դաշտերում երգում, վազվազում, խաղում ու իրենց զվարթ ձայներով բնույթնում շրջակայքը...»

Ինչքան գողտրիկ է տեսնել գեղջուկ հայ օրիորդներին, իրենց պարզ ու մաքուր արտաքինով, մազերի մի խոշոր խումբ բաժանված մի քանի հյուսերի, որոնց ծայրերին շարված են անթիվ գունգգույն հուլունքներ ու դրամներ: Գլուխը ծածկված է «արադչին» գլխարկով որի առջեվի մասինց նույնպես կախված են դրամներ, որոնք զարդարում են նաեվ նրանց կրծքերը:

Հաճախ այս աղջիկներին խմբերով կարելի է տեսնել գյուղից աղբյուր տանող ճամբի վրա, կուծերը ուներին դրած, իրար ականջի փսփսալով, կատակներով, երբեմն էլ մեղմ երգելով, քայց տղամարդի ու մամանավանդ օտարականի հանդիպելիս, միանգամից լռջանում են և արագ քայլերով աչքներից անհետանում...»

Եվ այսօր, այլեմս չկան հայ մանուկները, մազելի աղջիկները, նրանց կուծ ու կուլան, կարկաչառու աղբյուրները, արտերի կիզիչ արեվում բանուկ հողագործը, հնոցի մոտ լավաշ թխող մայրերը... հայկական գավառը հավիտենական լուռքան է մատնվել:

5-Վիճակագրություն

Քյամարայի մասին կազմած ամենահին վիճակագրությունը պատկանում է 1856 թվականին: Մեծանուն ԲաժՖին վկայակոչելով Նոր Ջուղայի առաջնորդ Թադեոս Արք. Բեկնազարյանի (1851-1863) 1856-1857 թվականի վիճակագրությունը, այսպես է գրել Քյամարայի բնակչության մասին.

«Քյամարա (գավառ Սպահան, ուր 5 զանազան գյուղոլայքում բնակվում են). 124 տուն՝ 402 այր, 343 կին, գումարը՝ 745:

Քայց 1871-1872 թ. սովը այնպիսի մեծ հարված տվեց տեղային հայերին, որ այժմ նոցա թիվը պետք է պակասած լինի:»¹⁶⁶

Լևոն Մինասյանը իր աշխատության մեջ այսպես է գրել.
«Քյամարան 1856 թ. ունեցել է 5 գյուղ 124 տուն 744 շունչ, 402 արական, 342 իգական.

1- Դավութբաթաղ	14 տուն
2- Լիլիհան	54 “
3- Դուրչիաբաշի	22 “
4- Մաքի	10 “
5- Քյանդուներ	24 “
	124 տուն ¹⁶⁷

6- Չարթաղ ¹⁶⁸	19 տուն = 130 շունչ
Գումար	143 տուն = 874 շունչ

Գավառը 1903 թ. ունեցել է ութ գյուղ.

1- Դավութբաթաղ	32 շունչ	170 շունչ	
2- Լիլիհան		130	775
3- Դալաշուր	24	170	
4- Դուրչիաբաշի	90	500	
5- Մգրա		22	165
6- Չարթաղ		22	135
7- Մաքի		40	230
8- Քյանդուներ	40	255	
Գումար		400	2400 ¹⁶⁹

¹⁶⁶ ԲաժՖին, հատոր 9, «Հայոց ազգաբնակչությունը Պարսկաստանում», Երեվան 1964, էջ 126-127:

¹⁶⁷ Ըստ Պատմություն Նոր Ջուղայի, հատ. 2, էջ 333 (աշխարհաբարը էջ 340)

¹⁶⁸ Ըստ «Նոր Ջուղայի լրաբեր»-ի:

¹⁶⁹ «Ն.Ջ. Լրաբեր», 1904 թ. վետրվար, հ.2:

Գավառը 1932 թ. ունեցել է 11 գյուղ 3510 շունչ (Ասադաբադ, Դանիան, Դավութբադ, Լիլիհան, Դորչիբաշի, Մագրա, Դարաշուր, Մագրա Հոսեյն, Զարբադ, Սաքի, Քյանդուներ):

1946 թ. ունեցել է 8 հայաբնակ գյուղեր (Դավութբադ, Դարաշուր, Դեհաֆիլ, Լիլիհան, Դորչիբաշի, Մագրա, Սաքի, Քյանդուներ):

Սույն գավառից 1946 թ. ներգաղթին քիչ մեկնողներ են եղել, մեծ մասը տեղափոխվել է քաղաքները, հատկապես Թեհրան:

1962 թ. միայն Լիլիհանն է ունեցել հայ բնակչություն, շուրջ 60 տուն, իսկ 1967-ին հազիվ 4 տուն, մեծ մասը անցել են Թեհրան:»¹⁷⁰

Հարություն Տեր Հովհանյանը այսպես է անդրադարձել Քյանդարայի բնակչությանը (1856).¹⁷¹

1- Դավութբադ	14 տուն	45 արական	36 իգական
2- Քյանդուներ	24	75	61
3- Լիլիհան		54	170 154
4- Սաքի		10	38 23
5- Դորչիբաշի		22	74 68
		124	402 342 = 744

Նագար Գիրոյանը նույն Հ.Տ.Հովհանյանի տվյալներն է կրկնել իր գրքում: Այս ավելացնում է. «Ըստ այլ տեղեկության, այս գավառակն ունի 8 հայաբնակ գյուղ եվ 350 տուն բնակից: (1890-ական թթ.)»¹⁷²

Երվանդ Ֆրանգյանը իր աշխատության մեջ հետեվյալ տեղեկությունն է տալիս Քյանդարայի բնակչության մասին.

«Քյանդարայի 9 հայաբնակ գյուղերը 530 տուն, 2800 բնակչություն»:¹⁷³

«Պարսկահայ տարեցույց»-ի 1927 թվականի համարում այսպես է հիշատակվել Քյանդարայի մասին¹⁷⁴.

11	գյուղ
491	տուն
1422	արական
1288	իգական
Գումար	2708 շունչ

Այժմ տեսնենք Ալիք օրաթերքի 1931-1934 թթ. համարներում ինչպես է արտացոլվել Քյանդարա գավառի բնակչության տվյալներ.

- Ալիք հ. 2, 1931 թ. մարտի 29

¹⁷⁰ Լ.Գ.Մինասյան, Պատմություն Փերիայի հայերի, Անթիլիաս 1971, էջ 483:

¹⁷¹ Հ.Տ.Հովհանյան, Պ.Ն.Ջ. հատոր 2, էջ 344 (աշխարհաբար 340):

¹⁷² Ն.Գորոյան, Պարսկաստանի հայերը, Թեհրան 1968, էջ 329:

¹⁷³ Ե.Ֆրանգյան, Ատրպատական, Թիֆլիզ 1905, էջ 104:

¹⁷⁴ «Պարսկահայ տարեցույց»- Թեհրան, 1927 էջ 64:

Քյազազ, Գյափլա, Քյամարա, Բուրվարի
54 գուտ հայկական գյուղեր, 20 հայ-պարսկական
գյուղեր՝ 15.000 հայ բնակչություն:

- Մինչև 1931 թ. 38 տուն՝ 181 մարդ Քյամարայից գաղթել են Արաք քաղաքը:

- Ալիք հ. 45, 1932 թ. փետրվարի 18

1- Զարբադ	55 տուն
2- Քյանդուներ	70
3- Սաքի	40
4- Մագրա-Դարաշուր	50
5- Դանիան	40
	255

- Ալիք 3/8/1933

Քյազազ եվ Քյամարա գավառների 26 գյուղերում ապրում են 1500 տուն կամ 8000 շունչ հայեր:

- Ալիք հ. 136, 21/1/1934

Արաքի 4 գավառներում (Քյազազ, Քյամարա, Բուրվարի, Գյափլա) կա 60 հայաբնակ գյուղեր շուրջ 16168 շունչ բնակչություն: (Քյազազ եվ Քյամարա 26 հայաբնակ գյուղեր:)

Արք. Հովասափյանը հետեվյալ կերպով է ներկայացնում Քյանդարայի բնակչությանը.¹⁷⁵

- 5 գյուղ 124 ընտ. 744 շունչ (402 ար + 342 իգ.)¹⁷⁶

- 11 " 574 " 3510 " (1880 + 1630)¹⁷⁷

- 13 " 569 " 3357 " (1779 + 1578)¹⁷⁸

Ալիք օրաթերքի հնգամյակի առթիվ հայաստանակաժ ժողովածուում այսպես ենք կարդում Քյանդարա գավառի վիճակագրությունը, որը կազմվել է 1932 թ. մաիսին:¹⁷⁹

1- Զարբադ	58 ընտ.	411 շունչ
2- Դորչիբաշի	111	722
3- Լիլիհան	185	1072
4- Քյանդուներ	60	321

¹⁷⁵ Ար.Հովասափյան, Հայաբնակ գյուղերը Ալիգուդարգ գավառում, Թեհրան 1975, էջ 36-37:

¹⁷⁶ Ըստ Հ.Տ.Հովհանյանի:

¹⁷⁷ Ըստ շրջանային տեսուչ Միհրան Գրիգորյանի վիճակագրության, 1932-33 թթ.:

¹⁷⁸ Ըստ Արաքի եկեղեցական վարչության վիճակագրության, 1939 թ. մարտ-մայիս:

¹⁷⁹ Ալիք, ժողովածու, հնգամյակի առթիվ (1931-36) էջ 188:

5- Դավիթաբաղ	39	201
6- Ասադաբաղ	22	96
7- Դանյան	4	34
8- Մագրա-Հոսեյն	4	29
9- Մագրա	30	189
10- Դարա-Շուր	23	156
11- Սաքի	39	279
Գումար	574	3510

Ալիքի 50-ամյակի առթիվ հրատարակված ժողովածուն հետևյալ տվյալներն է հաղորդում Քյամարայի քնակչության (1939) մասին.¹⁸⁰

1- Լիլահան (զուտ)	173 ընտ.	502ար.	409իգ. = 911
2- Դուրչիբաշի (խառն)	65	222	199 = 421
3- Չարթաղ (խառն)	65	205	177 = 382
4- Քյանդուներ (զուտ)	68	182	190 = 372
5- Վերին Դալե (զուտ)	23	76	82 = 158
6- Դավիթաբաղ(զուտ)	52	145	131 = 276
7- Սաքի (զուտ)	37	141	130 = 271
8- Մագրա (զուտ)	30	100	100 = 200
9- Դարաշուր (զուտ)	23	22	67 = 89
10- Մարահոսեյն(զուտ)	13	45	36 = 81
11- Հաջիաբաղ (խառն)	13	45	34 = 79
12- Դանյան (խառն)	5	19	12 = 31
13- Ասադաբաղ (խառն)	2	5	11 = 16
Գումար	569	1709	1578 3287

1939 թվականին Հովհաննես Տեր Պետրոսյանի եվ Մինաս Հովսեփյանի կազմած վիճակագրությունը հետևյալ տվյալներն է հաղորդում.¹⁸¹

1- Լիլահան	173 ընտ.	502ար.	409իգ. = 911
2- Դուրչիբաշի	65	222	199 = 421
3- Չարթաղ	65	205	177 = 382
4- Քյանդուներ	68	182	190 = 372
5- Վերին Դալե	23	76	82 = 158
6- Դավիթաբաղ	52	145	131 = 276
7- Մագրահոսեյն	13	45	36 = 81
8- Հաջիաբաղ	13	45	34 = 79
9- Դանյան	5	19	12 = 31
10- Մագրա	30	100	100 = 200
11- Դարաշուր	23	22	67 = 89
12- Ասադաբաղ	2	5	11 = 16
13- Նասրաբաղ	52	171	158 = 329
13- Օրթաչիման	40	125	138 = 263
Գումար	614	1864	1665 = 3529

¹⁸⁰ Ալիք, 50-ամյակը 1931-1981, Թեհրան, 1981, էջ 131:

¹⁸¹ مرتضى فرهادی، نامه كمره، جلد اول، ص ۲۷۱

Այդեն քահանա Ասովաժատրյանի եւ Վաղարշակ Ղազարյանի զեկուցագրում, որը գրվել է Նոր Զուղայի համայնական խորհրդին 1943թ. հոկտեմբերի 5-ին կալրում ենք.¹⁸²

1- Լիլահան	225 տուն
2- Դուրչիբաշի	112
3- Չարթաղ	128
4- Օրթաչիման	65
5- Սաքի	54
6- Մգրա	42
7- Դարաշուր	28
8- Քյանդուներ	75
9- Դավիթաբաղ	65
10- Հաջիաբաղ	12
11- Մգրահոսեյն	19
	825 = 4700 մարդ

Ալիք օրաթերքը 1952 թ. ներկայացնում է Քյամարա գավառի հայ քնակչության վիճակագրությունը (1951 թ.)¹⁸³.

1- Լիլահան	151 տուն	932 շուն	486 ար.	446 իգ.
2- Դարաշուր	26	170	84	86
3- Մգրա	28	185	87	98
4- Դուրչիբաշի	15	104	52	52
5- Քյանդուներ	31	201	109	92
6- Դավթաբաղ	39	258	131	127
7- Դեհսֆիլ	14	103	56	47
8- Սաքի	27	205	97	108
Գումար	331	2158	1102	1056

Ամենուն տարեգիրքը 1957 թվականի վիճակագրական տվյալները այսպես է ներկայացնում.¹⁸⁴

1- Լիլահան	555	273 այր	282 կին
2- Սաքի	108	45	63
3- Դավթաբաղ	20	9	11
4- Դարաշուր	65	30	35
Գումար	748	357	391

Այսպիսով 1856 թվականից մինչև 1967 թ. Քյամարայի քնակչությունը այսպես է եղել.

¹⁸² Փաստաթուղթ. համար 14:

¹⁸³ «Ալիք», 1952, փետրվարի 5:

¹⁸⁴ Ամենուն տարեգիրք, Բեյրութ 1958, էջ 384:

1856	745 (Չարթաղ գյուղը հաշվի առնելով՝ 874)
1890	2100
1903	2400
1905	2800
1932	3510
1939	3287 (13 գյուղ), 3529 (14 գյուղ)
1943	4700
1951	1056
1962	60 տուն = 360 շունչ
1967	4 տուն = 24 շունչ

6- Հասարակական-տնտեսական հարաբերություններ

Դարեր շարունակ ապրելով Իրանում հայերը անխուսափելիորեն հարձակվել են երկրում տիրող պայմաններից: Իրանահայերի՝ այդ քվում նաեւ Զյամարահայերի հասարակա-տնտեսական դրությունը հիմնականում համապատասխանել է երկրի բնիկ ժողովուրդների հասարակական-տնտեսական վիճակին, ժողովուրդներ որոնք ապրել են ավատատիրական հարաբերությունների պայմաններում:

Հայ գյուղացիները ավատատիրական Իրանի գյուղական մյուս բնակչության նման գտնվում էին չափազանց ոժկարին պայմաններում: «Սպահանի եւ Սուրբանաբադի շրջանների գյուղական հայ բնակչությունը հասել է ծայրահեղ աղքատության... Պարսկաստանի բոլոր քաղաքներում կարելի է տեսնել ավատատերերից քաղաքները տարավայր զբաղմունքի փախած ու անգործ մնացած քաղցած, աղքատ գյուղացիների»:¹⁸⁵

Սակայն հայ գյուղացիության հասարակա-տնտեսական դրությունը որոշ չափով տարբերվել է երկրի հիմնական բնակչության հասարակա-տնտեսական պայմաններից:

Հայտնի է, որ ընդհուպ մինչեւ 19-րդ դ. վերջը Իրանում տիրապետող էր հողատիրության պետական ձեւը: Մեծայանների հարստության անկումից հետո Իրանում ուժեղացան կենտրոնախույս ձգտումները: Փերիա, Չհարմահալ, Բուրվարի, Գյաւիլա, Զյամարա շրջանների, ինչպես նաեւ հյուսիսային նահանգների հայ գյուղացիությունը 18-19 դդ. «կռվախնձոր» դարձավ կենտրոնական իշխանության եւ տեղական ավատատերերի միջեւ: Այսպես, 19 դ. վերջին օտարերկրյա դրամագլխի ներթափանցումը Իրան, ապրանքա-դրամային հարաբերությունների աճը եւ երկրի ներքաշումը միջազգային ապրանքափոխանակության ոլորտի մեջ հանգեցրին այն քանին, որ հողը սկսեց կենտրոնանալ խոշոր կալվածատերերի, վաճառականների, ազդեցիկ խաների եւ գեղային առաջնորդների ձեռքերում, որի հետեւանքով հայ գյուղացիների մեծամասնությունը զրկվեց հողից:

19 դ. վերջին եւ 20 դ. սկզբին տեղական կալվածատերերը (մուլքադարները) դարձան հայ գյուղացիների լիիշխան տերերը: Նրանք հողերի մի մասը զնեցին, իսկ մյուսը՝ զավթեցին ուժով:

Ընդպույս մինչեւ մեր դարի 60-ական թվականները Իրանի հողատարածությունների ճնշող մեծամասնությունը գտնվում էր խոշոր կալվածատերերի ձեռքում: Միայն հողային ռեժոնի իրականացման ընթացքում իրանական իշխանությունները բռնկվեցին կալվածատիրական խոշոր հողագիրությունը որոշ չափով սահմանակափակելու ուղին: Սակայն այդ ռեժոնը չիրագործվեց հայ գյուղացիներով բնակեցված շրջանների մեծ մասում, որովհետեւ հողային ռեժոնի ժամանակ Զյամարայի համարյա բոլոր գյուղերը զրկվել էին իենց հայ բնակչությունից: Նամանավանդ հայկական զավառները՝ Չհարմահալը, Փերիան, Բուրվարին, Գյաւիլան, Զյամարան եւ Զյազազը գտնվում կան հարում էին ցեղերի

¹⁸⁵ ՀՍՍՀ ԿՊՊԱ Ֆ. 4/114, ց 2, գ. 88 ք. 45:

(բախտաբախներ, լուծեր եւ այլն) բնակության գոտում, որոնց վրա հողային ռեժիմը անհշան չափով տարածվեց:

Հայ գյուղացին (ռայաթ) իր հողագործությունը կատարում էր այրաթի (կալվածատիրոջ) կալվածքներում օգտվելով նրա ջրային ալրբյուրներից, իսկ հողագործության գործիքն ու անասունը (եզը) իրեն էր պատկանում: Բերքահավաքից հետո, ձեռք բերված բերքի մեկ երրորդը հանձնվում էր կալվածատերին:

Հայտնի է, որ Իրանում գյուղացիները զատարշվում էին արտադրամիջոցների նկատմամբ իրենց սեփականությամբ, զլխավորապես ունեցած բանող (քարշող) անասունների եւ գյուղատնտեսական գործիքների քանակով:

Վարձակալող գյուղացու ձեռքի տակ եղած բանող անասունների թիվը կարեւոր նշանակություն ուներ, քանի որ ի վերջո նաեւ դրանով էր պայմանավորվում վարձող հողակտորների մեծությունը եւ, հետեւապես, գյուղացիական ընտանիքի ապահովվածության աստիճանը:

Աղբատ խավերից հետո, ըստ քվարանակի երկրորդ խումբն էին կազմում հայ գյուղացիների միջակ շերտերը: Սրանք այդ խորդամալեք-գյուղացիներն են, որ ունեին միջակ մեկ ջոճք (մի գույգ եզ, մի օրում մի գույգ եզով վարելի հողակտորի չափ) հող: Գյուղացիական միջակ տնտեսությունները Բյանարայում (ինչպես նաեւ Բյազգազում, Ղարաղանում եւ այլն) ավելի քիչ են եղել քան Փերիայի շրջանում:

Հայ գյուղական բնակչության ընդհանուր թվում ունեվոր գյուղացիները անհշան տոկոս են կազմել:

Բյանարայի գյուղացիների հիմնական զբաղմունքը դարեր շարունակ եղել են հողագործությունն ու անասնապահությունը: Նայած բնակչության կազմակերպման, նրանք բաղված են եղել այգեգործությամբ, խաղողագործությամբ, բուսնաբար-բուստանային բույսերի մշակությամբ:

Գյուղում հողը մշակվում էր պարզունակ ձեվով: Գյուղատնտեսական հիմնական գործիքները վսյտե արորն ու փոցխն էին: Բերքահավաքը կատարվում էր ձեռքով, անգաղի եւ գերանի օգնությամբ: Կալատեղերում մասամբ օգտագործվում էին եզերը, գյուստներն ու ջորիները, բայց բերքի կալսման աշխատանքի նշանակալից մասը, մասնավորապես ցորենի եւ այլ մթերքների մաքրումը եւ չորացումը, նույնպես ձեռքով էր կատարվում: Ցորենը մաղում էին սովորական մաղի օգնությամբ: Գյուղատնտեսական աշխատանքներում զբաղված էին առավելապես տղամարդիկ:

Գոյություն ուներ աշխատանքի քաժանում ըստ տարիքային առանձնահատկությունների: Կանայք հիմնականում զբաղված էին տնային տնտեսությամբ: Նրանց մասնակցությունը դաշտային աշխատանքներին սահմանափակվում էր կալատեղերում ցորեն մաքրելով:

Կանանց հիմնական զբաղմունքը գորգագործությունն էր, որը տարածվում էր գրեթե գավառի բոլոր հայ գյուղերում: Այդուհանդերձ էին հիմնականում ընտիր «խալի» կոչված գորգեր, որոնք պատվիրատուները վաճառականներն ու գործարանատերերն էին: Էժանագին գորգերը («կարպետներ»), տարբեր ծածկոցները, փսիաթն ու այլ իրերը գործածվում էին տնային կարիքների համար:

Հայ կանանց ու աղջիկների հյուսած գորգերն ու գորգագործական այլ իրերը մեծ պահանջարկ ունեին եւ քարձր էին գնահատվում տեղական շուկայում: Դրանք Իրանում կոչվում էին «Արմանիթա» («հայկական գործվածք»):

Բյանարայի հայկական գյուղերում ժողովրդի գլխավոր զբաղմունքներն էին հողագործությունը, անասնապահությունը, այգեգործությունը, դաշտապահությունը, սափրիչությունը, երկաթագործությունը, գորգագործությունը, ատաղձագործությունը, մասամբ առեկտուրը, հովվությունը, կոշկակարությունը, գառնարածությունը, ներկարարությունը, զագախեծի հավաքում եւ վաճառքը, այգեպահությունը, նվագաչությունը, ջրաղացապահությունը, խամոթապահությունը, նախապահությունը, բանվորությունը, ծառայությունը եւ կապալարությունը:

Գյուղում պատրաստվում էին գորգ, ջաջիմ (քուրա), գվալ, տուպրակ, խորջին, քաղիք, կարպետ, դոշակ, հոռ, ջվալ, վերմակ, կտավ, շապիկ, քանգ, դարաք, մանա, գիվա, շալ, չվան, զոննար, գոտի, կարաս, վիլիար, փուկ, շալորաք, չամ, լափակ, ակիշ, ձեռնոց, չալուխ, գուլպա, սամաթել, զլխարկ, տաշտ, վիճկի, քալուր, թխկ, հոսելի, քոց, խաչերկաթ, քյոթոնե, քուրլի, խումա, կովկիթ, ճախարակ, լուծ, բախ, խախալ (մաղ), եղան, սլակ, սամի, քուրսի, տափան, քրաշ, քրիշ, ավել, քալալիկ եւ այլն:

Հայ գյուղացու ամենակարեւոր սննդամթերքն էր համարվում կաթից ստացվող արտադրությունները կաթ, սեր, հումսեր, մածուն, թան, չորթան, դառաղուրթ, պանիր, կարագ:

Գյուղացիությունը իր ընտանի կենդանիներին զարման, ամռան եւ աշնան եղանակներին պահում էր իր բակի բացօթյա փարախներում, իսկ ձմռան ժամանակ գոմում (Բյանդյներ գյուղում օգտագործում էին գետնափոր կանալները՝ զաղեն): Ձմռանը գյուղացին այդ կենդանիներին (ոչխար, կով, եզ, այծ, գոմէշ) դուր չէր անում, որովհետեւ դաշտն ու արոտը պատած էր լիմում քանձր ձյունով. նրանց պահում էր գոմերում եւ կերակրում յարսով ու հանդից բերած չորացրած սննդաբար խոտաբույսերի պաշարով (որը կոչվում էր կեր):

Բյանարա գավառում գյուղացիները ըստ իրենց նախնիների ավանդական սովորությունների, երբ աշնանամուտին վերջացնում էին բոլոր դաշտային աշխատանքները, եւ հասնում էր ձմռան սառնամանիք եղանակը, արդեն սկսվում էր ձմռան հանգիստ օրերը, դեռեմս մեկ ամիս մնացած աշնանից ծամանակն էր որ ձմռան քանի ամիսների համար կենսամթերք ու ուտեստեղեն ապահովել եւ գիշերները հավաքվել իրար շուրջ, բոլորվել տաք քուրսու չորս կողմը եւ իրենց անցյալի ու ապագայի մասին գրույց անել:

Քանի որ ձյունը չէր փակել ճամբաները, ավելի կարեւորություն էին դարձնում, քաղաքից կարեւոր զնվելիքներին: Գյուղացին դաշտային հասույթների ավելացումը եւ մի քանի պարալտ ոչխար ու խոյ, տեղի վրա կան տանելով քաղաք վաճառում էր եւ դրանց գումարից իր կարիքները հոգում:

Գյուղացին անցյալում իր գյուղատնտեսական կարիքներն ու մթերքները պատրաստում էր իր ձեռքով, կամ գյուղացի արհեստավորների միջոցով, ինչպես դուռ. պատուհան, վեճկի, լուծ, լափակ, հագուստեղեն, անկողին եւ այլն: Այսպիսով քիչ կարիք էր զգացվում քաղաքային պիտույքների: Վարջերս, երբ երկիրը սկսեց զարգանալ, արդեն գյուղացին էլ իր ձեռքով պատրաստած կուպիտ հագուստից խոյս էր տալիս եւ քաղաքներից էր բերել տալիս նուրբ ու սիրունատես հագուստներ, կամ կտոր էր բերել տալիս եւ կանայք ասեղնագործելով կարում էին իրենց հագուստները:

Երբ գյուղացին իր ձմռան պաշարը պատրաստում, անգամ ցորենը այդուր դարձնում եւ լցնում փեթուկը, կաթ ու կիթի բարիքներից նույնպես, ինչպես յուղ, պանիր, չորաթան եւ այլն, այս բոլորը պատրաստվելուց

հետո, ժամանակն էր ճամբորդություն կատարել դեպի քաղաքները կարիքները գնելու համար:

Ջյամարայի հայկական գյուղերից սրտշները հասարակական տեսակետից գնահատելի եվ բարեկեցիկ վիճակ են ունեցել: Բազիկը այսպես է գրում. «Լիլիհան գյուղը մուտք գործելիս. կարծես մի քաղաք էի մուտք գործել, ժողովրդի լուսավորությունն ու քաղաքավարությունը, գյուղի փողոցների ու տների սիրունությունը եվ այլն, ինձ հիացմունք պատճառելով, ապշած նայում էի ժողովրդի քաղաքաձեղ հագուստներին... չափազանցելով չեմ արտահայտվում, այլ իրականությունն եմ նկարագրում, Լիլիհան գյուղը բոլոր հայաբնակ գյուղերից ավելի զարգացած ու կարելի է ասել այն օրերում նրանց փողոցների լայնությունը եվ տան սենյակների սիրունությունը խոմեյն քաղաքում էլ հազվագյուտ էր:

Մեր շրջանում (Բուրվարիում - Է.Բ.) չափափաս աղջիկ ու տղա արգելված էին խլար հետ խոսելու, անգամ նշանված օրերում, բայց սույն գյուղի նրբամիտ ժողովուրդը վերացրել էին խավար կյանքի պայմանները եվ խորհել իրական կարեկությունները, կարելի է ասել 50 տարուց ավելի, մյուս գյուղերից հառաջադեմ եվ լուսավորված էր:»¹⁸⁶

«Ջյամարա գավառը գտնվելով Սուլթանաբադ եվ խոմեյն քաղաքների միջեվ եվ հաճախ հարաբերվելով դրանց հետ, ավելի շուտ զարգացավ եվ քաղաքային տիպար ստացավ, հատկապես Լիլիհան եվ Նուրչիբաշի գյուղերը... վաճառականության եվ ուսման մարզերում կապված էին Սուլթանաբադ քաղաքի հետ, կարելի է ասել, որ Սուլթանաբադի եվ շրջանների գորգավաճառությունը մեծ մասամբ կատարվում էր Լիլիհանի վաճառականների կողմից:»¹⁸⁷

«Լիլիհան գյուղը շնորհիվ իր արգավանդ հողի ու դաշտերի, առատ աղբյուրների ու գետերի ջրերի և կանաչ արոտատեղիների, իր գյուղացիները հաղորատ էին ոչխարներով, այգիներով ու ծառաստաններով, այս պատճառով էլ նրանց խաղողն ու ծառի մրգերը գերազանցում էին մյուս գյուղերին:»¹⁸⁸

«Նուրչիբաշի գյուղը Լիլիհանից ավելի փոքր էր, բայց առեվտրականության տեսակետից ոչ մի բան պակաս չուներ Լիլիհանից, հաճախ մրցակցում էր մեկի գորգավաճառությունը մյուսի հետ:

Նուրչիբաշի գյուղը նախքան Ռեզա Շահի գահակալությունը, քաղաքատեն, զարգացման ուղիներ է անցել, ունեցել է 60-ից ավելի վաճառանոցներ, գորգի, թելի ու շաքարի, հագուստի ու կտորեղենի, իացթուխ եվ թելավաճառ եվ այլն, որպես մի գյուղաքաղաք որոշ չափով կարողացել էր հոգալ իր շրջապատի գյուղերի կայիքները:»¹⁸⁹

«Սաքի գյուղը գտնվում էր զարգացած գյուղերի շարքին... եվ ավելի մոտ էր Սուլթանաբադին, այդ պատճառով էլ գյուղացիներից մեծ մասամբ իրենց, սերտ հարաբերությունն էին հաստատել քաղաքի հետ եվ կարճ ժամանակամիջոցում դարձել էին կատարյալ քաղաքացի... Սաքի գյուղը գտնվում էր լեռնային մի վայրում, ամառը լինու էր հով, իսկ ձմեռը կատարյալ սառնամանիք, երբ այս բարձրաբերձ խորխտ լեռներից հալվում էր ձյունը, լեռների սկզբից հոսում էին մանր ու խոշոր գետակներ ու վտակներ, գետիցը կանաչով ու զանազան ծաղիկներով պատելով, կազմում էր մի սիրուն տեսարան եվ ժամանակին էլ առատացնում դաշտային հասույթը:

Գյուղացիները զբաղված էին երկրագործությամբ ու խաշնարածությամբ եվ վերջերս էլ արհեստներով ու վաճառականությամբ... առաջին մեքենավարություն սովորողները եղան Սուլթանաբադ քաղաքի նախկին Սաքի գյուղի հայ բնակիչները:»¹⁹⁰

«Դավիթաբադ գյուղի հիմնադրումը տեղի է ունեցել Ջյանդյուներ եվ Լիլիհան գյուղերից հետո, եվ Ջյամարայի հսկայական գետի եզրերին գտնվելով, հանդ ու դաշտ ոռոգվում էին գետի ջրով, գյուղացիները ունենալով առատ ջուր, զբաղվում էին այգիներով եվ ծառաստաններով, կարծես գյուղը հաստատված լիներ անտառի մեջ, այգիների բերքերը վաճառվում էին քաղաքներում եվ ժողովուրդը ապրում էր հանգիստ եւ առատ կյանք եվ գյուղում աղքատ գոյություն չուներ:»¹⁹¹

«Լիլիհանը Արաքի չորս հայաբնակ գավառների մեջ ամենաշեն ու մաքուր գյուղն էր: Ուներ 150 տուն հայ ընտանիք, գեղեցիկ ու լայն փողոցներ, կոկիկ ու մաքուր շենքեր ընդարձակ բակերով: Տուները, որոնցից մեծ մասը երկհարկանի էին, սպիտակացրած էին սպիտակ կավով կամ կավձով, ուներ ուտելիքի կերպասեղենի եվ մսավաճառի տասնյակ խանութներ: Ժողովուրդը մաքրասեր էր: Անպակաս էր այնտեղ մշտական քեճն ու ուրախությունը:

Տղա եվ աղջիկ հագնվում էին կոկիկ, մաքուր նորաձեղ հագուստներ, հետեվելով քաղաքի մոդային, համարյա վերացած էր գյուղական հագուստների հին ձեվերը կանացի կոտերը, գլխակաեպերն ու օշմաղները:

Կիրակի օրերին ամբողջ գյուղը տոնական տեսք էր ստանում, պատանի եվ երիտասարդ տարբեր խմբերով քեճի էին գնում «Չեշմառեզ» եվ «Դարագյոզ» կոչված ծառաստաններում, իսկ աղջիկներն ու հարսերը, ալ-ալվան շորեր հագած, գնում էին այցելության եվ երբեմն էլ պտույտի գնում գյուղի մոտակա պարտեզներում:

Իրիկնապահերին ջահել տղաներն ու պատանիները խմբվում էին «Հարանգ» կոչված ջրաղբյուրի հրապարակում...

Լիլիհանը հայտնի էր իր լավորակ հայագործ գորգերով: Գյուղում կային մի քանի հոգի հայ գորգավաճառներ, որոնք իրենց գնած գորգերը վաճառում էին Արաքի մեծաքանակ գորգ արտահանող հայ գորգավաճառներին:

¹⁹⁰ Բազիկ, էջ 299:

¹⁹¹ Բազիկ, էջ 299-300:

¹⁸⁶ Բազիկ, էջ 273-274:

¹⁸⁷ Բազիկ, էջ 277-278:

¹⁸⁸ Նույն տեղում, էջ 286:

¹⁸⁹ Բազիկ, էջ 297:

Մոտիկ գյուղերի եվ ուրիշ շրջանի գորգավաճառները եվս իրենց ապրանքները Լիլահանում հայ միջնորդների միջոցով ծախսու էին հանում:

Մուսավորապես կես դար Լիլահանը ունեցավ իր ծաղկյալ եվ բարգավաճ կյանքը: 1930-ից սկսած գյուղի պատանիներից եվ երիտասարդներից ոմանք ուսանելու եվ արհեստ սովորելու նպատակով մեկնեցին քաղաք:

Բացի Լիլահան գյուղի գորգավաճառներից մույն շրջանի Ղարչիքաշի եվ Չարթաղ գյուղերում կային մեծ մի քանի ուրիշ հայ գորգավաճառներ:¹⁹²

Քյամարայի գյուղերի՝ Լիլահանի, Քյանդլների, Ղարչիքաշիի, Չարթաղի, Մաքիլի, Դավիթաբադի եվ մյուս գյուղերի գորգերը գորգավաճառների միջոցով բերվում էին Արաք: Արաքը իր հարուստ շրջաններով հայտնի էր թանկարժեք գորգերով, առաջին համաշխարհային պատերազմից հետո, 1918 թ. սկիզբներին, 30-ից ավելի ամերիկահայ գորգ արտահանող վաճառականներ եկել հաստատվել էին այնտեղ, որոնք էին Կարագյուղյան, Թավաճյան, Թիրաքյան, Կազաճյան, Թեֆեյան, Բարդիլյան, Ավանդյան, Ավագյան, Նահիգյան եվ շատ ուրիշներ: Կարճ ժամանակում Արաքը դարձավ գորգի առեվտրի եվ արտահանության կենտրոն:

Ցիցիլ Էդվարդս իր աշխատության մեջ անդրադարձել է մեծ Քյամարայի հայրին. «Ամենակարեկոր հայաբնակ գյուղերը գտնվում են Քյամարայում եվ նրանց ամենանշանավորը Լիլահանն է: Գորգի առեվտրականներն ու սիրողները Ամերիկայում լավապես ծանօթ են այս ամվան հետ: Լիլահանը յոթ հայկական գյուղերի մեջ ամենամեծն է եվ այդ յոթ գյուղերի ժողովուրդը գորգագործությամբ են զբաղվում: Մեծ մասամբ 9x12 չափով գորգեր են հյուսում, որոնց նախագիծն ու գույները շատ նմանություն ունեն միմյանց հետ: Գորգերի թելերը պատրաստում են իրենց իսկ ոչխարների քյոլից...»¹⁹³

Քյամարան ունեցել է գորգի նշանավոր գծագրող վարպետներ որոնցից կարելի է հիշատակել մի քանիսին. Հակոբ Միրզախանյան, Հովասափյան, Դավթյան, Հովսեփյան:

Հովաքեն Հովասափյանը գորգի ճանաչված քանիմաց մասնագետ էր:¹⁹⁴

¹⁹² U.S. Պետություն, Հուլիս, Թեհրան, 1976, էջ 59, 61, 62:

¹⁹³ Ցիցիլ Էդվարդս, Իրանական գորգը, էջ 163

(سیسیل ادواردز، قالی ایران، ترجمه مهین دخت صبا، تهران (بی تاریخ)

¹⁹⁴ آرموھی هواسپیان لیلیان، هنر و فرهنگ از یاد رفته روزنامه همشهری، ۱۳

شهریور ۱۳۷۲، ۴ سپتامبر ۱۹۹۳

7-Մշակույթ

7-1-Դպրոց

Նախքան Քյամարայի գյուղերում հայկական դպրոցների կառուցումը, քաղմիջս խոսվել եվ գրվել է կրթական գործի անհրաժեշտության մասին: Ըստ գուրթուն ունեցող փաստաթղթերի, առաջին անգամ 1902 թվականին էր երբ Պարսկա-Հնդկաստանի հայոց առաջնորդարանը իր համար 172 գրութայնք ուղղված Քյազազ, Գյափիա եվ Քյամարայի գավառների գործակալ Դանիել Զահ. Կազարյանին խիստ կարեկորել է հիշյալ գավառներում հայկական դպրոցների հիմնադրումը: Այս նամակում ասվում է. «Քյամարայի գյուղերից, առաջին որոշվեց հաստատել մի դպրոց Լիլահան գյուղում, օժանդակությամբ պրն.Հունանյանցի (ոռուսահայ), որ այդ դպրոցի համար այդտեղ ուղարկեցինք պրն.Աբգար Աբգարյանին եվ օրիորդ Շաղիկ Տեր Սուքիասյանին, ուսուցչական պաշտոնով...»¹⁹⁵

«Այսպիսով 1903 թվականին Լիլահանի հայոց ազգային դպրոցը կառուցվեց, ոռուսահայ բարերար Հովանյանի ծախսով, երջանկահիշատակ Սահակ Արք. Այվատյանի միջնորդությամբ: Հենց դպրոցի քացման օրից, մա ունեցել է իր հոգաբարձությունը եվ ղեկավար կազմը, որի մնայուն եվ անփոփոխ անդամներն են եղել պարոնայք Դավիթ Մարտիրոսյանը, Օհան Սաֆարյանը, Հովհաննես Հովհաննիսյանը եվ Խանբաբա Մեկիջյանը:

Լիլահանը ուներ երկու դպրոց եվ երկու եկեղեցի, լուսավորչական եվ բողոքական համայնքներին պատկանող: Բողոքականների թիվը շատ քիչ էր. լուսավորչական համայնքը ամուր կառչած էր դպրոցին, ազգային մշակութային եվ եկեղեցուն: Նրանք պահպանում էին իրենց ավանդական եվ նահապետական գեղեցիկ ու սրբազան սովորությունները:

Լուսավորչական համայնքին պատկանող դպրոցը ազգային բնույթ ուներ: Իր հիմնադրության օրից շարունակաբար ունեցել է որակյալ ուսուցիչներ տարրականի եվ միջնակարգի ուսանողներ, որոնք կապողացել են հեշտությամբ ընդունվել քաքաքների բարձրագույն դպրոցներում եվ քոլեջներում: Այդ գյուղից Թեհրանի ամերիկական քոլեջում ընդունվող աշակերտները հին հոգի էին իսկ Իսֆահանի անգլիական քոլեջի ուսանողները երեք էին...»¹⁹⁶

«1921-1922 ուսումնական տարեշրջանին Լիլահանի հայոց դպրոցում դասավանդում էր Ղուկաս Հովհաննիսյանը: Նա իր ուսումը ստացել էր Համադանի ամերիկական քոլեջում...»¹⁹⁷

Արմենուհի Հովասափյանը իր հղվածում այսպես է անդրադարձել Լիլահանի հայկական դպրոցի մասին. «Հայերը երբ 1650 թվականին իրենց եկեղեցին հիմնեցին Լիլահանում, մի դպրոց եվս 3000 քառակուսի

¹⁹⁵ Փաստաթուղթ հ. 7:

¹⁹⁶ Ա.Տեր Պետրոսյան, Հուլիս, էջ 56-57 (1919-1920 թթ.)

¹⁹⁷ Նույն տեղում, էջ 55:

մետր հողամասում կառուցեցին, որպեսզի իրենց կրոնն ու մշակույթը զարգացնեն: 1902 թ. մի այլ դպրոց հիմնեցին, որի ծախսը հոգալու համար յուրաքանչյուր մկրտությունից մեկ ռիալ իսկ ամուսնական արարողությունից հինգ ռիալ զանձվում էր»:¹⁹⁸

Այս դպրոցը օժտված էր մեծ քակով, մայրաքանի գետնով, կանաչ տարածքով, հավաքատեղիով, քաղաքում եղած գրադարանով:

Դպրոցում դասերն անցնում էին հայերենով, պարսկերենով եւ անգլերենով:

Լիւախանում անգրագետների թիվը աննշան էր եւ աղջիկներն ու կանայք, որ ցերեկը գրադվում էին գորգագործությամբ, ներկոյան մասնակցում էին դպրոցի դասերին:

Ի հարկե այս իրողությունը, ըստ որի 1650 թվականին Լիւախանում դպրոց եւ եկեղեցի է եղել, մասամբ կասկածելի է, քանի որ ստույգ փաստեր բացակայում են. պրն. Լ.Գ.Մինասյանը իր աշխատության մեջ,¹⁹⁹ անուրադարձել է թե Լիւախանի Ս.Հովհաննես եկեղեցին

հիմնադրվել է 1650 թվականին, գուցե եւ վերաբերվաւ հողվածագիրը վկայակոչելով այս հիշատակությունը, դպրոցի հիմնադրումն էլ վերագրել է 1650 թվականին:

«Լիւախանը կենտրոնն է համարվում Քյամարայի հայ գյուղերի: Այդ գյուղի դպրոցի շենքը հիմնված է 1903 թ. Խորեն վարդապետի պաշտոնավարության օրը»:

Անցյալ ուսումն. տարում շրջանային տեսուչ պրն.Միհրան Գրիգորյանը, Սուլթանաբադի եկեղեցական վարչության դրամական օժանդակությամբ, շինել է տվել երեք դասարանների 80 աշակերտների համար նստարան, սեղաններ եւ ուսուցիչների համար սեղան-արձուներ: Ներկա ուսումնական տարում պրն.Միհրան Գրիգորյանի միջոցով, ստացել ենք մեր դպրոցի «Ահարոնյան» գրադարանին նվիրված Թավրիզի «Գասպար» եւ Սուլթանաբադի «Ալիշան» գրադարաններից մի շարք ընթերցանության գրքեր, իսկ Սուլթանաբադի հայոց դպրոցից մի հատ մեծադիր երկրագունդ քարտեզ»:²⁰⁰

Կրթական գործը զավառի մյուս գյուղերում այլ տեսք է ստացել. Դուրչիքաշի գյուղի մասին Վահան քահանա Հովհաննիսյանը 1919 թվականին այսպես է գեկուցել Նոր Զուղայի կրթական խորհրդին:

«Դուրչիքաշին լինելով տեղիս գավառի մեծ գյուղերից մեկը ունի 70 տուն ազգաբնակչություն, հիշյալ գյուղը զգալով որ կարիք ունի մի ուսուցչի եւ մանավանդ այն, որ աշակերտները սովորությունը նկատի առնելով ուղարկել տեղիս (Լիւախանի - Է.Գ) դպրոցը, դրա համար ժողովուրդը պարտք համարեց մի ուսուցիչ խնդրել Զեզանից: Ուսուցչի

ծախսի եւ վարձի մասին մտածված է, ժողովուրդը իմ ներկայությամբ հանգանակել է 100 թ., որի մասին դուք վստահ եղեք...»²⁰¹

«Քյազազ, Քյամարա, Գյափլա եւ Բուրվարի գավառները (54 գուտ հայաբնակ, 20 հայ եւ պարսիկ գյուղեր, 15/000 հայ բնակչությամբ) կրթական տեսակետից անտեսության են մատնված. Մեսրոպ²⁰² սրբազանը ինքն էլ առաջարկել է 4 շրջանների դպրոցների մանրամասն հաշիվը, որովհետեւ դրան կա, Ա. եւ Մ. Դարակոզյանները ամեն տարի 150-ական թուման նվիրել են Սուլթանաբադի դպրոցին...»²⁰³

1928 թ. երբ Մեսրոպ Արք. Սուլթանաբադ էր եկել, տեղի հոգաբարձության հետ եզրակացրել էր որ չորս գավառների կրթական գործը կանոնավոր հիմքերի վրա դնելը անհրաժեշտ էր եւ պիտի ունենային շրջիկ մի տեսուչ, բոլոր գյուղերում դպրոցներ բացել: Նա խոստացել էր 10/000 դրամով օգնել, որից ուղարկված 2500 դրանի մի մասը հատկացվել էր դասագրքերի:²⁰⁴

Սուլթանաբադում գոյություն ունեցող Կանանց Կրթասիրաց Միությունը կազմվել էր օժանդակելու գյուղական դպրոցներին:²⁰⁵

Հիշված գավառները, ի շարս Քյամարան կտրված լինելով կետյունից՝ հարավային Պարսկաստանի թեմից, նաեւ նույն թեմ կողմից լուրջ քայլեր չվերցնելու պատճառով, գավառահայությունը մնացել էր կղզիացած եւ ցավալի դրության էր հասել: Այդ ժողովրդից մեկ առ հարյուրը հազիվ կաղալ եւ գրել գիտեր, չկային դպրոցներ, եղածներին էլ շատ նախնական վիճակի մեջ էին գտնվում: Մի տիրացուի կամ քահանայի շուրջ հավաքված մի հարյուր հոգի կարդում էին ժամագիրքը, Ավետարան կամ Աստվածաշունչ եւ այլն:²⁰⁶

1929 թ. Սուլթանաբադի հայ համայնքը ընտրեց առաջին եկեղեցական վարչություն եւ դպրոցի հարցը տրվեց այդ վարչության, որոշվել էր ուշադրություն դարձվեր Քյազազ եւ Քյամարա գավառները եւ թեմական տեսուչ հրավիրել շրջան, նրան հանձնել դպրոցների հարցը: 1931 թվականին արդեն գործի վրա էր թեմական տեսուչ Միհրան Գրիգորյանը, նա այցելեց Քյամարա գավառը որն արդեն ուներ չորս դպրոցներ: Հայուհյաց Կրթասիրաց Միությունն ու Եկեղ. Վարչությունը

²⁰¹ Փաստաթուղթ հ.11:

²⁰² Մեսրոպ Արք. Տեր Մովսիսյան (Մագիստրոս):

²⁰³ Ալիք, հ. 2, 1931 թ. մարտի 29:

²⁰⁴ Ալիք, հ. 11, 1931 թ., հունիսի 4:

²⁰⁵ Ալիք հ. 12, 1931 թ. հունիսի 11:

²⁰⁶ Ալիք հ. 22, 1931 թ. օգոստոսի 23: Հողվածագիրը՝ Ֆրեյդանի (9/8/1931):

¹⁹⁸ Հանձնախմբի օրաթերթ (Պարսկ.) همشهری 1993 թ. սեպտեմբերի 4:

روزنامه همشهری، ۱۳ شهریور ۱۳۷۲

¹⁹⁹ Լ.Գ.Մինասյան, Իրանի հայկական եկեղեցիները, Ն. Զուղա, 1983:

²⁰⁰ Ալիք, 1934 թ. հունիսի 17. հողվածագիրը՝ Վահան Դազարյան:

ստանձնել էին գյուղի ծախսն ու չքավոր աշակերտների գրեմական պիտույքները:²⁰⁷

Լիլահանի դպրոցը, որ հիմնվել էր Սահակ Այվաթյան առաջնորդի եվ Բագրատ վարդապետ Վարդապարյանի օրոք եվ աջակցությամբ ուներ վեց դասարան, մի քատերասրահ եվ մի գեղեցիկ պարտեզ: Գյուղը բաժանված էր երկու մասի՝ բողոքական մոտ 50 տուն եւ ոչ բողոքական (150 տուն լուսավորչական):

Լիլահանը կայող է ունենալ 200 աշակերտ, բայց 1932 թ. միայն 92 աշակերտ էր արձանագրվել 2400 դրամ բյուջետով:²⁰⁸

Դուրիքաշին իր հայ եվ պարսիկ բնակչությամբ, ուներ շուրջ 100 տուն հայեր, որտեղ հիմնվել էր «Երիտասարդների Կրթասիրաց Միություն»: Գյուղի հետադեմ տարրերի կողմից հարուցված հալածների պատճառով այս միությունը անգործունեության էր մատնվել: Այս գյուղում 1932 թ. արձանագրվել էին աշակերտներ, գրեթե նույնքան թոշակով, որքան երկու անգամ ավելի բնակչություն ունեցող Լիլահանը: Ուրեմն 2 կամ 3 ուսուցիչներով մի դպրոց էր հարկավոր:²⁰⁹

Չարթաղ գյուղը, որը հիմնվել է 17-րդ դարում 55 տուն բնակչություն ուներ 1932 թ. եվ միշտ էլ ունեցել էր դպրոց, թեև առանց սեփական շենքի, մի բան որ բացատրվում էր գյուղացիների անհոգությամբ: Կայրող էր ունենալ 60-ից ավելի աշակերտ, եվ տալ 160 թունան թոշակ երկու ուսուցիչներ վարձելու համար, որպես միակ բացառություն ունեցել էր 4 աշակերտուհի:²¹⁰

Ջյամարայի մնացած գյուղերը՝ Ջյանդլներ, (70 տուն) Սաքի (40 տուն), Սգրա-Դարաշուր (մոտ 50 տուն), Դանլան (40 տուն) չունեին դպրոցներ (1932):²¹¹

Սակայն 1932 թվականի աշմանը երբ ճոր շրջանային տեսուչ պրն. Միհրան Գրիգորյանը (Ծնվ. 1881 թ. մահը Երավրիզում 1936 թ. սեպտեմբերի²¹² 16-ին) հասավ Սուլթանաբադ եվ իր պաշտոնն ստանձնեց, եկեղեցական վարչության անդամները տեսչի հետ շրջեցին Ջյամարայի եվ Ջյազազի գյուղերը, ընտրել տվեցին գյուղական դպրոցների համար հոգաբարձություններ, կազմեցին բյուջետներ:²¹³

²⁰⁷ Ալիք հ. 38, 1931 թ. դեկտ. 19:

²⁰⁸ Ալիք 1932 թ. փետրվարի 10:

²⁰⁹ Նույն տեղում:

²¹⁰ Ալիք, 1932 թ. փետրվարի 18:

²¹¹ Նույն տեղում:

²¹² Ալիք, 1936թ. սեպտեմբերի 20:

²¹³ Ալիք, 1932 թ. փետրվարի 25:

Շնորհիվ Սուլթանաբադի հայոց եկեղեցական վարչության ձեռք առած միջոցների եվ ջանքերի, 1931-32 ուսման տարում Ջյազազ եվ Ջյամարա գավառներում բացվեց 15 դպրոցներ:²¹⁴

1933 թվականին ժամանակին վերաբացվեցին Լիլահանի, Դուրիքաշին, Չարթաղի, Սաքիի, Դարաշուրի, Մագրայի, Ջյանդլների եվ Դավիթաբադի դպրոցները: Տեսուչի, ուսուցիչների եվ մի խումբ գրագետ երիտասարդների ջանքերով Լիլահանում բացվեց դպրոցին կից մի գրադարան «ԲաՖՖի» անունով, 150 գրքերով եվ պարբերականներով:²¹⁵

1933 թ. Ջյազազ եվ Ջյամարա գավառների 26 գյուղերից 12 գյուղեր դպրոց ունեին, 19 ուսուցիչներով, 449 աշակերտ-ուհիներից 17-ը աղջիկ:²¹⁶

1934 թ. Ջյազազ եվ Ջյամարա գավառների 26 հայաբնակ գյուղեր 17 դպրոց կար, որոնք միայն 3-ը դպրոցական շենք ունեին, 2-ը Ջյազազում, մեկը Ջյամարայում: Ուրեմն 14 գյուղերում պարապմունքները առանց հարմարությունների էին կատարվում:²¹⁷ (1932 թվականի մայիս ամսին Ջյամարայի 11 գյուղերում կար միայն մեկ դպրոցական շենք՝ Լիլիհանում):²¹⁸

Կրթական կյանքը Լիլիհան, Չարթաղ եվ Ջյանդլներ գյուղերում 1934 թվականին ավելի միախառնական վիճակ ուներ եվ հոգաբարձուները հրավիրեցին ուսուցիչներ:

Լիլիհանի դպրոցը 1934 թ. ուներ «սեփական դենք 4 դասարաններով եվ համապատասխան հարմարություններով: Դպրոցն ուներ մի սրահ, բեմ, ուր ներկայացվում էին օպերետներ եվ մանկական փոլեմիկներ: Դպրոցին էր պատկանում նաեվ «Արույան գրադարանը» որը ուներ շուրջ 180 կտոր գիրք: Այդ տարի դպրոցում պաշտոնավարում էին երկու հայ եվ մեկ պարսիկ ուսուցիչներ եվ դասավանդումները կատարվում էին հայոց ազգային դպրոցների ծրագրով (ծխական դպրոցների):

Չարթաղի հայոց դպրոցը ուներ 40 աշակերտ, մի նախապատրաստական, առաջին, երկրորդ, երրորդ եվ չորրորդ դասարաններ եվ մեկ ուսուցիչ: Գրեթե նույն վիճակում էր գտնվում Ջյանդլների հայոց դպրոցը, սակայն ամեն տեղ էլ դասագրքերի պակասը կար:²¹⁹

²¹⁴ Ալիք, 1932 թ. մարտի 13:

²¹⁵ Ալիք, 1933 թ. մայիսի 28:

²¹⁶ Ալիք, 1933 թ. օգոստոսի 3:

²¹⁷ Ալիք, 1934 թ. հունվարի 21:

²¹⁸ Ալիքի հնգամյակի ժողովածու, էջ 188 (1931-1936):

²¹⁹ Ալիք 1934 թ. հունվարի 21:

Շրջանային տեսչի հրավերով 1934 թ. ապրիլի 28-ին Լիլիահանի հայոց ազգային դպրոցի դեմքում գումարվեց Քյամարայի դպրոցների հոգաբարձուների եվ ուսուցիչների առաջին միասնական ժողովը: Ներկա էր նաեվ շրջանի հոգեվոր գործակալ Տեր Վահան քահանան:²²⁰

Դպրոցների դասաժամերի եվ առարկաների մասին մանրամասն տվյալներ չունենք սակայն գիտենք, որ Արսքի հայոց դպրոցում շաբաթական 18 ժամ հայերեն եվ 18 ժամ պարսկերեն առարկաներ էին դասավանդվում առաջինից մինչև վեցերորդ դասարաններում:²²¹

Չարթալի հայոց դպրոցի շենքը բացվել է 1935 թ. դեկտեմբերի 18-ին 70 աշակերտով (60 տղա եվ 10 աղջիկ) դպրոցը ուներ նախակրթարան եվ հինգ բաժանմունքներ եվ երեք ուսուցիչ:²²²

1939 թվականին Քյամարայի դպրոցների վիճակը այսպես է եղել:²²³

Բնակչ.	տղա	աղջիկ	գումար	ուսուցիչ
1- Լիլահան 911	118	25	143	4
2- Դորչիբաշի 421	50	12	62	1
3- Չարթալ 382	36	8	44	2
4- Քյանդուներ 372	40	6	46	1
5- Վերին Դալե 158	20	-	20	1
6- Դավիթբաթալ 276	38	5	43	1
7- Սաքի 271	38	3	41	1
8- Մագրա 200	28	7	35	1
9- Դարաշուր 89	28	-	28	1
10- Մգրահոսեյն 81	13	-	13	1
11- Հաջիբաթալ 79	10	-	10	1
12- Դանիան 31	-	-	-	-
13- Ասադբաթալ 16	-	-	-	-
14- Նասրաբաթալ 329	43	13	56	1
15- Օլթաչիման 263	-	-	-	-

Մեզ մնացած 1943 թվականին պատկանող մամակներից այսպես ենք հասկանում, որ Քյամարայի դպրոցների պահպանումը հան դիպել է խիստ դժվարությունների և նյութական մեծ քաջ է նկատվել: Քյամարա գավառի Կենտրոնական Հոգաբարձությունը իր 1943 թվականի սեպտեմբերի 24-ի մամակում, որը հասցեագրվել է Նոր Ջուղայի Համայնական ու Կրթական խորհուրդներին, նշել է, որ ժողովուրդը

²²⁰ Ալիք, 1934 թ. հունիսի 10:

²²¹ Ալիք, 1935 թ. հունիսի 25:

²²² Ալիք, 1936 թ. փետրվարի 23:

²²³ Ալիքի 50-ամյակի ժողովածու (1931-1981) Թեհրան 1981, էջ

131:Նան

مرتضى فرهادی، نامه كمره، جلد اول ص ۲۷۱

նյութական պատճառներով չէ վիճակի չէ սեփական դպրոցներ պահելու: Այսպիսով Տեր Արսեն Քին. Աստվածատրյանն ու Վաղարշակ Դազարյանը որպես ներկայացուցիչներ ուղարկվում են Ն.Ջուղա նյութական աջակցություն խնդրելու համար»:²²⁴

Արսեն Քահանա Աստվածատրյանն ու Վաղարշակ Դազարյանը ներկայացրել են մի զեկույց, որից քաղում են հետևյալ տվյալները:²²⁵

	տուն.	աշակերտ	ուսուցիչ	տարեկան վարձ
1- Լիլահան	225	230	4	1920 թուման
2- Դորչիբաշի եվ Վերին Դալե	112	110	2	840 թմն.
3- Չարթալ	128	130	2	840 թմն.
4- Օլթաչիման	65	70	1+1 օգնական	800 թմն.
5- Սաքի	54	60	1+1 օգնական	650 թմն.
6- Մգրա	42	35	1	300 թմն.
7- Դարաշուր	28	26	1	300 թմն.
8- Քյանդուներ	75	82	1+1 օգնական	400 թմն.
9- Դավիթբաթալ	65	72	1+1 օգնական	400 թմն.
10- Հաջիբաթալ	12	12	1	250 թմն.
11- Մգրահոսեյն	19	21	1	250 թմն.
	825	848	16+4 օգնական	6950 թմն.
Մուրաբաթալի եկեղ. Վարչ. բյուջեն				1000 թմն.
Գավառից գոյանում է				2000 թմն.
				3000
				բաց է 3950 թմն.

1945 թվականին Քյանդուներ գյուղի ազգային դպրոցը 60 երկսեռ աշակերտությունով եվ հինգ բաժանմունքով, հայերեն գրքերից զույլ է եղել եվ տնտեսական ստղ պայմաններն էլ թույլ չեն տվել ծնողները դրանք հոգան: Դպրոցի դաստիարակ՝ Դազար Դազարյանը իր մամակում որը հղել է Ալիք օրաթերթին ներկայացնելով առկա դրությունը խնդրել է հին կամ նոր դասագրքեր նաեվ ընթերցանության գրքեր, որով կարելի կլիներ կազմել մի փոքրիկ գրադարան:²²⁶

1951 թվականին (Քյամարայի 8 գյուղերից)²²⁷ Լիլահան, Մգրա, Քյանդուներ եվ Սաքի գյուղերը ունեին դպրոցի շենք, գավառի 2158 մարդից 394 մանուկ դպրոցական տարիք են ունեցել:²²⁸

²²⁴ Փաստաթուղթ հ. 13:

²²⁵ Փաստաթուղթ հ. 14:

²²⁶ Ալիք, 1945 թ. հունվարի 14:

²²⁷ Լիլահան, Դարաշուր, Մգրա, Դորչիբաշի, Քյանդուներ, Դավիթբաթալ, Դեհ սեփյո, Սաքի:

²²⁸ Ալիք, 1952 թ. փետրվարի 5:

Ըստ Ամենուն Տարեգրքի, «1957 թվականին Քյամարան ունեցել է հետևյալ վիճակը.

	մարդ	այլ	կին	եկեղեցի	աշակերտ
1- Լիլահան	555	273	282	1	99
2- Մաքի	108	45	62	1	2
3- Դավիթաբաղ	20	9	11	1	դպրոց չունի
4- Դարաշուր	65	30	35	1	դպրոց չունի

Գյուղերից ոչ մեկը առանձին քահանա չունեին, ունեին այցելու քահանա » :²²⁹

Ցանկում չեն հիշվել մյուս գյուղերը, սակայն գիտենք, օրինակ Քյանդունի գյուղում առնվազն մինչ 1953 թվականը եղել են հայերի վերջին բնակիչները:

7-2-Եկեղեցի

Քյամարայի հայ ժողովուրդը ինչպես մյուս հայկական գաղթօջախները, իր ազգապահպանման եվ հուզվոր պահանջներին հագեցում տալու համար, իր գյուղերում հաստատման ամենաառաջին առիթներով կառուցել է իր եկեղեցին:

Ներքոհիշյալ ցանկում ներկայացվում են Քյամարայի զանազան գյուղերի եկեղեցիների մասին համառոտ տվյալներ.

- 1- Լիլահան Ս. Հովհաննես եկեղեցի, հիմն. 1650²³⁰
- 2- Միմաս եկեղեցի²³¹
- 2- Դուրչիբաշի Ս. Աստվածածին եկեղեցի, հիմն. 1868
- 3- Քյանդունի Ս. Թադևոս եկեղեցի
- 4- Չարթաղ Ս. Գեվորգ եկեղեցի
- 5- Վերին Դալա Ս. Գեվորգ եկեղեցի
- 6- Դավիթաբաղ Ս. Ս. Հովհաննես եկեղեցի
- 7- Մաքի Ս. Հովհաննես եկեղեցի, հիմն. 1864
- 8- Մազրա Ս. Հովհաննես²³² եկեղեցի
- 9- Դարաշուր Ս. Սիոն
- 10- Մազրահոսեյն Ս. Աստվածածին, հիմն. 1878²³³
- 11- Հաջիաբաղ Ս. Ստեփանոս

²²⁹ Ամենուն տարեգիրք, 1958, էջ 384:

²³⁰ Լ. Գ. Միմասյան, Իրանի հայկական եկեղեցիները, Ն. Ջուղա, 1983, էջ 46:

²³¹ Ա. Տեր Պետրոսյան, Հուշեր, էջ 95:

²³² Լ. Գ. Միմասյանը Ս. Սիոն է հիշատակել, նշվ. աշխ., էջ 47:

²³³ Լ. Գ. Միմասյան, նշվ. աշխ., էջ 47: ըստ Արաքի եկեղ. վարչության, եկեղեցի չի ունեցել. ըստ Ալիքի Տամյակի եվ Տամյակի ժողովածուների, եկեղեցի չի ունեցել:

- 12- Դանիան -
- 13- Ասադաբաղ -
- 14- Դեհսեֆիլ -
- 15- Օրթաշիման²³⁴ -

7-3-Ժողովրդական հավատմունքը

Քյամարայի ժողովուրդը ընդհանրապես և զավառի հայ բնակչությունը հատկապես, դարերի խորքերից սկսած ունեցել են իրենց ժողովրդական հավատալիքները, որոնք զավառից զավառ ունեցել են մամուլություններ և տարբերություններ: Ստորև անդրադառնում ենք նրանցից մի քանիսին.

1- Չար աչք

Ժողովուրդը այսպես էր հավատում, որ որոշ անձինք «չար աչք» ունեն եվ ուն կամ ինչ որ հավանեն աչքով կտան: Որպես հետևանք, աչքով տվածը կկորցնի իր ունեցվածքը, կենդանին կսատկի կամ անձը կը հիվանդանա, նաև գուցե մեռնի: Այդ վտանգը դիմակայելու համար օգտագործում էին «աչքահույունը» մանավանդ երեխաների համար:

2- Վախ բռնել

Երբեմն մտածում էին թե վախի պատճառով է մեկը հիվանդանում կամ որևէ մի խնդիր ունենում, ուստի կային որոշ կանայք կամ աղջիկներ, որոնք հատուկ աղոթքներով աղոթում ու հիվանդի վախն էին բռնում:

3- Աղոթել

«Աչքով տված» հիվանդին քծկելու համար կանչում էին «աղօթելու» շնորհք ունեցող մի պառավ կամ երիտասարդ աղջիկ, որը նստում էր հիվանդի մոտ, մի պատառ կտրակած հաց վերցնելով ձեռքը դնում էր հիվանդի վրա եվ նշանավոր աղոթքից զանազան աղավաղված բառեր եվ անկապ նախադասություններ արտասանելով՝ անդադար չէր անում: Այս արդեն ապագայից էր համարվում, որ հիվանդին «աչքով են տվել»: Հացի փոխարեն երբեմն օգտագործվում էր նաեվ ասեղով եվ այլն:

4- «Ծանր ոտ, կամ ձեռ» ունեցող անձինք կան, որոնք եթե մեկի նոր սկսած գործին հասնեն, կամ մոտովն անցնեն, սկսված գործը կը դժվարանա: Սրա դիմացը կար «թեթվ ոտ կամ ձեռքը»:

5- Եթե մեկը գույգ փոշտար, «ջուխտ» էր եվ հաջողության նշան, իսկ եթե կենդ փոշտար, «սաբր» էր. ուստի մի քիչ կսպասեին հետո կանցնեին իրենց գործին:

6- Եթե մեկի ականջը կանչեր, այդ թույլին իր վրա խոսում էին:

7- Ճանապարհորդի տանից հեռանալիս ջուր էին թափում ետեվից,

որպեսզի շուտով վերադառնա:

8- Պատկած մարդու վրայով չէին անցնում:

9- Եթե բուն գիշերով մեկի տանը պատահմամբ ճշա, մույն տունից մեկը պակսելու է:

10- Եթե ագռավը մեկի տանը կանչի, մույն տունից մեկը պակսելու է:

²³⁴ Այս ցանկը կազմելու համար բացի նշվ. աշխ. օգտվել ենք, Ալիքի 50ամյակի ժողովածու, Թեհրան, 1981, էջ 130-131, եվ Ալիքի Տամյակի ժողովածուն 1936:

- 11- Հանգստարանից, մեռելատնից ուղղակի մեկի տուն հյուր չեն գնում:
- 12- Գիշերով չեն ավելում գետից:
- 13- Գիշերով եղունգ չեն կտրում:
- 14- Փողոցում ընկած հացը վերցնում, համբուրում եվ մի անկյուն են դնում:
- 15- Եթե մեկը պատրաստ սեղանին վրա հասնի, գոքանչը շատ է սիրում նրան:
- 16- Դեմքի երկյուղից բաղնիքում մեռակ կամ մուրը չեն մնում, «մեզնից լավերը կան»:
- 17- Երեխային քաղցիքում չեն ծեծում կոխակահարվի:
- 18- Եթե կանգնած խմիչք խմեն, կրկնի ոտները:
- 19- Եթե մեկը գլխատ, նշանակում է, որ մի քան գողացել է:
- 20- Եթե մկրատը բացված դիպրով ընկած լինի մի տեղ, կամ դրված լինի կարանդակի մոտ, նշանակում էր թե՛ ուրիշների կողմից բաժրասվում է մկրատի տերը:
- 21- Եթե հարսնացուն դազան (կաթսա) լիզի, հարսանիքին անձրեկ կը գա:
- 22- Եթե հացը դեն ձգեն, կամ կոխտեն, մեղք է:
- 23- Թե՛ կամ գինի խմելիս՝ եթե բաժակներից քանիսը դիպվածորեն շարք կազմեն, հյուր է գալու:
- 24- Եթե թել խմելու ժամանակ շաքարը ընկնի թեյի մեջ, հյուր կը գա:
- 25- Եթե հոյի կինը, քնականից գեղեցկացել է, տղա է ծնելու, իսկ եթե ընդհակառակը՝ տղեղացել է, աղջիկ է ծնելու:
- 26- Եթե հոյի կինը քայլելիս, առաջ աջ ոտը, դնի տղա է ծնելու, իսկ եթե ձախ ոտը առաջ դնի՝ աղջիկ:
- 27- Եթե ծննդականի նախկին երեխաները չեն ապրել, որպեսզի նորածինն ապրի, ծնվելուց հետո գիր են առնում:
- 28- Ծննդականի եվ նորածնի վրա մի խաչ կամ հուրուք են միացնում, որպեսզի դեմքերը չվնասեն:
- 29- Ծննդականը մինչեվ քառասուն օր տնից դուրս չեր գալիս:
- 30- Երեխան դժվարությամբ եվ ուշ «լեզու ընկելիս» աղավմու ձու են ուտեցնում:
- 31- Ավելը գետնի վրա չեն ձգում: Կանգնացնում են պատի մոտ:
- 32- Զար ոգիներից ազատվելու համար, ծննդականի քարձի տակ պողպատ, դառակ, կամ մկրատ էր դրվում:
- 33- «Մեզնից լավերը» ենթադրական էակներ են, որոնք ոգիների հակառակ, գեղեցկադեն են եվ սարքում ու քրի աղբյուրների, գետերի եվ անտառների մոտ ու «զաղե»-ներում (գետնափուր անցք) են քնակվում: Սրանք երբեմն օգնում են մարդկանց դժվարությունները լուծվեն: Նաեվ ասում են իբր թե այս «փերիների» (հրեշտակներ) աղջիկներից սիրահարվել են աղամորթու տղաների վրա: Այս էակները երկյուղում են երկաթից, ուստի եթե մի մարդ ասեղ միացնի նրանց գետնին, սրանք չեն վնասելու նրան, իսկ եթե ասեղը միացնի այդ էակների գլխին, նրանք աներեվույթ լինելու կարողությունից կզրկվեն եվ կմնան մարդկանց մոտ: Հատկապես Բյանարայի Բյանդներ գյուղի բնակիչները, որոնք ունենին գետնափուր անցքեր գյուղի տակ, հետաքրքրական պատմություններ են պատմում այդ էակների մասին:
- 34- Բյանարայում հավատում են նաեվ մի այլ էակի, որը կոչվում էր «Մադրգմա» (պարսկերեն մարդ-ազմա՝ մարդուն փորձող) կամ հայերենով՝ «Խարալեգ»: Սա տարբեր տեսքով երեվում էր անապատում

եվ այնտեղ որ մի մարդ մեռակ կլիներ: Լիլահան եվ Բյանդներ գյուղերում երեվացել է մի գրաստի տեսքով եվ այլն:

35- Նաեվ հավատում էին մի անթաղական էակի «Ալ» անունով, որը մեծ մասամբ ծննաբերին էր նեղացնում: Որպես անեծք ասում էին «Ալը քեզ տանի»:

7-4-Ազգագրություն

Բյանարա գավառի հայ ընտանիքին ուներ մահապետական կյանք ու կենցաղ: Մեծ մասամբ, մի ամբողջ գերդաստան ապրում էր միեկնույն հարկի տակ: Տունը կառավարում էր մեծ տատը: Հարսերը չէին խոսում սկեսրոջ, սկեսրայրի կամ մեծ տագերաց հետ: Նրանց քերանը փակ էր: Նրանց լեզուն տան փոքրիկներն էին, որոնք քարզանչի դեր էին կատարում:

Բյանարայի հայ ժողովուրդը ավանդապահ լինելով՝ տոնում էր Նոր Տարին, Չատիկը, Ջրօրինները, Վարդավառը, Համբարձման տոնը, Միջինը, Տեառնընդառաջը, Բարեկենդան, Ծաղկազարդ կամ Ծաղկազարդար, Փոքրիկ, Խաղողօրիններ, Պահքը (պլաս) ու ծոմ էին պահում եվ խոր հավատք ունեին եկեղեցուն, Սուրբ գրքին:

7-4-1- Ամուսնություն

Գավառում ամուսնությունը կատարվում էր ծնողների կամքով, նրանք էին ընտրում հարսնացուին: Ամուսնացողները չգիտեին ում հետ են կապում իրենց բախտը: Սակայն այս սովորությունն ու ավանդությունը ժամանակի ընթացքում մեղմացել էր: Նախքան ամուսնությունը նախ կատարվում էր խնամախոսություն, ապա նշանադրություն, որոնց մանրամասնություններն արդեն հայտնի է բոլորին:

Տարվա գլխավոր տոներին, ինչպես՝ Ս.Ծնունդ, Բարիկենդան, Չատիկ, Համբարձում, Վարդավառ եվ Աստվածածին, հարսնացուի սկեսրոյը նրա համար «փայ» այսինքն՝ բաժին էր ուղարկում (գաթա, քաղցրեղեն, չամիչ, նուշ եվ հալվա):

Հարսանիքը սովորաբար տեղում էր յոթ օր ու գիշեր, որի ընթացքում «սագանդար»ները (մվազածուներ) զվարճացնում էին հանդիսությունը: Օգտագործվում էին սրինգ, սագ եվ դափ. սակայն Խորեն վարդապետը աշխատեց վերացնել այս սովորությունը եվ ավելի ազատ մթնոլորտ ստեղծել ընտանեկան եվ հասարակական հարաբերություններում:

7-4-2- Ծննդաբերություն

Ծննդաբերությանը առնչվող աշխատանքները ստանձնում էին տեղական տատները: Նախքան բուն աշխատանքին անցնելը, նրանք սենյակի չորս պատերին թոքի ակիշով մի երկար գիծ էին քաշում, որպեսզի չար ոգիները չհամարձակվեն մոտենալ եվ վնասել ծնողին եվ ծնվող մանուկին:

Դժվարածին կնոջ համար դիմում էին որևէ գյուրացի, որը մի կտոր թելի վրա թուղթ կապելով եվ վրան ինչ-որ աղոթք գրելով, հանձնարարում էր մույն թեր կապել ծննդականի մեջքին, իսկ թուղթը վանալուց հետո, ջուրը խմեցնել իրեն:

7-4-3- Մկրտություն

Սովորաբար երեխայի ծնվելուց յոթ օր հետո, պատրաստվում էին նրա մկրտության տոնակատարությունը կատարելու:

Ծխականատարությունից մեկ օր առաջ մկրտվող երեխայի ծնողները «քավորասեղան» էին տանում քավորի տանը: Քավորասեղանը, սովորաբար պատկանում էր մեկ գլուխ շաքար, քաղցրեղեն, չամիչ, փշատ, ընկույզ եվ այլն:

Մյուս օրը սկսվում էր մկրտության արարողությունը, նախ եկեղեցում ապա տանը, ուր տեղի էր ունենում հացկերությունը:

7-4-4 - Նշանադրություն

Հնում, սովորաբար, տղաներին 15-20, իսկ աղջիկներին 12-15 տարեկան հասակում էին ամուսնացնում եվ հայանացուի ընտրությունը ծնողների կողմից էր կատարվում:

Տղայի ծնողների մի պերճախոս կնոջ ուղարկում էին աղջկա ծնողների մոտ եվ հավանություն ստանալու դեպքում հարազատներով գնում էին նոր խնամիների տանը: Հարսնացում ներկայանում էր նրանց եվ «երեստանուկ» էին տալիս եվ նա էլ համբուրում էր տղայի ծնողների աջը եվ նրանք էլ փոխադարձաբար համբուրում էին նրա ճակատը:

7-4-5 - Մահվան ծխականատարություն

Արարողությունը կատարվում էր գյուղի քահանայի միջոցով: Հարգում էին նաեվ մահվան յոթնօրյակը, քառասունքն ու տարին:

7-5-Ազգային և կրոնական տոներ

Քյամարայի հայերը մյուս զավառների (ման տոնում էին թե ազգային եվ թե կրոնական տոները, որոնցից կարեւորագույնները հետեւյալներն էին. Նոր Տարի (հունվարի մեկին), Ջրօրհներ (հունվարի 6), Մուրք Մարգիս (ցորենի այլուրից եվ խաղողի խտացած հյութից փոխկնճ(դ) էին պատրաստում), Բարեկենդան, Մեծ Պահք, Միջինք, Փոքրիկ, Տյառնընդառաջ (Տրնդեզ), Ծաղկագարդ, Ավագ Հինգշաբթի, Խավարում գիշեր, Չատիկ, Համբարձում, Վարդավառ, Մուրք Սատվածածնի տոնը (հաղորդօրհներ):

7-6 Հայկական խոհանոցը

Քյամարայում հայ կանայք պատրաստում էին զանազան կերակրածեղեր, որոնցից ներկայացնում ենք մի քանիսը.

- 1- Վոռ = ապուր, ջրալի կերակուր
- 2- Հրցեխուս (Ուրցեխուս) = որի քաղաղութանսեն էին՝ ուրց, ալյուր, ջուր, աղ եվ յուղ
- 3- Կաթեխուս = ալյուր, ջուր, աղ, յուղ, կաթ
- 4- Չվախաշու կամ խափիժ = ալյուր, սոխ, յուղ, աղ, ձու, բրինձ (քիչ)
- 5- Նոխուրով = սիսեռ, ջուր, աղ, սոխ, թեր, լոլիկ
- 6- Չվածեղ = ձու, յուղ
- 7- Եխնի (արգանակ) = սիսեռ, լոթի, միս, ոսկոր, ջուր, թեր, աղ, լոլիկ
- 8- Բանջրեպաս = սալի քանջար, ջուր, յուղ, աղ, սոխ, ձավար
- 9- Խաշու = ոսպ, լոլիկ, աղ, ջուր, թեր, սոխ, ալյուր
- 10- Թանեպաս = ձավար, ջուր, կանաչեղեն, թան, աղ
- 11- Ընշ, մյուս գյուղերում՝ խաշիլ = ձավար, ջուր, չորթան, կարագ
- 12- Շիլդուշ = կաթ, տաք քալ + դարաղություն
- 13- Կաթնով = բրինձ, ջուր, աղ, կաթ, շաքարավազ
- 14- Բորանի = ճակնդեղ, չորթան, ջուր, աղ, սոխ, յուղ, ուրց, սոխառած
- 15- Աղանձ = բովան ցորեն, աղ, հնդկականփ (շաղան)

16- Բուրսաղ (թխվածք) = ալյուր, աղ, կաթ, շաքարավազ, յուղ, բրինձ, ձու, ապա տաք յուղի մեջ եփվում է

17- Փանջակ, գաթա = սա էլ բուրսաղի նման է, սակայն չի տապակվում յուղում:

Քյամարայում մի բույս կար «չգիղամ» անունով, որի արմատը եփում եվ ուտում էին, սա Իրանի միայն այս զավառում դա էլ բնական ձեով գոյություն ունի:

7-7-Կաթիոխ, հացփոխ

«Կաթիոխ» կամ «հացփոխ» ավանդական համագործակցական (կոոպերատիվ) սովորությունը հնագույն ժամանակներից սկսած գոյություն է ունեցել Քյամարայի ինչպես հայ, այնպես էլ պարսիկ ժողովրդի, մանավորապես կականց մոտ:

«Կաթիոխ»-ի տնտեսական դրդապատճառը այսպես էր քաղաքացիական, որ գյուղացիների մեծ մասը ի գորտ չէր իր ոչխարներից ձեռք բերված քիչ կաթը անմիջապես դրամի կամ որեկե ապրանքի վերածելու եվ դրանից ստանալ իր կաթնեղեն բոլոր արտադրանքները, ուստի, գյուղացին իր անասնապահություն արտադրողականությունն ու շահաբերությունը բարձրացնելու համար դիմում էր այդ սովորության: Մյուս կողմից, հարկավոր էր, որ կաթը անմիջապես սպառվեր կամ մյուս արտադրանքների վարձվեր:

Տնտեսական պատճառներից զատ, «կաթփոխը» ուներ նաեվ հասարակական եվ հոգեբանական պատճառներ եվս:

1- Այդ սովորությամբ, կանայք առիթ էին ընդձեռնում օրվա ծանր գործերից ձեռքազատվել եվ մի պահ հանգստանալ:

2- Որովհետեվ կաթը կաթմատիքոջ տանը հասցնելու ժամանակը որոշված էր, ուստի կանայք առիթ էին ունենում իրենց հոգսերն ու անհանգստությունը արտահայտել միմյանց եվ կիսվել իրար վշտերով ու հույզերով:

3- Կաթմատիքոջ տունը մի վայր էր լինում, ուր կենտրոնացնում էին տեղական լուրերն ու անցուղարձերը, օրինակ, մահվան, հարսանյաց, ընտանեկան հարցերի եվ զանազան այլ լուրեր:

Նախքան «կաթփոխի» սկսելը, ընտրվում էին մասնակիցները, որոնք գերադասում էին ունենալ հետեւյալ յուրահատկությունները.

1- Ճշմարտախոսություն եվ ճշմարտություն:

2- Նրանց կաթի չափսը եվ անասունների թիվը մոտավորապես հավասար լիներ:

3- Հիշողություն՝ երբ կարիք էր զգացվում մեկին կաթ պարտք օրվեր:

4- Կաթի հարատև գոյությունը:

5- Մասնակիցների բնակարանների մոտավորությունը:

6- Մաքրություն:

7- «Չոր աչք» չլինելը:

Մասնակիցների թիվն ու կաթի չափը հակառակ հարաբերություն ունեին: Սովորաբար 3-10 էր լինում:

Մասնակիցների ընտրությունից հետո, որոշվում էր առաջին կաթմատերը: Այսպիսով հատում պարբերականությամբ, որը որոշվում էր մասնակիցների թվով, ամեն օր մասնակիցները իրենց կաթը հանձնում էին կաթմատիքոջ, եվ այս կանոնավոր ցիկը իրենցում էր բոլոր մասնակիցների համար: Կաթը չափվում էր մի հատուկ պայտով, որով նշանակվում էր ստացած եվ հանձնված կաթը:

7-8-ժողովրդական բժշկության

Ջյամարա գավառում բժշկությունը կատարվում էր կամ բուսական դեղերի միջոցով, կամ սնապաշտական միջոցներով (զիր անելով, աղոթելով եվ այլն):

Գավառի համայնա թե բոլոր բժիշկները, հաքիմները հրյաներ էին (քիչ քվով հրյաններ էլ ապրում էին որոշ գյուղերում), օրինակ հաքիմ Էլիագը (Մադաբարում), հաքիմ Մեյրիմ (Լիլահան), հաքիմ Շարբանը, հաքիմ Դավուդը, Էբրահիմը, Շահային (Խոմեյն): Նրանք ծանօթ էին հայերենին:

Նրանք սովորաբար օգտագործում էին՝ Մայանա կամ Սամիթ, (փորագավի համար), քարանջաքին, որը մամուսայի մի տեսակն է եվ ստացվում է ուղտափշից, խաքշիր կամ աղբուկ (ջերմությունը իջեցնելու համար), ճարճարտուկ (որից ստացված օդին օգնում էր ջերմության իջեցմանը), շաքարե կամ անձխուր (չորացված մածուցի հետ վերքերը ամրոթելու համար), դալու (պատրաստված ախցանը՝ ոտացավի համար, կատվի խաղող (ատամի որթերին հեռացնելու եվ դռացավի համար) եվ այլն:

Մի քանի ցավերի դարմանումը.

Աչքացավ (գաղջ թեյ), ականջացավ (ծխախտի ծուխ), առամացավ (քաթիրա, ծխախտի մոխիր), դեղնախտ (մանր ձկնիկներ կուլ տալ), փորացավ (մաքաթ այրում ջրով եվ խմում), այլվածք (մածուն քսել, զեյթունի յուղ քսել), կապույտ հագ (իշու կաթ), կարմրուկ (տաք պահել), մեքքացավ (թրշտուկ էին ուտում, բաժակ էին գցում) եվ այլն:

8- Բյաժարա գավառի խոսվածքը

Հայերենը ճոխ է իր բարբառներով: Բարբառ անվան տակ սովորաբար հասկացվում է մեկ համընդհանուր լեզվի այնպիսի ճյուղավորում, որն ունի իր բառային հիմնական Ֆոնդն ու քերականական կառուցվածքը եվ սպասարկում է որեվէ ժողովրդի ավելի փոքրի հատվածին: Բարբառը «ընդհանուր համաժողովրդական լեզվի տարբերակ է, որն ունի իրեն հատուկ բառային կազմ, շարահյուսություն, հնչյունաբանություն եվ գործածվում է որոշակի տարածքում: Բարբառները միմյանց նկատմամբ ընդհանրություններով եվ մասնություններով հանդերձ իրարից տարբերվում են հնչյունական, բառային, ձևաբանական, շարահյուսական առանձնակի կամ համակարգային հատկանիշներով»:²³⁵

Բացի քարբառ տերմինից, հաճախ օգտագործվում է նաեվ ենթաբարբառ տերմինը: Սա հանդիսանում է բարբառի ճյուղավորում: Առանց ընդհանուր լեզվի բարբառներ չեն կարող լինել, առանց բարբառների էլ ենթաբարբառներ գոյություն չունեն: Բարբառի եվ ենթաբարբառի տարբերությունն այնքան էլ մեծ չի լինում, ուստի եվ նրանց միջեվ բացարձակ սահմանագիծ դնելը դժվար է: Սովորաբար ընդունված է ասել, որ այն դեպքում, երբ խոսողներն իրար չեն հասկանում կամ հասկանում են շատ դժվարությամբ, այդ դեպքում ունենում ենք բարբառներ, իսկ այն վեպքում, երբ խոսողները միմյանց հասկանում են առանց դժվարությամբ, այդ դեպքում ունենում ենք ենթաբարբառներ:

Ենթաբարբառի ճյուղավորումը պետք է համարել խոսվածք: Խոսվածքը տեղական բարբառի տարատեսակն է, բարբառի մեջ մտնող եվ նրանից շատ ավելի աննշան տարբերություններ (զխաավորապես հնչյունական, մասամբ եվ քերականական) ունեցող, բարբառի ու ենթաբարբառի համեմատության ավելի փոքր հատվածի հաղորդակցման միջոցը, ամենափոքր, այլեվս անբաժանելի լեզվական միավոր:

«Բարբառների սահմանները ոչ միշտ են որոշակի եվ ոչ միշտ են որոշվում լեզվական չափանիշներով, այնպես էլ բարբառային տարբերությունների զննատման չափանիշները ոչ միշտ են նույնը եվ ոչ միշտ են լեզվական բնույթի»:²³⁶

Ջյամարայի հայոց խոսվածքը պատկանում է բարբառների ում ճյուղին եվ չափազանց մոտ է Նոր Զուղայի բարբառին մասնավորապես Արաքի շրջանի մյուս գավառների խոսվածքներին:

Որպեսզի Ջյամարայի հայոց մասին ընդհանուր պատկերացում ստեղծենք, նրանց վերաբերող համարյա բոլոր բնագավառներում, հարկավոր ենք գտնում համառոտակի ներկայացնել խոսվածքի ամենակարեկիր հատկանիշները:

²³⁵ ՀՄՀ, հ.2, էջ 310:

²³⁶ Գ.Բ.Ջահոկյան, Զրույցներ հայոց լեզվի մասին, Երեվան, 1992, էջ 100:

8-1- ՀԱՅԿԱՆՈՒՄՆԵՐԸ

Քյանայայի խոսվածքի ձայնավորներն են *ա, օ, ու, է, ի, ը, ա*, երկբարբառներն են *ուր, իէ (յիէ) և ուօ*:

Բաղաձայններն են՝ *բ, ք, գ, զ, զյ, զի, դ, ղ, զ, ք, ժ, ւ, ծ, կ, կյ, հ, ժ, ժ, դ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ջ, ռ, ս, վ, տ, թ, ց, փ, ք, ֆ*:²³⁷

Շեշտ. Խոսվածքում շեշտը դրվում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա:

ՀԱՅԿԱՆՈՒՄՆԵՐԸ²³⁸

1- Ձայնավորներ

ա>ը	օխչար (ոչխար) > օխչրոի ախքատ (աղքատ) > ախք(կ)րտի
ա>է	ավելորդ>էվլնուօրթ
ա>ի	վարդավառ>վարթիվոր
ե>է	երագ>էրագ երես>էրէս եփել>էփէլ
ե>ու	ուղեղ>րղուղ
ե>ի	լեզու>լիզու մեմակ>միմակ
ե>ի	երեք>հիրեք
ե>ը	ավելորդ>էվլնուօրթ ²³⁹
ե>	հայելի>հայլի երակ>ռակ
ե>ա	եղբայր>ախայէր
ե>օ	երդում>օրթում
ե>իէ	խեղճ>խիէղճ կեռ>կիէռ սերմ>սիէրմ
է>ի	էշ>իշու էծ (այծ>իծան գէլ (գայլ) >գիլան խէծ>խիծ
ի>ը	սիրտ>սրրտի քիզ>քրզել ինչ>ընչի

²³⁷ Ա. Միմոնյան, Կենսալեզվական Իրանի Խոսվածքները, սեղմագիր, Երեւան, 1995, էջ 6:

²³⁸ Գավառի հայերենի հնչյունափոխությունը իր հերթին ենթարկվում է ոչոնք օրինաչափությունների, սակայն գոյություն ունեն բացառություններ եկն, սույն աշխատությունը չունենալով գուտ լեզվաբանական բնույթ նրանում խուսափում ենք մասնագիտական նեղ ու խորին վեճերից ու բացատրություններից եվ միայն կարեւոր մտայններ ենք ներկայացնում:

²³⁹ Ա. Միմոնյանը ե>ը հնչյունափոխությունը միայն գտնում է եղումգ>ըղումգ բառում, սակայն գոյություն ունեն ալլ բառեր:

ի>ե	ծիծալ>ծըծաղ լիրք>լերփ
ի>է ²⁴⁰	կշիւ>կըշէոք
ի>ու	գլխիքաց>գլխէքաց հիշոց (յիշոց) >ուշունց թոնիր>քոնդուր ռոնալ>օնալ ողողել>օղօղել ողորմած>օղօրմած
ո>օ	ոյ>վյեր ոյ>ու խոփ>խուփ ծոմ>ծում
ո>ուը	բողկ>բուրկ քավոր>քավուրը ուրեղ>օլորեղ աղիք>աղկոնք գլուխ>գլխոնք գլուխ>գլօխ
ու>օ	կակուղ>կակուրղ
ու>ուը	ուղարկել>ղրգել ուղղորդ, դուր>դուրըթ
ու>	բուրլ>բըրլթ
ու>ը	կատու>կատվի
ու>վ ²⁴¹	
օ>ի ²⁴²	մօրաք>միրաք

Ի հազագ. ձայնավորով սկսվող որոշ բառերի սկզբում ավելանում է հ հազագային հնչյունը, օրինակ:
երեք>հիրեք

2- Գրաբարի երկբարբառների փոփոխությունները

այ>է	այս >էս այն>էն այծ>էծ
աւ>օ	աւգուտ>օքուտ
եա>ա	երանեակ>հինէրակ>էրնակ քրիստոնեայ>քրիստոնա իրեար>իրար>իրուր
եա>ու	սեաւ>սըււլ
եա>ա>է>ըէ >ը	բարեաւ>բարօվ (ամցյալ դերբայ) կարդացեալ>կարդացիր բլղեայ>բըղթէ
եա>օ	
եա>ի	
եայ>է	

²⁴⁰ Ա. Միմոնյանը չի նկատել այս դեպքերը:

²⁴¹ Չի նկատվել Ա. Միմոնյանի մոտ:

²⁴² Չի նկատվել Ա. Միմոնյանի մոտ:

իւ>ի նսկեայ>նսկե
իւրեանք>իւրանք
իւր>իւրա
հարիւր>հարիւր (խարիւր)
իւ>յըտ իւդ>յըտ
իւ>ու արքայութիւն>արքայութիւն
իւ>յե միւռն>միւռն
ոյ>ու ոյժ>ուժ
բոյն>բուն
ուա>ա դժուար>դժար

3- Քաղաքային փոփոխությունները

ա- Չայնեղ պաթականներ (ք, գ, դ)
քամբակ>քամբակ
բիք>պիպ(իկ)
Հակովք>հակով
ճգնավոր>ճգնավոր
գոգ>գուօք մարագ>մարագ
խեղդել>խեխտել
բուրդ>բուրք

բ- Խուլ պաթականներ (պ, կ, տ)
սլակ>փլսակ
կարպետ>կարպիտ
ամպ>ամբ
գուլպա>գուլբա
ականջ>անգան
մապաստակ>լուպստակ>ալապստակ
շապիկ>շաբիք
դատարկ>դատարկ
փտել>փրքել

գ- Շնչել խուլ պաթականներ (փ, ք, ք)

խոսք>խոսկ
մեղք>մեխկ
գաղթել>գախտել

դ- Չայնեղ շփականներ (գ, ժ, դ, վ)

զգվել>վիսալ
ուղարկել>ղրկել>ղրգել
ուղղորդ>ղուօք
ճեղք>ճիէխք
մեղք>միէխք

ե- Չայնեղ պաթաշփականներ (ձ, ջ)

առաջին>առաջի
կամուրջ>կարմունջ
աղջիկ>ախչիկ
արծակ>արցակ
փորձ>փուօք
ձգտալ>զըկլտալ
առաջնակ>առչնեկ

քաղաք>քաղաք

գ- Խուլ պաթաշփականներ (ծ, ճ)

անեծք>անեծկ
ճանճ>ճանջ
ճնդուկ>ճնջուկ

է- Խուլ շփականներ (խ, հ, շ, ս)

խաղող>խաղուօղ
խորխախ>խօրիգ
աշխարհ>աշխարք
քաշխել>քախշել
խնձրահուտ>խընձըմահուօտ
խող>խուօղ
դուրս>դուս
հիսուն>հիծուն
* Զյամարայի խոսվածքում հ>Ֆ փոփոխությունը չկա:

ը- Շնչել խուլ պաթաշփականներ (չ, ց)

աչք>աշկ
թռչել>թըռնել

թ- Չայնեղներ (լ, մ, յ, ն, ո, ր)

լինել>լլնել
յիշոց>ուշունց
յաջողում>աշողում (քարայողում)
նապաստակ>ալապստորակ
քանալի>քալնիք
առաջին>առաչի
վախրավառ>վարթիվոր
րուպե>ռուպե
մարմար>մառմառ
ոսկոր>օսկոռ
ջրաղաց>ջաղաց
ճանապարհ>ճամփա
նեքս>նի
օրինել>օշնել
երբ>յըտփ
բեր>բի
կեր>կյի

4- Հնչյունների հավելում

ամաչել>ամչլնալ
ալեռք>հալիվուօր
արքեմա>հարփել
ընկեր>ըընգեր
կամուրջ>կարմունջ
կանաչ>կանանչ
ճանաչ>ճանանչ
ավելորդ>էվլունօք
աշուն>աշունք
մանր>մանր

5- Հնչյունների անկում

ներս>նի
 հորաքույր>հորքուր (հօքուր)
 բաղաբջ>բաղամ
 բարադողոշ>բարթոթոշ
 թռչել>թրոմել
 վաթսուն>վածուն

6- Դրափոխություն

- Բառի մեջ մի հնչյուն փոխում է իր տեղը, ըստ որում բառի մյուս հնչյունները մնում են նույն դիրքում. ականջ>անգան, դատարկ>դարտակ
 - Բառի մեջ կից բաղաձայնները փոխում են իրենց տեղերը. արմուկն>արմունգ, բաշխել>բախշել
 - Այլ հնչյուններով իրարից բաժանված երկու բաղաձայնները փոխում են իրենց տեղերը. բանալի>բալնիք, փետուր>թեթուլ

8-2- Ձեմաբանություն

1- Գոյական. - գոյականի թիվը.
 հոգնակի թիվը կազմվում է եր, ներ, ան, ք, անք, ենք, (տ)իք, անիք, թիք, կիթ, ունգ մասնիկները
 գիրք>գրքեր
 արքաք>արքաքներ
 էշ>իշան
 խնամի>խնամիք
 եղբայր>ախպերանք
 Բարթեղի>Բարթեղենք
 աղջիկ>աղջտիք
 աման>ամանիք
 կին>կնանիք
 կին>կնթիք
 որդ>օրթունգ

2- Հոլովում²⁴³

Քյամարայի խոսվածքում հայցական հոլովը ձեմաբանորեն չի տարբերվում ուղղականից եվ տրականից ինչպես եվ սեռականի տրականից: Ի տարբերություն մյուս ճյուղի մնացած բոլոր բայթառների, չկա մեկ վերջավորվող ներգոյական հոլովը, նախադասության մեջ այդ իմաստով գործածվում է ուղղական հոլովը, ինչպես՝ Քյամարայի անենը հայեր ին ասլում»:

- Ուղղականը բառի ուղիղ ձեմն է, օրինակ՝ մե մարդ էր էկի գեղը:
 - Տրական հոլովը կազմվում է *ի, ու, վա* թերմներով՝ հացի, ափու (հորեղոր), ժամանակվա:
 - Բացառական հոլովը կազմվում է *ից, ուց, է* վերջավորություններով՝ հացից, գարուց, գառնանէ:

²⁴³ Մասամբ օգտագործել ենք մահ Ա.Սիմոնյանի հիշված Աշխատությունը:

- Գործիական հոլովը կազմվում է *օվ* վերջավորությամբ՝ ցորենով, իշով:

Հոլովում
 - Առաջին հոլովում

Ուղղ. Տր. Բաց. Գործ.	եզակի քար քարի քարից քարով	հոգնակի քարեր քարերի քարերից քարերով
-------------------------------	--	--

- Երկրորդ հոլովում

Ուղղ. Տր. Բաց. Գործ.	եզակի քամի քամու քամուց քամով	հոգնակի քամիներ քամիների քամիներից քամիներով
-------------------------------	---	--

- Երրորդ հոլովում

Ուղղ. Տր. Բաց. Գործ.	եզակի ամառ ամռվա ամռվանից ամռվանով	հոգնակի ամառներ ամառների ամառներից ամառներով
-------------------------------	--	--

- Չորրորդ հոլովում

Ուղղ. Տր. Բաց. Գործ.	դուռ դռան դռնից դռնով	շուն շան շունից շունով
-------------------------------	--------------------------------	---------------------------------

- Հինգերորդ հոլովում

Ուղղ. Տր. Բաց. Գործ.	ախպեր ախպօր ախպօրից ախպօրով	քուր քրվօր քրվօրից քրվօրով
-------------------------------	--------------------------------------	-------------------------------------

- Վեցերորդ հոլովում

Ուղղ. Տր. Բաց. Գործ.	տիք տիքուօշ տիքուօշից տիքուօշով
-------------------------------	--

- Յօթերորդ հոլովում

Ուղղ. Տր. Բաց. Գործ.	խնամուօնք խնամուօնց խնամուօնցից խնամուօնցով
-------------------------------	--

- Ութերորդ հոլովում

Ուղղ.	<u>եզակի</u>	<u>հոգնակի</u>
Տր.	կնիկ	կոնքիք
Բաց.	կրնգա(ն)	կրնքիքի
Գործ.	կրնգանից	կրնքիքից
	կրնգանով	կրնքիքով

3- Ուրույալ եվ անորոշ հոդեր

Ուրույալ հոդերն են -ը եւ -ն: Անորոշ հոդն է մե. օրինակ՝ մե օր մե հաց:

4- Ածական անուն

դրկան աստիճան - էս մառքը լավ մառքա
բաղադրական աստիճան - էս մառքը էն մեկից էլ լավըն ա
գերադրական աստիճան - էս մառքը դրսից (ամենից) էլ լավըն ա

5- Թվական անուն

Քանակական թվականները՝
մե(կ), երկու(ս), երեք, չորս, հինգ, վեց, յոթ (օխտը), ութ, ինը, տասը, քսան, յոթսուն, քառսուն, հիծծուն, վաժծուն, յոթքամածուն, ուժծուն, ընըծուն, հարիւր, հրգար, տասըմեկ, տասներկու, քսանըմեկ, եվ այլն:

Դասական թվականներ՝ ավվալ, դոյյում, սէյյում, չուրսում, հավլլի խետր (առաջին անգամ), վրա չուրսին (չորրորդ անգամ) եվ այլն:

Կոտորակային թվականներ՝

տասսէն մեկը (1/10), հարիւրէն չուրսը (4/100):

Բաշխական թվականները՝ մեկ-մեկ, հինգ-հինգ.

6- Դերանուն

- Անձնական դերանուններ. յրէս, դ'ու, էն, մենք, դ'ուք, ընդունք, (ինքը, իրանք) հոլովումը

ուղղ. յրէս	դ'ու	էն	մենք(միենք)	դ'ուք	ընդունք
սեռ. իմ	քուօն	ընդուր	մեր	ձեր(ձիեր)	ընդուօնք
տրակ.	ինձ(ի)	քեզ(քիեզ)	ընդուր	մեզ ձեզ	ընդուօնք
հայց.	ինձ(ի)	քեզ	ընդուր	մեզ ձեզ	ընդուօնք
բաց.	ինձընից	քեզնից	ընդուց	մեզնից-ձեզնից	ընդուօնցից
գործ.	ինձընով	քեզնով	ընդով	մեզնով ձեզնով	ընդուօնցով

- Ցուցական դերանուններ

ուղղ. էս	էն	
սեռ. ըստուր	ըստուր	
տրակ.	ըստուր	ընդուր
հայց.	ըստուր	ընդուր
բաց. ըստուց	ըստուց	ընդուց
գործ.	ըստով	ընդով

այլք
այսպիսի - սենց, ըստենց
այդպիսի - տենց, ըստենց
այնպիսի - մենց, ընենց

այսքան - էսչանք
այդքան - էտչանք
այնքան - էնչանք

7- Բայ

Գավառային խոսվածքներում եւ բայը խօսքի մեջ հանդես է գալիս ձեւով՝ անդեմ եվ դիմավոր: Բայի անդեմ ձեւը կոչվում է դերբայ, իսկ դիմավոր ձեւը՝ եղանակային:

7-1- Անորոշ դերբայ

Քյամարայի խոսվածքը ունի հետեւյալ դերբայներ՝ անորոշ, անկատար, վաղակատար, հարակատար, ենթակայական, ժխտման, շարունակական, այլ ձեւ:

- Անորոշ դերբայ (-ել, -ալ, -նել, ընալ, նալ, էնալ) աճել, գ'օվալ, ծրծրալ, հասնել, փախնել, լուսնալ, քանազընալ, գլիդէնալ:

- Անկատար դերբայ. (-ում) չկա -իս վերջավորությունը.

ուտել - ուտում

գալ - գ'ալում

լալ - լալում

տալ - տալում

- Վաղակատար դերբայ. (-իր, -ացիր)

թխել - թխիր

ուտել - կերիր

աղալ - աղացիր

մնալ - մնացիր

օր. թխիր ա

օր. կերիր ա

օր. աղացիր ա

օր. մնացիր ա

- Հարակատար դերբայ. (-ած, -ացած)

քնել - քնած

աղալ - աղացած

մնալ - մնացած

- Ենթակայական դերբայ. (-օղ, -ացօղ)

ուտել - ուտօղ

խաղալ - խաղացօղ

մնալ - մնացօղ

- Ժխտման դերբայ. (-ա, -ի)

գրել - գրի

կալալ - կարթա

օր. չեն գրի

օր. չեն կարթա

- Շարունակական դերբայ. (-էն)

խաղալ - խաղալէն

ուտել - ուտելէն

- Այլ ձեւ (-ուց)

կալալ - կարթալուց

գնալ - էթալուց

օր. էթալուց վեր ընգա

7-2- Եղանակային ձեւեր կամ խոնարհում

7-2-1- Սահմանական եղանակ

Ներկա ժամանակ
գրլում եմ

Անցյալ անկատար ժ.
գրլում էի

գրքում ես
գրքում ա
գրքում էնք
գրքում էք
գրքում են

գրքում իր
գրքում էր
գրքում ինք
գրքում իք
գրքում ին

Վաղակատար ժ.

գրքիր եմ
գրքիր ես
գրքիր ա
գրքիր էնք
գրքիր էք
գրքիր են

Անցյալ վաղակատար ժ.

գրքիր ի
գրքիր իր
գրքիր էր
գրքիր իք
գրքիր ին

Հարակատար ժ.

նրստած եմ
նրստած ես
նրստած ա
նրստած էնք
նրստած էք
նրստած են

Անցյալի հարակատար ժ.

նրստած ի
նրստած իր
նրստած էր
նրստած ինք
նրստած իք
նրստած ին

Անցյալ կատարյալ ժ.

կարթացի (կարթցա)
կարթացիւ (կարթցար)
կարթաց (կարթաց)
կարթացիներ (կարթցանք)
կարթացիք (կարթցաք)
կարթացին (կարթցան)

7-2-2- Ընթական եղանակ

Ապառնի ժամանակ

ուտեմ
ուտես
ուտա
ուտենք
ուտէք
ուտեն

Անցյալ ապառնի ժ.

ուտի (մ)
ուտիր
ուտէր
ուտինք
ուտիք
ուտին

7-2-3- Պայմանական եղանակ

Ապառնի ժամանակ (գր, կր, քր)

գր գամ / կասեմ / կր քաղեմ
գր գաս / կասես / կր քաղես
գր գա / կասա / կր քաղա
գր գանք / կասենք / կր քաղենք
գր գաք / կասէք / կր քաղէք
գր գան / կասեն / կր քաղեն

Անցյալի ապառնի ժամանակ

գր գի / կասի / քր քաղի
գր գիր / կասիր / քր քաղիր
գր գէր / կասէր / քր քաղէր
գր գինք / կասինք / քր քաղինք
գր գիք / կասիք / քր քաղիք
գր գին / կասին / քր քաղին

7-2-4- Հարադրական եղանակ

Ապառնի ժամանակ
(այիտի, պրտի, պետտքա)

պրտի գըրեմ
պրտի գըրես
պրտի գըրա
պրտի գըրենք
պրտի գըրէք
պրտի գըրեն

Անցյալի ապառնի ժ.

պրտի գըրի
պրտի գըրիր
պրտի գըրէր
պրտի գըրինք
պրտի գըրիք
պրտի գըրին

7-2-5- Հրամայական եղանակ

գըրի
գըրի

7-2-6- Ալգեական հրամայական եղանակ

մի գըրի
միք գըրի

7-2-7- Ժխտական խոնարհում

Օժանդակ քայի ժխտականը կազմվում է չ մասնիկով: Օժանդակ քայի ժխտական ձևերն են՝ չեմ(չիեմ), չեմ(չիեմ), չի, չենք (չիենք), չէք, չեն(չիեն) (ներկա)

չի, չիր, չէր, չինք, չիք, չին (անցյալ)

7-2-8- Պատճառական բայեր (ոգոնել, ագոնել, օրոնել)

բարըկել - բարկոցնել
գօռալ - գօռացրնել
բանցրնել - բանցրեցրնել
հաքնել - հաքցրնել

7-2-9- Անկանոն բայեր

Անկանոն կոչվող անկանոնությունը հիմնականում հանդես է գալիս վաղակատար հարակատար, ենթայական դերբայներում եվ հրամայական եղանակի ձևվերում: Ստորելվ նշում ենք այդ բայերը.

Ասել, առնել, ամել, լալ, լլնել, կլեմալ, կարենալ, տալ, տանել, ուտել, գալ, էթալ:

7-2-10- Կրավորական բայեր (-վ-)

խէխտել - խէխտվել
կարթալ - կարթըցվել

7-2-11- Այլ կարգի ժամանակային ձևեր

- էթալուց եմ էլի, էթալուցի էլի, էթալուց կլոնիմ
- գնացած ա լլնում, գնացած էր լլնում, գնացած կլնեն

Միանգ կարելի է համեմատել անգլերենի Present/Past/Future Perfect continuous tense-ի հետ:

- շաղկապակալ եղանակ, որը օրինակվել է պարսկերենից
- ունեմ էքում եմ
- ունի էքում ի

Միանգ կարելի է համեմատել նաեւ անգլերենի Present/Past continuous tense-ի հետ:

I am going / دارم می روم

I was going / داشتم می رفتم

7-2-12- Մակբայներ

Որպես մակբայներ օգտագործվում են հետեւյալ բառերը.

պարզ - էլ, դեռ, յոթի, էրեք, յոթու, դեռ, դեռ, լսկի եվ այլն.

անձանցավոր - մարթավարի, զրծավարի, տրկյէհան, տրկյէխան, էրեսահան, մորուց, ուժով.

բայր - փրշուր-փրշուր, մէկ-մէկ, շատ-շատ, յոթ-յոթ, տեղը-տեղին, ընչի հըմար, չլմի որ, ըստօվդէն, լուսադէմին, մէկէլ օրը եվ այլն.

7-2-13- Կապեր

Կապերը եվ կապական բառերը օգտագործվում են գործիական, ուղղական, սեռական, տրական, հայցական եվ բացառական հոլովների հետ. Զյամարայի խոսվածքում առկա են հետեւյալ կապերը՝ առէչ (առաջ), առանց, հըմար կամ խըմար (համար), ընչուր (մինչեւ), մէչ (մեջ), մուօտ (մուտ), յըտ կամ խնտ (հետ), վըրա, տակ: Մի օրինակ հոլովում՝

ուղղ.	առէչ	մուօտ
բացառ.	առէչից	մուօտից
գործ.	առէչով	մուօտով
սեռ.	առչի	մուօտի

7-2-14- Շարկապներ²⁴⁴

Որպես համադասական շարկապներ օգտագործվում են.

Ազյար (եթե), ամմա/համա (քայց), բա (իսկ, ապա), էլ ընչուր (մինչեւ որ), յա (կամ), նա (ուչ), նա...նա (ոչ...ոչ), համ...համ (եվ...եվ), համու (եվ), վուօր (որ, ու, ընդոր հըմար վուօր (ոլտփետեվ):

7-2-15- Չայնարկություններ

Օգտագործվում են հետեւյալ բառերը.

Օխէ՛ j, ախէ՛ j, բա՛ h (բա ը), դէ՛, է՛, խըը՛, հաա՛, վա՛ա, վաի, փիյաը, օխէ՛ 2, օֆէ՛ j, ախէ՛ 2, օֆֆ և այլն.

8-3-Բառագիտություն

1-Բառային կազմ

Հայերեն ամեն մի բարբառ իր մեջ ունի երեք հիմնական շերտ՝

- 1) Գրաբարից ավանդված բառերի
- 2) Բարբառային բառերի
- 3) Բարբառի կատարած փոփոխությունների:

Զննենք այդ շերտերից յուրաքանչյուրն առանձին-առանձին:

Ա- Գրաբարից ավանդված բառեր

Այստեղ կրնանք «հնչյունաբանություն» բաժնում ներկայացված բառազանձը իմաստաբանական առումով:

Գրաբարից ավանդված բառերի մի մասը բառիմաստի փոփոխություն չի կեր. այդ բառերն են՝ աղ, էրագ (երագ), ախալէր (եղբայր), մէր (մայր), խէր (հայր), անգաւ (ականգ) եվ այլն:

Մակայն խոսվածքում առկա են զգալի թվով բառեր, որոնք իմաստափոխվել են: Դրանցից մի քանիսն են.

ա) Հաճախ մի առարկայի ամուսն անցնում է մի այլ առարկայի՝ այդ երկու առարկաների մեջ եղած որևէ հատկանիշի նմանության հիման վրա: Այսպիսի փոխանցման հետեւանքով բառը ենթարկվում է իմաստափոխության, որովհետեւ հատկացվում է մի այլ հասկացություն, այսպես օրինակ այս կարգի իմաստափոխության է ենթարկվել հետեւյալ բառը.

Աձել > աձել. - գրաբարում արտահայտվել է «բերել», «տեղափոխել», «շարժել», «քանցեցնել», «ղլլել», իսկ բարբառում նշանակում է «լցնել», «նվազել»:

բ) Մի շարք բառեր ենթարկվել են իմաստափոխության՝ փոխաբերական առումով գործածելու շնորհիվ, այսպես՝ ծամ > ծամ. - գրաբ. նշանակում է «շինծու մագ», «մագերի գարդ», բարբառում նշանակում է «կնոջ մագ»:

գ) Այս կամ այն առարկայի ամուսն փոխանցվել է նրա հետ կապված մի այլ առարկայի. օրինակ՝ ճաշ > ճաշ. - գրաբ. նշանակում է «ճաշ» բարբառում անվանում է մի կերակրատեսակ:

Գրաբարից ավանդված բառերի թվում կան մի շարք այնպիսի բառեր ու արմատներ, որոնք այդի գրական լեզվում չեն պահպանվել կամ քիչ գործածական են, իսկ բարբառում լայնորեն օգտագործվում էին. օրինակ՝ անթ > հունթ (= թեվատակ), դեհ > դեխ (= կողմ), ուղղորդ > դորթ (= ճիշտ) եվ այլն:

Բ - Բարբառային բառեր

Բարբառի բառապաշարի մեջ էական տեղ են զբաղում նաեւ բարբառային բառերը: Դրանք այն բառերն են, որոնք գրաբարից ավանդված չեն եվ հայտնի որևէ լեզվից չեն փոխառնվել, այլ հանդիպում են միայն բարբառներում: Այսպես օրինակ՝ դանքին տալ (= նիւնել), ըննիլ (= թեթևալիկ մարդ), բօլ ունել (= պառկել), իսկիլ (= նետել), իսպալի (= մարտի), կուօկ (= ամբողջ), համու. հարյւս (= ասես, կարծես), ալօռօճիկ (= բշտիկ), ջաթ (= փախս), վորշմա (= բափթըփված), տիտիկ անել (= հարբել), զանգ (= եղունգի կամ մաշկի վրա առաջացած ցավոտ ելուն), բուրբուրել (= նետել), եվ այլն:

²⁴⁴ Օգտագործել ենք նաև Ա.Սիմոնյանի աշխատությունը:

Գ - Փոխառյալ բառեր

Բարբառը բավական թվով փոխառություններ ունի պարսկերենից, արաբերենից, թուրքերենից, անգլերենից, ռուսերենից, այսպես.

- Պարսկերեն. - ալլով (= բոց), բարեբար (= հավասար), աքիշակ (= հիվանդություն), ալ (= դեպ), գլիլա (= խաղողի հատիկ), բալաքա (= անկայուն), ռուլա (= որդի), թուք (= աղբակույտ) եվ այլն:

- Արաբերեն. - բազի (= որոշ), զահմաք (= նեղություն), զարար (= վնաս), իլլաբեմ (= հատկապես), խըրջել (= ծախսել), հազիր (= ներկա, պատրաստ), հալա (= հիմա), դալիմ (= պինդ), դովաք (= ուժ), մուրաճա (= վեճ), յա (= կամ), շառք (= պայման), Ֆըռսաք (= առիթ), եվ այլն:

- Թուրքերեն. - աչել (հարմար), բուլամաչ (խառնաշփոթություն), բուլագ (կոկորդ), բուլ (լի, շատ), գուլ (լիճ, լճակ), գյորա (համեմատ), դուրլմիշ (ջարդ), դաշլա (կալ), յաման (ցավ), յավլուխ (զլխաշուր), փիս (վատ), օլու (ծուլ) եվ այլն:

- Անգլերեն. - պենսիլ (մատիտ pencil), գեյ (խեղճ, game), գաս (ենթադրենք guess), փոզ (կեծվածք, pose), փիլա (թարախ, pyorrhea), սընդլա (ոտնաման, sandal), շուրք (շեղվել, short), թիայթ (ցույց, theater):

- Ռուսերեն. - սըմավար (ինքնաւեռ, самовар), բալոն (օդամալ, баллон), բորուլ (շիշ, бутыл):

Ածանցում

Քյամարայի խոսվածքում գործածվող անծանցները համընկնում են ժամանակակից հայերենի ածանցներին, որոշ տարբերություններով.

1- Նախաածանցներ

- ան. - անտեր
- չ. - չըտես

2- Վերջածանցներ

- ան. - կարկրտան, կրծան, նըվան
- անի. - լիզվանի, ճըղլանի
- անք, ենք, ուօնք. - հերանք, Բարթել(ու)նք, խնամուօնք
- անուօց. - զըծանուօց
- ական. - պապական
- կան. - մըրսկան
- ացու. - փեսացու
- ուօց. - մատնուօց
- ավուօր. - զլխավուօր
- է. - փետ, կավե
- լիկ. - կառճըլիկ
- իկ. - պիպիկ
- լուկ. - փախլուկ
- ուկ. - սուտ մեռուկ
- լուտ. - վախկըլուտ
- օվի. - տընօվի
- լի. - մօլիշ
- անց. - սըրտանց
- հան. - տըլկեհան
- ցի. - թէլրանցի
- ութուն. - չալութուն
- ուց. - մօրուց
- ուօց. - քըշքըշուօց
- ուօտ. - ալլըլուօտ

- ուօշ. - քըթթուօշ
- վարի. - ախպերավարի
- ակ. - տաշտակ
- աուն. - ջրաուն
- ուօոթ. - փոխնուօոթ

Անձնանուն

Քյամարա գավառում անձնանունների մեծ մասը կրճական ծագում ունի, ինչպես Հովհաննես (Օվանես) Բարթել, Պետրուօս, Ռաֆի (Ռաբեկուօս), Սիմուօն, Դավիթ եվ այլն:

Մի շարք պարսկական, արաբական եվ թուրքական անուններ վաղուց մուտք են գործել հայ գավառական իրականության մեջ, այսպես օրինակ.

Պարսկ. - Շափերի, Անուշավան, Գյուլանդամ, Բասիգուլ ²⁴⁵

, Դաստագյուլ, Միրտատ, Ագատ, Դարչին, Շիրին, Մորվարի(դ), եվ այլն:

Արաբ. - Ազիզ, Ամիր, Ասլան, Թուրքի, Սուլթան, եվ այլն:

Թուրք. - Մոնղոլական - Խաթուն, ²⁴⁶ Խանում եվ այլն:

Պարսկ.-արաբական - Շահմուրադ, Շասանամ, Շանագար եվ այլն:

Պարսկ.-թուրքական - Շավերդի եվ այլն:

Ինչպես Ա.Սիմոնյանը իրավագիտորեն նկատել է իր աշխատության մեջ, երբ Իրանում օրենք ընդունվեց անձնագրերի կապակցությամբ, պարսիկ պատասխանատուները ծանոթ չլինելով հայկական անձնանուններին, աղավաղումներով են արձանագրել դրանց: Այդ ձեվափոխություններին կայաղ ենք հետեւյալ պատկերը տալ.

1- Նույն ծագումով անձնանունի պարսկական ²⁴⁷ ձեվը.

Աբրահամ > ebrahim
Ալօփ > yaghub
Դավիթ > davud
Իսմայիլ > esmail
Հովսեփ > yusof
Սողոմոն > soleyman

2- Նմանահունչ պարսկական անվամբ ²⁴⁸ փոփոխված ձեվ.

Աթամ > hatum
Ապկար > akbar
Թումաս > tahmasb
Սամսոն > samsam

3- Հայկական անվան աղավաղված ձեվ.

²⁴⁵ Ա.Հովասափյանը սխալմամբ այս անձնանունները վերագրել է

թուրքերենի, միչդեռ պարսկերեն են:

Նշվ. աշխ. էջ 83:

²⁴⁶ Ա.Սիմոնյանը սխալմամբ այս անձնանունները վերագրել է արաբ.-

պարսկականի, որը ճիշտ չէ:

²⁴⁷ Ա.Սիմոնյան, հիշվ. աշխ. էջ 31:

²⁴⁸ Ա.Սիմոնյանը սխալմամբ այս անձնանունները վերագրել է արաբ.-

պարսկականի, որը ճիշտ չէ:

Հարություն > aratur
Արարատ > arad
Աբրահամյան > ebrahimi
Թովմասյան > tahmasbi
Լեվոն > livan

4- Հայկական անվան քարգմանածելը պարսկերենով.

Աստվածատուր > khodadad

Վրադուխի > golghanum

5- Մեղմության ենթարկված ձեվեր.

Ղուկասյան > Գուգազյան

Կիրակուս > geragus

Նկատելով այդ դժվարությունները, հայերը սկսեցին ավելի հեշտ անուններ ընտրել. ինչպես օրինակ՝ Վանիկ, Էդիկ, Հայկ, Արամ, Արաքս, Արմեն, Հայկանուշ, Մասիս, Նվարթ, Շուշան, Վաղենակ, Վաղարշակ եվ այլն:

9- Գրականություն, բանահյուսություն

Քյամարա զավառում, ինպես Արաքի մյուս զավառներում, չի ստեղծվել գրականություն, եթե գոյություն էլ ունեցած լինի, չրանք գրի չեն առնվել: Այսպիսով պարտավոր ենք դիմելու ժողովրդական առածներին, հանելուկներին, դարձվածքներին, զավառական բառապաշարին եվ այլն:

Առաջին քաժնում ներկայացվում են գրաբառից Քյամարայի խոսվածքի բառացանկ, ապա Քյամարայի խոսվածքի զավառական բառարանը:

Երկրորդ քաժնում տրվում են զավառում գործածվող դարձվածքների ցանկը, ապա առածները: Այնուհետև օրհնություններն ու անեքքները:

10- Բառացանկ

Գրաբարից Զյամարյաի բարբար

ագգան - արքան
ագատ - ագատ, ագադ
ագատել - ագատել
ագատություն - ագատություն
ագգ - ագգ, ասկ
ագգական - ասկական, ագգական
ագնիլ - ագնիլ
աքար - աքար
աթոռ - աթոռ
ալեվոր - հալիվոր
ալեվորություն - հալիվորություն
ալիլ - ալիլ
ախոռ - ախոռ
ամել - ամել
ամելի - առնիլի
ականատ - ականատ(ք)
ականջ է անգան
ակոս - ակոս
ահ - ախ
ադ - ադ
ադալ - ադալ
ադանդել - ադանդել
ադանի - ադանիլ
ադք - ախսի
ադքիլ - ախսիլ
ադքիլ - ախսիլ
ամաչել - ամաչել
ամաչկոտ - ամաչկոտ
ամալ - ամալ
ամեն - ամեն
ամսական - ամսական
այլ - էլ
այլքան - էքան
այծ - էծ
այն - էն
այնքան - էնքան
այս - էս
այսօր - էսօր
այրել - էրել
այրիլ - օրիվություն
անալի - անալի
անդունդ - անդունդ
անել - անել
անեծք - անեծք
անելու - անելու, զոմասթա (այսկ.)
անք - հունք

անմեղ - անմեղ
անուն - անուն
անասակ - անասակ
աշակերտ - աշակերտ
աշխարհ - աշխարհ
աշուն - աշունք
աչք - աշկ
ապրուստ - ապրուստ
աջ - աշ
աջողություն - աջողություն
առաջ - առաջ
առաջին - առաջին
առողջ - առողջ
առաջնակ - առաջնակ
առու - առու
աստղ - ասիս
աստուածածին - աստվածածին
արբենալ - հարսիլ
արդար - արթար
արին - արուն
արինաթաթախ - արնեթաթախ
արծաթ - արծաթ
արծան - արցան
արճիճ - առճիճ
արմուկն - անրմունգ
արջ - արչ
արտ - առտ
արտասուք - առցունք
աւել - ավիլ
աւելանալ - էվելնալ
աւելի - էվելի
աւելոյ - էվելոյ
բաժանել - բաժնել
բաժին(ք) - բաժինք
բահ - բախ
բաղանիք - բաղնիս
բաղարջ - բաղան
բանալի - բանիլի
բանջար - բանջար
բաշխել - բաշխել
բառնալ - բռնել
բարեալ - բարով
բարեկենդան - բարիկենթան
բարձ - բարց
բարձր - բանցր
բարձրանալ - անցրնալ
բժիշկ - բժիշք
բիթ - պիպիկ
բլիթ - բլիթ
բողկ - բուխկ
բոյն - բուն
բուրլ - բուրթ

բուրբառ - բուրվառ
 գայլ - գէլ
 գանգատ - գանգաղ
 գանգատել - գանգատվել
 գալուն - գաղունք
 գերան - գէրան
 գերեզման - գլէրեզման
 գերեզմանատուն - գլէրեզմանատուն
 գզել - գլզել
 գինդ - գլնդ
 գինի - գլնի
 գիշեր - քըշեր
 գիտել - գլտել
 գիր - գիր
 գիրկ - խըտիտ
 գիւլ - գէլ
 գլխիքաց - գլխէքաց
 գլուխ - գլօխ
 գոգ - գուլք
 գող - գ'ուօլ
 գողանալ - գ'ուօղնալ
 գողութիւն - գ'ուօղութիւն
 գոմ - գուլմ
 գոմեա - գոմա
 գոռալ - գօռալ
 գոռառալ - գառառալ
 գործ - գուլքծ
 գորտ - գուլքտ
 գոց - գուլց
 գութ - գ'ուփ
 գուլալ - գուլբա
 գունդ - գ'ունդ
 գտանել - գըդնել
 գրել - գըրել
 գրկել - խըտըտել
 գօտի - գօտիք
 դադարել - դաքրել
 դառնանալ - դառնընալ
 դատ - դաղ
 դադաստան - դադաստան
 դատարկ - դառտակ
 դատել - դատել
 դեռ (կողմ) - դէխ
 դեղին - դլեղին
 դեղնացաւ - դ'լեղնըցալ
 դեղնել - դ'լեղնել
 դեղնութիւն - դ'լեղնութիւն
 դեղնուց - դլեղլոււն
 դեռ - դիվ
 դեպ(ի) - դէխ
 դէպի եղ - դէքի խէտ
 դժոխք - դըժուօխկ

դիւր գալ - դութ գալ
 դողդաղալ - դողդաղալ
 դուրս - դուս
 եկեղեցի - յեգեղեցի
 եղբայր - ախայէր
 եղբայրութիւն - ախայէրութիւն
 եղունգն - յէղունգ, լալունգ
 երագ - էրագ
 երանեակ - էրնէկ
 երբ - յէփ
 երբոր - յէփօր
 երգ - յէրք
 երգել - յէրքել
 երդումն - օրթում
 երեկ - էրէգ
 երեկոյ - իրիգուն
 երես - էրէս
 երեսուն - եռեսուն
 երեւել - էրեւալ
 երեք - հիրեք
 երկաթ - էրկաթ
 երկայն - էրգլան
 երկինք - յերգինք
 երկիր - յէրգիր
 երկու - էրկու(ս)
 եփ - էփ
 եփիլ - էփել
 եօքն(եալքն) - օխտ(ն)
 զանգ - զանգ
 զատիկ - զատիկ, զատիկ
 զարդարանք - զառքըրանք
 զարդարել - զառքըրել
 զմոռս - զըմոռս
 զուր - իսուր(ի)
 զոքանչ - զօնքաչ
 զոյց - զրուց
 զօր - զօռ
 էգ - էք
 էշ - էշ
 ընկեր - հընգէր
 ընկոյզ - ալօպօք
 քազ - քազ, քաք
 քազակոր - քաքվուօր
 քաթ - քաթ
 քաթախել - քաթախել
 քամք - քամք
 քամրել - քամքել
 քան - քան
 քանաք - քանակ
 քանգ - քանգ
 քանով - քանով
 քառ - քառ

քեթեւանալ - քեթեւնալ
 քել - քյէլ
 քել - քյէկ
 քեփ - քյէփ
 քեփոտ - քյէփուօտ
